



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10110

297
4-96

1906

03 NOV 2009

Գրքի վաճառումից հայացած ամբողջ գումարը յանկարգում է
Քաղաքի Թիֆլիս գաղթած հայ զինագրիս տեսչերների
ու. առակերտիների օգտին.

Ա. ԿՐԻՄՍԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ

ՈՒ

ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

—*o*—

Իսլամի անցեալը, մահմեդական ազգերի ժամանակակից վիճակը,
նրանց մտաւոր ընդունակութիւններն եւ նրանց վերաբերմունքը
դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը:

—o—
ԹԱՐԴՄԱՆԵՑ

ԲԱՐԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

—o—
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐՐՈՑ ԷՏԻԱՆՆԻ

1906

9297
4-96

Մարտի 4. Մոսկուէն

Հասցէ Լուսինայի

Յորդանոս Կարգապետի
Մարտի

ՄԱՅՍԵՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ

30/Յ/1910

ՈՒ

Խ. Լ. Մարտի

ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

4 MAY 2013

10770

Գրքի վաճառումից հայացած ամբողջ գումարը յատկացում է
Բազուից Թիֆլիս գաղթած հայ գիմնազիստ առակներենի
ու առակներուիկների օգտին.

297

4-96

Ա. ԿՐԻՄՍԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ

ՈՒ

ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Իսլամի անցեալը, մահմեդական ազդերի ժամանակակից վիճակը,
նրանց մտաւոր ընդունակութիւններն եւ նրանց վերաբերմունքը
դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը.

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԲԱՐԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՀԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆԻ

1906



1494
46

Дозволено Цензурою 20 Сентября 1905 г. Тифлисъ.



1905 թուի հայ-թուրքական ընդհա-
րումների ժամանակ իւր հայրենի
պատմական Ղարաբաղում, Բազում,
Երևանի նահանգում և Գանձակում
ընկած հայ քաջերի յիշատակին

ՎՇՏԱՀԱՐ ՍՐՏՈՎ

Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Մ Է

ԹԱՐԳՍԱՆԻՉԸ

Առ Ազնոսաշոք

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ԱՇԲԱՓԵԱՆՑ

Եկատերինադար Բազմում.

Հայ ժողովրդի մէջ եղել են եւ կան մեկե-
նասներ, թէ եւ սակաւաթիւ, որոնք իրենց օժան-
դակութեամբ նպաստել են հայոց զրականութեան
եւ ուսման զարգացման, քայց աւելի քաղցր եւ
ուրախալի է, երբ հայ կինն է մեկենաս դառնում
եւ նպաստում մատաղ սերնդի կրթութեան, մեր
աղքատիկ զրականութեան եւ քաջալերում հայ
հեղինակներին ու թարգմանիչներին: Դուք, յար-
գելի Տիկին, չկարողացաք անտարբեր մնալ, երբ
լրագրերն գուժեցին՝ որ Բագուի հայ-թուրքական
արինահեղ ընդհարումներից յետոյ զիմնազիստ
հայ աշակերտներն ու աշակերտուհիները ստիպուած
են թողնել Բագուն եւ իրենց աղքատ ծնողների
հետ գաղթել Թիֆլիս եւ այլ քաղաքներ, ուստի
շտապեցիք Ձեր լուսման ուղարկել «Արշալոյս» օրա-
թերթի խմբագրութեան, խնդրելով գործադրել
նրանց օգտին: Չքաւականալով այդ նպաստով

մեկննաս հանդիսացաք սոյն զրքի հրատարակութեան եւ ցանկութիւն յայտնեցիք զրքիս վաճառումից զոյացած ամբողջ գումարը յատկացնել «Արշալոյսի» միջոցով նոյնպէս յիշեալ աշակերտների ու աշակերտունիների օգտին: Մենք էլ մեր կողմից մեծ ուրախութեամբ յանձն առանք կատարել Ձեր ցանկութիւնը: Թող ուրեմն Ձեր այդ առաքինի զործը քարի օրինակ դառնայ մեր հայ քոյրերի համար, որպէսզի իրենց արդուզարդի եւ աւելորդ շռայլութիւնների փոխարէն նպաստեն հայ ազգի կրթութեան եւ գրականութեան, որ նրա ինքնապաշտպանութեան ճշմարիտ գէնքն է:

Մեամ Ձեր աղօթարար

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱԽԵԼԵԱՆՑ

18-ն Նոյեմբերի 1905 թ.

Ս. Էջմիածին.



Լոյս ածելով Լազարեան ձեմարանի արարերէնի դասատու արեկագէտ պ. Ա. Կրիմսկու «Муcульманство и его бyдyщность» գրքի թարգմանութիւնը, մեր նպատակն է եղել այս օգտակար և շահագրգիռ գիրքը ծանօթացնել հայ ընթերցողներին: Իւրաքանչիւր անհատ պարտաւոր է ուսումնասիրել քաղաքակիրթ ազգերի պատմութիւնը, բայց առաւել եւս իւր հարեան ազգերի, որոնց ոչ միայն լոկ պատմութեանը ծանօթանալ պէտք է, այլ և մանրամասն կերպով այդ հարեան ազգերի կրօնական հայեացքներին ու իդէալներին, մտաւոր ընդունակութիւններին, կրթական և այլ հաստատութիւններին, նրանց ներքին կեանքի զարգացման և կամ անկման, նոյնպէս և պետութեան արտաքին ու ներքին կազմին, նրա հիւանդոտ մասերին, վարչական անձնաւորութիւններին, պետութեան ամբողջ ոէժիմին և այլն և այլն:

Հայ ժողովուրդը դժբախտաբար դարերի ընթացքում ոչ թէ լոկ իբրեւ հարեան է ապրել թուրք և պարսիկ ազգերի հետ, այլ ապրել է ուղղակի նրանց դերիշխանութեան ներքոյ, նրանք են քայքայիչ ազդեցութիւն ունեցել քաղաքական կեանքից զուրկ հայ ժողովրդի ներքին և արտաքին կեանքի վրայ, նրանք են հայերի մի շարք պատմական թշուառութիւնների պատճառն եղել և շարունակում են մինչև այժմ էլ լինել: Այդ դեռ եւ Տաճկաստանի և Պարսկաստանի հայերի նկատմամբ: Ռուսահայերս էլ թէև ապրում ենք ուսաց գերիշխանութեան ներքոյ՝ բայց դժբախտաբար նոյնպէս ազատ չենք թուրք թանձրամիտ ժողովրդի քայքայիչ

աղղեցութիւնից, նրանց յարձակումներից և թալաններից: Դեռ ևս Անդրկովկասի խաղաղ ժամանակ հայ երկրագործ խաղաղ գիւղացիները չարունակ ստիպուած են եղել թալանի ու կողոպուտի սովոր և կուլտուրական կեանքից զուրկ թուրք ցեղի դէմ կռուել և աղատուել նրանց ասպատակութիւններից: Իսկ սոյն 1905 թ. ընթացքում, այն էլ Ռուսաստանում, թուրքերի հայերի դէմ գործած դադանութիւնների չափն իւր ծայրայեղութեան հասաւ և գրիչն անգործ է նկարագրելու այն ամեն եղեւնագործութիւնները, թալանն ու հրդեհը, որոնք տեղի ունեցան Բագուում, Երևանի նահանգում, պատմական Ղարաբաղում և Գանձակում:

Մեր նպատակը չէ այստեղ կանգ առնել ու խօսել թուրքերի այդ նպատակաւոր շարժումների և նրանց զրդիչ պատճառների մասին, այդ մեզ հետու կը տանէր, այլ մենք կամենում ենք յայտնել այն միտքը, թէ քանի որ հայերիս դարերից ի վեր վիճակուած է առաջ տանել մեր կուլտուրական կեանքը՝ կռուելով թուրք և պարսիկ տարրերի դէմ՝ հետևապէս անհրաժեշտ է մօտիկուց ծանօթանալ մեր հարեան թուրք և պարսիկ ազգերի կեանքին, նրանց ղեկավարող իսլամական կրօնին, թուրքիայի և Պարսկաստանի պետական կազմութեան և նրանց հիւանդոտ կողմերին: Կրկին շեշտում ենք, որ իսկապէս չառ լուրջ կերպով միշտ պարտաւոր ենք ուսումնասիրել առհասարակ մեր բոլոր հարեան ազգերին: Ահա և այդ տեսակետից պ. Կրիմսկու սոյն աշխատութիւնը կարող է որոշ չափով բաւականութիւն տալ հայ ընթերցողներին: Պ. Կրիմսկին իւր այս կարևոր աշխատութիւնը գրելիս օգտուել է արևելեան թուրքաստանը ճանապարհորդող Հերման Վամբերիի և արևելեան պատ-

մութիւնն ուսումնասիրող Ա. Միւլլերի և այլ աշխատութիւններից, միևնոյն ժամանակ և ի նկատի առնելով իւր անձնական գիտողութիւնները, որ նա արել է անձամբ Տաճկաստանում և Ասորիքի թուրք-ասիական վիլայէթի գլխաւոր քաղաքում—Բէյրութում, որտեղ ապրել է երկու տարի: Այս գրքի ուսեսրէն հրատարակութեան*) մասին իւր ժամանակին հայոց և ուսաց նշանաւոր թերթերում ու ամսագրերում լոյս են տեսել համակրական մատենախօսական յօդուածներ: Այս յօդուածները, որքան հնարաւոր եղաւ ձեռք բերել այդ թերթերի համարներն ու քաղել, մենք բարեւոք համարեցինք դնել դրքիս վերջում հետաքրքիր ընթերցողների համար:

Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում յարգելի պրօֆեսսոր Ա. Կրիմսկուն, որ մեզ իւր ուրախութիւնն է յայտնում այս աշխատութիւնը հայերէն թարգմանելու ու տարածելու առթիւ և ուղարկում Լազարեան ձեմարանի պրօֆեսսոր պ. Խաչատուր Յովհաննիսեանի միջոցով մինչև այժմ այս գրքի մասին լոյս տեսած գրախօսութիւնների ցուցակն և իւր մի այլ աշխատութիւնը, «Школа, образованность и литература у российских мусульманъ» որի թարգմանութիւնը կ'աշխատենք մօտիկ ապագայում տալ, ի նկատի առնելով դրքոյի հետաքրքրական տեղեկութիւնները:

Բ. Վ. Ա.

20 Նոյեմբերի 1905 թ.

Ս. Էջմիածին.



*) Լոյս է տեսել Մոսկվայում 1899 թ. Կայ եւ սրահերկորդ հրատարակութիւնը մալաուս լեզուով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԼՈՒԽ I. Մահմեդն ու Ղուրանը . . էջ 4—24

Կռապաշտ արարների իդէալներն ու հայեացքները յաջող հող չներկայացան Մահմեդի գործունէութեան համար: Նրա Մէկկայում ունեցած տասն տարուայ քարոզը յաջողութիւն չունեցաւ, Մահմեդը տեղափոխուեց է Մեդինա, որ թշնամի էր Մէկկային եւ ներշնչուած մեսսիական զաղափարներով: Նա այնտեղ կրօնական հասարակութիւն է կազմակերպում: Անհաւատների ունեցուածքի մահմեդականներին բաժանելու մասին եղած օրէնքը, Մեդինացիներից երեւան են գալիս ճշմարիտ հաւատացող մարդիկ, իսկ մնացած արաբներին միայն յափշտակութիւնն է շահագրգռում ընդունել Մահմեդին: Մէկկայի առումն եւ իրրեւ կրօնական կենդրոնատեղի ճանաչուելը, մէկկացիները գործնական տեսակէտից նպաստում են իսլամի տարածման ամբողջ անկախ Արաբիայում: Արաբների տածած ատելութիւնը դէպի իսլամ կրօնը եւ մարգարէի ջանքերը նրանց զարմնել իսլամ կրօնին աշխարհային բարիքների եւ աւարառութիւնների խոստումներով: Բայց նրա արշաւանքը դէպի Ասորիք վերջանում է անյաջողութեամբ: Մահմեդը մեռնում է, որից անմիջապէս յետոյ Արաբիան թողնում է Իսլամ կրօնը:

Ղուրանը ժողովուած է ոչ Մահմեդի կենդանութեան ժամանակ, եւ դասաւորուած է քասակական անկարգ դրու-

թեամբ:—որից եւ առաջ է դալիս այն, որ տարբեր կերպով է հասկացւում Ղուրանը: Իսլամի չորս սիւներն եւ այլ պարտականութիւնները: Սրբազան պատերազմ: Մահմեդը հաստատել է սրբազան պատերազմն իրրեւ պաշտպանողական, իսկ ժամանակակից մահմեդականները հասկանում են այն իրրեւ յարձակողական, ժամանակակից իսլամն անհաւատ ասելով: չէ հասկանում այն, ինչ որ Մահմեդն է հասկացել: Մահմեդական զրախտի եւ դժոխքի բրտութիւնը:

ԳԼՈՒԽ II. Իսլամի պատմութեան համառոտ տեսութիւնը էջ 24—36

Արաբները Մահմեդի մահից յետոյ թողնում են իսլամ կրօնը, Հաւատացող մեդինացիներն եւ իշխանասէր մէկկացիներն օգնում են Աբու-Բէկրին հնազանդեցնել արաբներին: Արաբացիների ունեցած բողոքը Մահմեդի կրօնի դէմ վերջանում է շնորհիւ արտաքին փայլուն նուաճումների եւ հարուստ աւարի: Արաբացի նուաջողների կրօնական մոլեռանդութեան բացակայութիւնը, նրանց յաղթութիւնների իսկական պատճառները, Օմայեան խալիֆաներն եւ սրանց ջանքերը յետ պահելու յաղթուած ժողովրդներին իսլամ կրօնն ընդունելուց, Պարսկասէր առաջին Աբբասեանների դարը: Նիւթական կուլտուրայի եւ գիտութեան ծաղկումն խալիֆայութեան մէջ: Բացարձակ տիրապետութիւնը մոթազիլիտեան ազատամիտ զաղափարների եւ ուղղափառ չորս վարդապետութիւնների ստորանալը: Մութէվէկիին եւ կղերականութեան յաղթութիւնը, Խալիֆայութեան աստիճանաբար անկումը: Թուրքերն եւ նրանց յետեւից էլ մօնղոլները մահմեդական քաղաքակրթութեան ամենաուժեղ հարուածներն են հասցնում: Օսմանեան Թաղաւորութիւնը: Թուրք-օսմանները:

դառնում են իսլամի ներկայացուցիչները, եւ հաստատում են նրա մէջ անշարժութիւնն եւ մոլեռանդութիւնը, Իսլամի զըրուծեան տեսութիւնը վերջին երեք դարերի ընթացքում: Մահմեդական պետութիւնների քաղաքական անկումն ղէպի ներկայ դարը, եւ նրանց անզօրութիւնն ընդդիմադրելու արեւմտեան ազդեցութեան: Ո՞րն է իսլամի պատմական նշանակութիւնը:

ԳԼՈՒԽ III. Իսլամի ժամանակակից վիճակը. էջ 57—141

Մահմեդական նոր պատմութեան աչքի ընկնող բնաւորութիւնը—հին ասիականութեան խառնուրդն եւրոպականի հետ: Մասամբ ինքն Արեւելքն է մօտենում Արեւմուտքին եւ մասամբ էլ Արեւմուտքն է աշխատում շատ թէ քիչ չափով մտնել Արեւելք եւ ստեղծել կեանքի նոր ձեւեր: Արեւելքում եւրոպական քաղաքակրթութիւնը զիսաւոր տարածողներ ներկայանում են—Սնդկիան եւ Ռուսաստանը:

Մահմեդական նիւթը, որի հետ պէտք է զործ ունենայ Արեւմուտքը, միատեսակ չէ. դրանք տարբեր ազդութիւններ են, ազդային տարբեր բնաւորութեամբ: Դէպի գեաւուրներն եղած մոլեռանդութեան բացակայութիւնն եւ Արեւմուտքի հետ մօտենալու մեծ թէ փոքր չափով ընդունակութիւնները գտնւում են կապակցութեան մէջ իւրաքանչիւր ազգի բնական տաղանդի եւ մտաւոր զարգացման աստիճանի հետ: Արաբներն եւ պարսիկները յառաջադէմ տարր են, իսկ թուրքերը յետադէմ:

Մահմեդական երկրների հին պետական կազմութեան հիմքում կայ աստուածպետական սկզբունք. մահմեդական հրամայողը, իբրեւ հոգեւոր պետ, ստիպուած է համակերպուել իսլաւարամիտ հոգեւորականութեան կամքին, Դրա համար եւ

արեւմտեան ոգով բարեփոխութիւններ մտցնելու համար մահմեդական հրամայողը նախ պէտք է ինքը հաստատապէս հաւատացած լինի արեւմտեան քաղաքակրթութեան գերազանցութեան: Արեւելքը ղեռ չէ ունեցել այդպիսի հրամայողներ, մանաւանդ Տաճկաստանը. դրա համար եւ մինչեւ այժմ եղած բարեփոխութիւնները կրում են մակերեւոյթային բնաւորութիւն: Թէ բարեփոխուած, աշխարհական, նախարարական աստիճանաւորներն եւ թէ ոչ բարեփոխուած հոգեւոր իշխանութեան աստիճանաւորները համակուած են հին ասիացիութեամբ. ամեն տեղ տիրապետում է յետամնացութիւն, անփութութիւն եւ հրէշաւոր կաշառակերութիւն, մանաւանդ Տաճկաստանում, որի շնորհիւ պետական մեքենական կազմը քայքայուած է եւ ժողովուրդն էլ տակն ու վրայ եղած: Տաճկաստանում պետական բիւզճէն ունի իւր դէֆիցիտը, Մահմեդական պետութիւններն արտաքին կողմից նոյնպէս խիստ թոյլ են. թէեւ Տաճկաստանում զինուորական զործը բարեփոխուած է, բայց փողի պակասութեան եւ իշխանութիւնների անազնութեան շնորհիւ զօրքը չէ կարող լաւ կազմակերպուած լինել. իսկ միւս մահմեդական պետութիւնների մէջ հազիւ թէ եղած լինի զինուորական բարեփոխութիւններ:

Ժամանակակից Արեւելքի ներքին կեանքը գտնւում է այնպիսի պայմաններում, որոնք վատ են նպաստում վերածնութեան: Մահմեդական ընտանիքի աչքի ընկնող իրաւունքներն են՝ բազմակնութիւնն եւ հարէմ: Հարէմը բացառել է մահմեդական կնոջ եւ անբարոյականացրել տղամարդին. հարէմը ղէպի յառաջադիմութիւնն ունեցած թշնամութեան եւ անշարժութեան օջախն է: Շատ մահմեդականներ կարիք են ըզգում բարեփոխութիւնների այդ ուղղութեամբ, իսկ թուրքերը, նոյն իսկ կրթուածները, մեծ անհամակրութիւն են ցոյց տալիս ղէպի բարեփոխութիւնները:

Ուսումնարանը, կրթութիւնն եւ գրականութիւնը մահավերջականների մեծամասնութեան մօտ գտնուում են ստորին աստիճանի վրայ. հին հոգեւոր դպրոցները, մինչեւ անգամ Պարսկաստանում, բաւականութիւն չեն տալիս ժամանակի պահանջներին. Տաճկաստանում սակաւաթիւ են եւրոպական ուսումնարաններ շնորհիւ տաճկական անշարժութեան, իսկ Պարսկաստանում շնորհիւ նրա հեռաւորութեան, եւրոպային աւելի մօտեցել են արաբները: Մեծ յոյսեր են տալիս տաղանդաւոր իրանցիները:

Արդիւնաբերութիւնն եւ վաճառականութիւնը տաճկացի հովանաւորութեան ներքոյ չեն կարող ծաղկել:

ԳԼՈՒԽ IV. Իսլամի կենսունակութեան հարցը եւ նրա մեր բաղաձայնութիւնն իւրացնելու ընդունակութեան մասին էջ 142—163

Մահմեդական պետութիւնները թէեւ քաղաքական, տընտեսական եւ մտաւոր կողմից գտնուում են անկման մէջ, բայց իսլամը, իրրեւ կրօն, չէ մեռնում, այլ ընդհակառակը տարածւում է: Յոյս չկայ, որ նա փոխուի քրիստոնէութեան: Բայց իսլամը զոնէ պարսիկների եւ արաբների համար չէ կարող արգելք լինել յառաջադիմութեան, եւրոպական քաղաքակրթութիւնն իւրացնելու գործին. թուրքերը քաղաքակրթւում են, եթէ կորցնում են իրենց քաղաքական ինքնուրոյնութիւնը: Արեւելքում յառաջադիմութեան զլսաւոր արգելքն տաճկաց փառած պետութեան քաղաքական գոյութիւնն է: Ոչնչացնելով Տաճկաստանը, արեւելեան ազգերը կարող են մտնել եւրոպական ընտանիքի մէջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՀՄԵԴՆ ՈՒ ՂՈՒՐԱՆԸ

Իսլամը կամ մահմեդական կրօնը կեանքի մէջ առաջ եկաւ արաբացի Մահմեդի շնորհիւ VII դարի առաջի կիսին Քրիստոսից յետոյ:

Արաբացիները՝ մինչեւ Մահմեդի երևան գալը՝ իրենց թափառական կամ կիսաթափառական եւ չափազանց աւարասէր ձգտումներով աննշան ժողովուրդ էին: Արաբական թերակղզու ամենալաւ հողերը գտնուում էին հպարտ, թէեւ ոչ այնքան ուժեղ հարեանների ձեռքում կամ նրանց ազդեցութեան ներքոյ, ինչպէս պարսիկների եւ բիւզանդացիների: Իբրեւ երկրի անկախ մասեր մնացել էին Հէջը (թերակղզու կենդրոնական մասը) եւ հարեան Հէջաղը (Կարմիր ծովի հիւսիս-արեւմտեան ծովափնեայ մասերը Մէկկա եւ Եաթրեբ (Մեդինա) քաղաքներով): Արաբները կրօնով բազմադիւականներ, բազմաստուածեաններ էին. նրանք

լցրել էին իրենց շրջապատող բնութիւնը (սարերը, անապատները) երկու սեռի բազմաթիւ փոքրիկ անտեսանելի աստուածներով, ունէին նաեւ կուռքեր. Մէկկայում կար Փեաքէի տաճարը, որտեղ ժողովուած էին բոլոր ցեղերի կուռքերը: Այդ տաճարի ամենամեծ սրբութիւնն էր կազմում «Սե քարը», որ, ըստ աւանդութեան, բերուած է երկնքից, և որին երկրպագելու համար իւրաքանչիւր տարի բոլոր ցեղերից ուխտաւորների մեծ բազմութիւն էր գնում Մէկկայ, որտեղ լինում էր և տօնավաճառ: Մէկկային և Փեաքէի տաճարին տիրապետել էր Կորէյշեան վաճառականական ցեղը (սկսած 440 թուից), որը մեծ օգուտ էր ստանում ուխտադնացութիւնից: Եօթներորդ դարում աստուածներին երկրպագութիւնը կատարւում էր աւելի իբրեւ սովորութեան հետեանք, քան հաւատի ոյժի. արաբները դէպի իրենց աստուածները մեծ յարգանք չունէին, և բաւական զարմանալի պատմութիւններ կան նրանց դէպի իրենց աստուածներն աներկիւղ կերպով վերաբերուելու մասին: Առ հասարակ կրօնն ամենաչնչին դերն է կատարել այդ գործնական, չափազանց ժուժկալ ժողովրդի կեանքում, մանաւանդ թափառականների (բեդուինների)*):

*) Իսլամի պատմութեան հեղինակ Ա. Միւլլեր իւր աշխատութեան մէջ նախորդների գիտական ու-

Հաւանական է, որ Ալլահի մասին եղած միաստուածութեան գաղափարն առաջ է եկել հրէից ազդեցութեան ներքոյ: Արաբների մէջ ապրել են բաւական թուով հրէաներ: Այսպէս Մեդինայում գլխաւորապէս հրէաներն էին բնակւում: Թերակղզու վրայ կային և ուրիշ հրէական գաղթականութիւններ: Արաբների մէջ միանշանակ չլինելով մոլեռանդութիւն կամ հալածանք դէպի հրէութիւնը, վերջինս կարող էր ուժեղ կերպով տարածուել Արաբիայում, սակայն հրէական կրօնն այնքան էլ յարմար չէր գալիս

սումնասիրութիւնների ընդհանուր համադրմամբ. բերելով, գալիս է հետեւեալ եզրակացութեան: Մէկկայի բնակիչները պահպանում էին հին ծէսերը գլխաւորապէս վաճառականական տեսակէտից: Մնացած բաների մէջ, որոնք վերաբերում էին աստուածապաշտական ծէսերին, հետեւում էին հին աստուածութիւններին, միայն զրդուած պահպանողականութիւնից, որը յենւում էր հարկաւ ոչ թէ իրենց կրօնական զգացմունքի, այլ իւր ծագումով հպարտացող ժողովրդի գոռոզ ինքնահաւանութեան վրայ: Իսլամի պատմութիւնը պարզ կերպով ցոյց է տալիս, որ միայն բեդուինների մի քանի ցեղեր պահպանել են կրօնական սկզբունքներ, ծածկուած, անզարգացած ձևով: Եւ մենք, ակամայից չպետք է վերադրենք այդ յոռետես և տնտես ցեղի մասսային սահմանափակ աստուածային պաշտամունք (Исторія Ислама, 1895. т. I. крեսа 54—55):

արաբներին, որովհետեւ նա խիստ ազգային կրօն էր: Արաբիայում տարածուել է նաև քրիստոնէութիւնը, բայց արաբական ամբոխի համար չափազանց դաւանաբանական է եղել. դաւանաբանական կէտերը, մի Աստուծոյ մասին՝ յերկից դէմս, Քրիստոսի մարմնացման, մահուան և մեռելներից յարութիւն առնելու մասին, հացը և գինին՝ իբրեւ օրինակ Քրիստոսի մարմնոյն և արեան և այլն, այս բոլորն արաբներին անհասկանալի էին թւում և մինչև անգամ այդ կիսաաթէիստական ժողովրդի մէջ առաջ էին բերում շատ սուր ծիծաղ: Հրէական և քրիստոնէական կրօնի հետ միասին կազմակերպւում էր նոր (թէև վատ ձևակերպուած) աղանդ «խանիֆների», որոնք մերժում էին քրիստոնէական և հրէական կրօնների դաւանաբանական կէտերը, և քարոզում էին գործնական (բարոյական) միաստուածութեան (монотеистическую) կրօնը, հաւատ դէպի միակ Աստուածը (Ալլահը) առանց դաւանաբանական կէտերի, բայց վարձատրութեան դադարի ուսմունքով: Հաւատ առ Աստուած նրանց մօտ հաւասարադօր էր «Իրեն յանձնել Աստուծուն» (արաբերէն իսլամ) այսինքն «հնազանդութիւն Աստուծոյ կամքին» ուսման հետ: Խանիֆների հաւատքը կենդանի էր, նրանք ձգտումն ունէին քարոզելու այդ հաւատքը, բայց արաբ-

ների յոռետես մեծամասնութիւնը (ինչպէս և այժմ բեդուիններին) զարմանալի կերպով քիչ էր հետաքրքրւում Աստուծոյ մասին եղած խորհրդածութիւններով, հանդերձեալ կեանքով և բոլորովին կարիք չէր զգում փնտռելու նոր հաւատ և թողնելու իւր նախկին կռապաշտական կրօնը, իւր փառաւոր նախնիքների կրօնը, որը քիչ և կամ բոլորովին չէր կապում մարդուն զանազան պատականութիւններով: Մահմեդը չափահաս ժամանակ պատկանում էր խանիֆների թուին:

Նա ծնուել է (ինչպէս կարծում են 20 Ապրիլի 571 թուին) Մէկկայում կռապաշտների մէջ: Նորա հայրն էր Աբդալլահ, պարապմունքով մանր առւտրական, Կորէյշեան ցեղից, իսկ մայրն էր Ամինան Մեդինայից: Հայրը վախճանուել է մինչև որդու ծնունդը, իսկ մայրը վեց ամիս յետոյ: Որբին խնամել է իւր հօրեղբայր Աբու Թալբը, որը մի մեծահոգի, բայց և խիստ աղքատ մարդ էր. երեխան իրեն կերակրելու համար շուտով սկսեց պարապմունք դրտնել և աշխատել—արածացնել Մէկկայեցիների այծերն ու ոչխարները, որ շատ ստոր պարապմունք էր համարւում: ամբողջ օրերով անապատում նա մարդու երես չէր տեսնում: Մահմեդը 24 տարեկան հասակում (շուրջ 595 թ.) մտաւ ծառայութեան Մէկկայի հարուստ և նշանաւոր

Քաղիջա անունով այրի կնոջ մօտ և ճանապարհորդում էր կարաւանի հետ դէպի Ասորիք այդ կնոջ վաճառականական գործերով՝ սկզբում իբրեւ կարաւանը քշող և յետոյ իբրեւ նրա գործակատարը: Քաղիջան հաւանեց երիտասարդին և նրան առաջարկեց իւր ձեռքը: Այդ ամուսնութիւնը յայտնի դիրք տուեց Մահմեդին Կորեյշեան հասարակութեան մէջ և բախտաւոր ընտանեկան նիստ ու կաց, ապահովեցրեց և ազատեց նրան ապրուստի առօրեայ հոգսերից և միջոց տուեց նրան խորասուզուելու և մտածելու աւելի բարձր իրերի մասին: Մինչև այդ ժամանակ Մահմեդը նոյն կռապաշտն էր, ինչ որ իւր ժամանակակիցները, թէև շատ բաներով նրանցից տարբերուած էր: Նա մի երեւակայող, խորը մտածող և ջղային մարդ էր: Կրօնական հարցերը նրան հետաքրքրում էին: Նա կապեր հաստատեց հրէաների, քրիստոնեաների (նեստորական և արիոսական հերետիկոսների) և խանիֆների հետ: Վերջինները նրա վրայ անդառնալի ազդեցութիւն ունեցան: Իւր կեանքի 40-րդ տարին (շուրջ 610 կամ 611 թ.) Մահմեդը խանիֆների սովորութեան համաձայն իւր ընտանիքի հետ քաշուեց անապատ Մէկկայի մօտ գտնուած վայրի Հիրասարը կրօնական խորհրդածութիւնների համար: Եւ ահա, երբ նա մենակ տքնում էր, ծով էր

պահում և տաղնապում, ջղային ընկնաւորութեան հիւանդութիւնը ստացաւ, մի տեսիլք տեսաւ, որը հրամայում էր նրան՝ Միակ Աստուծոյ քարոզիչ մարգարէն լինել: Սարսափելի տարակուսանքից յետոյ տեսիլքը կրկնուեց: Մահմեդն իւր աստուածային առաքելութեան հաւատաց և դարձաւ իսլամի մարգարէ: Այդ օրից սկսած Ալլահի յայտնութիւնները յաճախ կրկնուեցին, որոնք սովորաբար երևան էին զալիս ջղային ընկնաւորութեամբ, յաճախ նոյն իսկ մարդկանց ներկայութեամբ:

Ամենից առաջ Մահմեդին հաւատացին նրա ընտանիքը և մօտիկ ազգականները, ինչպէս օրինակ հարուստ վաճառական Աբու Բէկրը և Աբու Թալէբի տասնամեայ Ալի որդին. ինքն Աբու Թալէբը չէր հաւատում, թէև մինչև իւր կեանքի վերջը լաւ վերաբերուեց Մահմեդին: Ապա Մահմեդին աշակերտեցին շատ ստրուկներ, և մի քանի ազատներ, որոնց մէջ խիստ նշանաւոր է Օմարի դարձը: Խոհուն Աբու Բէկրը ղեկավարում էր ջղային Մահմեդի անհաստատ բնութիւնը, և նրա փոխարէն խօսում էր այնտեղ, որտեղ պահանջւում էր քաղաքազիտական նրբութիւն. եռանդոտ Օմարը հրապարակ էր զալիս այն դէպքերում, որտեղ պահանջւում էր ոյժ և եռանդ, շատ պատմաբաններ տրամադիր են նոյն իսկ իս-

լամի իսկական հիմնադիր ընդունել Օմարին: Մէկ-
կա քաղաքի հաւատացեալների թիւը մեծ չէր.
Մահմեդը տասը տարուան ընթացքում հաւատի
փոխարէն տեսնում էր միմիայն Կորէյշների հեզ-
նութիւնը, և նոյն իսկ թշնամութիւնը, որովհետեւ
Մէկկայի արիստոկրատիայի բարեյաջող կացու-
թիւնը և վաճառականական շահերը կապուած
էին հեթանոսական ուխտազնացութեան տօնա-
վաճառների հետ: Մարգարէն համբերութեամբ
տարաւ ամէնը, բայց վերջապէս արդէն Քադի-
շայի և Աբու Թալէբի մահից յետոյ (619) երբ
տեսաւ՝ որ Մէկկայում ոչինչ չէ կարողանում
անել, կապեր հաստատեց (620) Մէկկայի հին
թշնամիների հետ—եաթրէբցիների, որոնք իւրա-
քանչիւր տարի Քեաբէ քաղաքն ուխտազնացու-
թեան էին գալիս: Սկզբում 622 թուին եաթրէբ
եկան Մէկկայի բոլոր մահմեդականները (թուով
շուրջ 150 հոգի), իսկ նրանց յետեւից (հաւա-
նականօրէն Սեպտեմբերի 20-ին) փախաւ և ինքը
Մահմեդը: Այդ ժամանակից եաթրէբը կոչւում է
Մեդինա, այսինքն մարգարէի քաղաք:

Մեդինայում ազգաբնակչութեան հրէական
տարրը Մահմեդին թշնամաբար վերաբերուեց:
Նա աշխատեց մտերմանալ հրէաներին, ընդունե-
լով նրանց ծէսերից մի քանիսը, հաւատալիքը,
և դարձնելով Երուսաղէմն աղօթարան, բայց

հրէաները դրականապէս մերժեցին նորա վար-
դապետութիւնը: Այն ժամանակ մարգարէն գըլ-
խաւոր սրբավայր ընդունեց ոչ թէ Երուսաղէմը,
այլ Քեաբէ քաղաքը: Նրանից յետոյ անհրաժեշտ
էր ազատ մուտ դործել այնտեղ, որ և հարկ
եղաւ կռիւ մղել կորէյշների դէմ: Մահմեդը 624
թ. կտրեց այն ճանապարհը, որով Մէկկայի կա-
րաւանն Ասորիքից տուն էր դառնում կորէյշ-
ների արիստոկրատիայի գլխաւոր Աբու-Սոֆիանի
առաջնորդութեամբ: Բեդրայի մօտ տեղի ունեցաւ
ճակատամարտ և Մահմեդը վճռական յաղթանակ
տարաւ:

Յաջողութիւնն ամրացրեց մեդինացիների
երերուող հաւատն և քաղաքում բարձրացրեց
մարգարէի իշխանութիւնը: Նա խիստ կերպով
հաշիւ տեսաւ բնակիչներից մի քանիսի հետ,
որոնք առաջ ծաղրում էին նրան, ապա հեռա-
ցրեց Մեդինայից հրէաների հարուստ Բէնու
Քէյնօկ ցեղը, իսկ նրանց ունեցուածքը բաժանեց
ուղղահաւատներին: Կորէյշները 625 թ. 3000
զինուորներով կռուի դուրս եկան և Օխոզ սարի
մօտ Մահմեդին ջարդ տուին. շարժման առիթն
եղել է Մահմեդի զօրքերի թալանելու ազահու-
թիւնը: Մարգարէի հեղինակութիւնը Մեդինա-
յում տատանուեց, սակայն նոյն 625 թ.-ի ըն-
թացքում նրան յաջողուեց հրէից Բէնու Նադիր

ցեղը Մեղինայի արուարձաններից արտաքսել, ներանց հարստութիւնը բաժանելով մահմեդականներին: 627 թ. մէկկայիներէից, հալածուած և Հէյբերում բնակուած հրէաներից և մի քանի թափառական ցեղերից բաղկացած 10,000 զօրքն Աբու-Սոֆիանի առաջնորդութեամբ պաշարեց Մեղինան: Մահմեդը մի պարսիկի խորհուրդով քաղաքն ամրացրեց խրամատներով: Մեղինայում ապրող հրէից վերջին Բէնու-Պորէյզա ցեղն անցաւ պաշարուածների կողմը: Մահմեդն ուղարկուած զործակալների միջոցով կարողացաւ անվստահութիւն սերմանել արաբների մէջ դէպի նոր դաշնակիցները. պաշարուածների բանակում վէճեր սկսուեցին և արաբները թողեցին պաշարումն: Մարգարէն մնացած հրէաների հետ հաշիւ տեսաւ անդթութեամբ. սպանուեցին տղամարդիկ (թուով 600—700), կանայք և աղջիկներ վաճառուեցին Հէջազի բեդուիններին, իսկ ունեցուածքները տուին ուղղահաւատներին: Նրժակայ բեդուինները՝ թէ երկիւղից և թէ կողոպուտի ցանկութիւնից դրդուած հպատակուեցին Մահմեդին. նա իրեն այնքան ուժեղ զգաց, որ վճռեց իրագործել «հաջ», այսինքն երկրպագութիւն Մէկկային: Խոզէյբի մօտ 628 թ. կորէյշների հետ տասնամեայ զինադադար կնքուեց, որի զօրութեամբ մահմեդականներն իրաւունք ստացան

երեք օրով Մէկկա մտնել ուխտ անելու. ազատ մարդիկ վստահացան բացարձակ ընդունել իսլամը, իսկ Մահմեդը պարտաւորուեց Մէկկայի կարաւաններին ազատ երթեկութիւն տալ: Մահմեդը շատ շուտով աշխատեց առաջին իսկ պատեհ առիթով խաղաղութեան պայմանները խախտել, յանկարծակի ուժեղ բանակով արշաւեց Մէկկայի վրայ, և 630 թուին շնորհիւ մատնութեան քաղաքը վերցրեց: Քեաբէյում ոչնչացրին կուռքերը, իսկ «Սև քարը» անձեռնմխելի մնաց և ճանաչուեց իբրև սրբութիւն: Մահմեդը բնակիչների հետ չափազանց քաղցրութեամբ վարուեց, սակայն ամէնքն էլ հարկադրուած էին ընդունել իսլամը: Մէկկայի բնակիչների անկեղծութեան մասին հարկաւ խօսք լինել չէր կարող, սակայն իսլամի դէմ բողոքելու առիթ էլ չունէին: Քեաբէն մնաց իբրև սրբութիւն, հաջը համարուեց մահմեդականի կրօնական պարտաւորութիւն, իսկ Արաբիայի մնացեալ հեթանոսական սրբութիւնները Մահմեդը հրատարակեց ոչնչացնելու արժանի, որ և յետոյ իրագործուեց, և այդպիսով նոր կրօնն ոչ թէ խլեց Մէկկայի գերակշռութիւնը, այլ ընդհակառակն անպայման ամրացրեց նրա այդ գերակշռութիւնը և ամբողջ Արաբիայի նկատմամբ Մէկկային նախապատուութիւն տուեց: Այդ օրից սկսած Մէկկայի բնակիչներն եռանդով ա-

Ջակցում են մարգարէին արաբական միւս ցեղերը իսլամական կրօնին դարձնելու: Այդ դարձը (աւելի ճիշտ Մահմեդի քաղաքական իշխանութեան ենթարկուելը) իրագործուեց արագ և հեշտութեամբ. սակաւ բացառութեամբ՝ բոլորն առանց դիմադրութեան մահմեդական դարձան: Ինքն ըստ ինքեան իսլամը, որպէս կրօն, արաբների համար բոլորովին զրաւիչ չէր, աղօթքները և զուրանի ընթերցումը նրանց համար անտանելի էր, իսկ տասանորդի տուրքը՝ աղաղակող անարդարութիւն: Մէկկան առնելուց առաջ, երբ Մահմեդը դեռ ուժեղ չէր, բեդուիններն երբեմն իրենց մօտ ուղարկուած մահմեդական քարոզիչներին սպանում էին: Սակայն այժմ Մէկկան նուաճելուց յետոյ, Մահմեդի երկիւղը, նրա հետ կապած պայմանից սպասելի օգուտը և անհնազանդներին կողոպտելու յոյսը հարկադրեցին բեդուիններին իրենց կամքի հակառակ բերուած իսլամն ընդունել: Ինչպէս երևում է վերջին հանգամանքներից, արաբները ժամանակաւոր երեւոյթ էին ճանաչում իսլամը, որից կարելի էր ազատուել մարգարէի մահուամբ. իսկ առ այժմ իսլամ ընդունելը նրանց կողմից մեծ զոհողութիւն չէր պահանջում: մահմեդական Թաալ Ալլահը նրանց յայտնի էր հեթանոսական կրօնից, սնոտիապաշտութիւնն էլ իսլամի մէջ կարելի էր

պահպանել: Ըստ երեւոյթին՝ Մահմեդը նորահաւատների շահասիրական զգացումները շատ լաւ էր ըմբռնել: Այսպէս Հաբազիներին յաղթելուց յետոյ (անմիջապէս Մէկկայի առումից յետոյ) նա հարուստ աւարի լաւագոյն մասը բաժանեց Մէկկայի բնակիչներին. մեղինացիները տրանջում էին, մէկկացիներն իրենց վիրաւորուած էին համարում և զրգուումն այն աստիճանի սուր կերպարանք ստացաւ, որ մարգարէի վրայից նրա սեպհական վերարկուն քաշեցին: Մահմեդը մեղինացիներին ուղղած խաղաղարար ճառի մէջ արտայայտեց, թէ առանց այն էլ նրանք հաւատքի մէջ հաստատուն են, իսկ մէկկացիների սիրտը պէտք է զրաւել աշխարհային բարիքներով: 630 թուի ամառը Մահմեդը 30,000 հետեակ և 10,000 ձիաւոր զօրք ուղարկեց Ասորիք և ինքն էլ նրանց հետ ճանապարհուեց: Արշաւանքն անյաջող անցաւ, մարգարէի զինուորներին դժուար էր շարժուել տօթ անապատում այրող քամու տակ և նրանք պահանջեցին նահանջում: Մարգարէն ի զուր էր աշխատում նրանց համոզել, որ դժոխքի կրակն աւելի սաստիկ կերպով նրանց կայրէ, քան ամառային տօթը, — սակայն այդ յորդորները զիջատող բեդուինների վրայ ոչ մի ազդեցութիւն չունեցան. զօրքը կէս ճանապարհից տուն դարձաւ: Չնայած որ Արաբիայում

մի քանի ցեղեր իսլամը թողեցին, բայց Մահմեդն այդ մասին չհոգալով՝ նոր արշաւանք սկսեց դէպի Ասորիք, թէև այդ ժամանակ ինքը ծանր հիւանդ էր: Ըստ երևոյթին նա լաւ զիտէր, որ արտաքին պատերազմն և ճոխ աւարն աւելի լաւ կարող են արաբներին ներշնչել համակրանք դէպի իսլամը: Բայց նրան վիճակուած չէր այդ արշաւանքի վախճանը տեսնել. 632 թ. Յունիսի 8-ին Մահմեդը մեռաւ Մեդինայում և այժմ նորա գերեզմանը երկրպագութեան վայր է*):

* * *

Մահմեդի վարդապետութիւնը պարունակւում է Ղուրանում: Երբ Մահմեդն ընկնաւոր դրութեան մէջ կամ երազներից յետոյ իւր աշակերտներին հաղորդում էր Ալլահի վարդապետութիւնը կրօնի մասին, Ալլահի կամքը կենսական այս կամ այն խնդրի մասին, քաղաքական առաջադրութիւն, բիբլիական պատմութիւն ևւն,

*) Մահմեդի պատմութեան մասին մանրամասն տեղեկութիւն, նորա պատմութեան և աղբիւրների և եւրոպական հետազոտութիւնների մասին տես իմ «Մահմեդ» յօդուածը Брокгауэ и Эфронъ հանրագիտական բառարանի 39-րդ կիսահատորում:

այն ժամանակ աշակերտներն աշխատում էին կամ յիշողութեան մէջ թարմ պահել մարգարէի խօսքերը, կամ գրում էին արմաւենու թերթերի, քարերի, մագաղաթի ևայլն նման բաների վրայ: Իւրաքանչիւր յայտնութիւն կոչւում էր սուրա (այժմ այդ նշանակում է գլուխ, իսկ առաջ snq), կամ ղուրան (այսինքն ընթերցմունք): Օսման խալիֆը (644—654) հրամայեց Մահմեդի նախկին քարտուղար Ջէդը իբն Թաբիտին ժողովել Ղուրանի բոլոր ցրուած կտորները, վերականգնել մի վերջնական խմբագրութիւն, իսկ մընացեալ ուրիշ գրութիւններն ոչնչացնել: Այդ խմբագրութեամբ Ղուրանը մեզ է հասել: Նա բովանդակում է 114 գլուխ (սուրա), որոնցից իւրաքանչիւր հատուածը կոչւում է «հրաշք»՝ ալ-յեթ: Սուրաները (գլուխները) դասաւորուած են առանց ամենափոքր ժամանակագրական կամ ըստ նիւթերի կարգի, այլ ըստ երկարութեան՝ ամենից երկարն առաջ է դրուած, իսկ ամենից կարճը վերջում: Այսպիսի քաօսային անկարգ դասաւորութիւնից Ղուրանի ընթերցումն դառնում է խիստ տաղտկալի, իսկ մի քանի կէտեր էլ կարելի է բացատրել զանազան տեսակ *):

*) Ղուրանի պատմութեան, սուրաների ժամանակագրական դասաւորութեան, նորա զեղարուեստական

Իսլամի էութիւնն արտայայտուում է հետեւեալ բանաձևով. «Չկայ Աստուած, բացի Ալլահից, իսկ Մահմեդն Աստուծոյ մարգարէն է»։ Աստուած (Ալլահը) ըստ Ղուրանի մի է, յաւիտենական, «չէ ծնել և չէ ծնուել, չէ ունեցել իրեն հաւասար ընկերը» (ալնարի Երրորդութեան դէմ)։ Նա բոլորը նախօրօք դիտէ, Նա ահարկու է իւր բարկութեան ժամանակ, Նա պատժում և պարգևատրում է համաձայն իւր կամքի, մարդը պարտաւոր է նրան հնազանդուել ստրուկի խոնարհութեամբ, իսկ այն ժամանակ էլ չէ կարելի հաւատալ նորա գթութեան։ Այստեղից դժուար է երևան հանել մարդու ճակատագրի և ազատ կամքի բացակայութեան վարդապետութիւնը. այդ կէտն առիթ է տուել մահմեդականների մէջ երկար վիճաբանութեան, բայց ներկայումս յօգուտ ճակատագրի է վճռուած։ Աստուած իրեն յայտնում է մարդկանց մարգարէների միջոցով. այդպիսիներն են Ադամը, Նոյը, Աբրահամը, Մովսէսը, Յիսուս և վերջապէս վերջինը «մարգարէների կիւրքը»—Մահմեդը։ Սրանց թւում Յիսուսը հա-

և քերականական արժանիքի, հրատարակութիւնների և թարգմանութիւնների մասին տես իմ Ղուրան յօդուածը Брокгауза и Эфронъ հանրագիտական բառարանի 31-րդ կիսահատորում։

մարում է շատ մեծ մարգարէ. ճիշտ է, նա թէև Աստուծոյ որդի չէ, բայց ծնուել է առանց նախնական մեղքի, և նորա մայրը միշտ մնաց կոյս (батунь)։ Նա ունէր հրաշագործութեան ձիրք, որպիսինը Մահմեդը չունէր. խաչուել է ոչ թէ նա, այլ նորա նմանը։ Աստուած ունի ծառաներ — հրեշտակներ, որոնցից զլիսաւորն է Գաբրիէլը, ըստ կոչման «սուրբ հոգի»։ Հրեշտակների և մարդկանց թշնամիները դեւերն են. նրանց զլիսաւորն է իբլիս (diavolos) կամ շէյթան (սատանայ)։

Մահմեդականի զլիսաւոր պարտականութիւնները չորս են. օրը հինգ անգամ աղօթել, Բամազան ամսին ծով պահել, տասանորդի տուրք տալ (зекят) և Մէկկայի ուխտադնացութիւնը (հաջ)։ Աղօթքը բաղկացած է Ղուրանից վերցրած յարմար որ և իցէ կտորի ընթերցումից, անշուշտ արաբական լեզուով (թէև այդ լեզուն անծանօթ էլ լինի աղօթողին), մարմնի սահմանուած յայտնի շարժումներով («прикѣ атовѣ», այսինքն երկրպագութիւն, ծնրադրութիւն, զլխի օրօրումն և դէպի մի կողմը թքել)։ Աղօթքից առաջ կատարուում է լուացումն։ Ուրբաթ օրը տօնական աղօթք է, որից յետոյ աշխատանքը թոյլատրելի է *)։ Ծումը

*) Որտեղ քրիստոնեայ շատ վաճառականներ կան, ինչպէս Բէյրութում, այնտեղ մահմեդականներն իսկա-

մի ամիս է տեւում, բայց պարտադիր է միայն ցերեկը և ոչ գիշերը: Արդիւնքների տասանորդը մտնում է զանձարան, զործադրւում է հասարակական նպատակով և համարւում է ողորմութիւն. բացի դրանից տրւում է նաև ողորմութիւն, այդ բառի քրիստոնէական նշանակութեամբ: Հաջը կեանքի մէջ պարտաւորական է կատարել զոնէ մի անգամ որի ծիսակատարութիւններն և կարգերը նախկին հեթանոսականն են, բայց ստացել են նոր-մահագական ձևակերպութիւն: Հաջի բազմաթիւ ծիսակատարութիւններից ամենաէականն երեք են, զոհաբերութիւն, տաւաֆ, այսինքն Քեաբէյի շուրջն եօթն անգամ պտոյտ գալ, և Սև քարի լիզելը: Աղօթքը, ծոմը, տասանորդն և հաջն իսլամի չորս սիւններն են համարւում: Բացի իսլամի չորս սիւններից մահմեդականը Ղուրանում զտնում է և ուրիշ պարտաւորութիւններ. դրական և բացասական (Ալլահի հրամաններն ու արգելքները): Գովաբանւում է բարութիւնն և ներողամտութիւնը, ինչպէս օրինակ զէպի աղքատ պարտապանները, այրիները, որբերը և այլն: Ստիպարութիւնն և վրիժառութիւնը չեն համարւում բարութեան

պէս կիւրակին են տօնում: Այդ օրը խանութներից մեծ մասը փակ է, իսկ ուրբաթ օրերը բաց:

խախտում: Հաւատի համար անհրաժեշտ է պատեւազմել («ջհադ», «ղազափաթ»): Արդեօք սրբազան պատերազմը պէտք է միայն պաշտպանողական լինի, թէ նաև յարձակողական, նոյնպէս և մահմեդականը պարտաւոր է արդեօք բոլորին բռնի կերպով ընդունել տալ իսլամական կրօնը — այդ հարցերը Ղուրանում շատ մոլթն են մնում: Բացարձակ հրաման, որ մահմեդականները նախադարձակ լինեն, Ղուրանում չկայ, և դորա համար նախկին ժամանակներում շատ մահմեդական աստուածաբաններ պաշտպանում էին այն միտքը՝ թէ սրբազան պատեւազմը քոյլասրուած է միայն ինքնապաշտպանութեան համար: Նոյն իսկ մեր օրերում Պետերբուրգի մօլլա ախունդ Բայազիտովը մամուլի միջոցով նոյն միտքը յայտնեց*), բայց նա այժմ բացառութիւն է կազմում: Խաչակրաց արշաւանքները, և հետևող պարագաները մահմեդականների մէջ զարգացրին մոլեռանդութիւն, և իսլամի ժամանակակից հաւատի ուսուցման վերաբերեալ զրբերը պաշտպանում են Աբու Խանիֆի կարծիքը, որ մահմեդականը հնարաւոր դէպքում պարտաւոր է յարձակողական պատերազմ մղել — անհաւատ-

*) Недѣля 1896, իսկ 1887 թ. գրքով «Իսլամի յարբերութիւնը զիտութեան և օտարազաւանների հետ»:

ներին կոտորելն աստուածահաճոյ դործ է *)։ Անհաւատներին բռնութեամբ իսլամին դարձնելն այժմ էլ աստուածահաճոյ դործ է համարուում և անհաւատ ճանաչուում են ոչ միայն կռապաշտները (ինչպէս հասկանում էր Մահմեդը) այլ և՛ քրիստոնեաներն և՛ հրէաները։ Պոռնկութիւնն արգելուած է, բայց ընդհանրապէս ցոփութիւնը չէ արգելուած, որովհետեւ թոյլատրուած է չորս օրինաւոր կին ունենար, և հարճեր ըստ ցանկութեան. բացի դրանից ցանկացած ժամանակ օրինաւոր կնոջ առանց մի որ և է պատճառի կարելի է հեռացնել, և նրա փոխարէն առնել նորը։ Սահմանուած է թլփատումն։ Խիստ շահագրգիռ խաղերն և զինին արգելուած են, ինչպէս և խոզի միսը, վերջինս արգելուում է ոչ թէ բարոյական, այլ առողջապահական տեսակէտից։ Բայց Ղուրանում և՛ բարոյականութիւնը, և քաղաքականութիւնը, և ա-

*) Այդ կարծիքը մահմեդականներից անցել է և արևելեան քրիստոնեաներին։ Լիվանում հպարտութեամբ ցոյց էին տալիս մի քանի քրիստոնեաներ, որոնք կեանքի նպատակ էին դրել սպանել առաջին պատահած մահմեդականին, և ասում էին, որ այդ մարդիկ հաւատի նախանձախնդիրներ են։ Մահմեդականներին ջնջելու այդ քաղաքականութիւնը նոյնպէս անուանուում է սրբազան պատերազմ «ջհադ», ինչպէս մահմեդականների մէջ։

առողջապահութիւնը բոլորն էլ միասին են հանդէս գալիս անբաժան, որպէս կրօնական պարտաւորութիւններ։ Ղուրանում այդ կրօնական պատուէրներին համընթաց դասաւորուած են մի շարք այնպիսի զուտ գործնական հրամաններ և արգելումներ, որոնք ղեկավարում են մարդու ամենօրեայ կեանքն ընտանիքում և դուրսը, ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնը, հասարակութեան անդամների փոխադարձ յարաբերութիւններն իրաւաբանական հարցերում (ինչպէս դատարանում, ունեցուածքի բաժանման ժամանակ ևլն), այդ բոլորից և կազմուել է մահմեդական իրաւագիտութիւնը (ֆիքհ), որն աստուածաբանութիւնից անբաժան է։

Ով Ղուրանի պատուէրը չէ խախտել, մահից յետոյ նա դրախտ կերթայ։ Մեռած մարդն ամենից առաջ գնում է երկու հրեշտակների մօտ, որոնք նրան հարց ու փորձի են ենթարկում, նրա արարքները կշռում են մեծ կշիռներով, յետոյ անց են կացնում երկու մազանման բարակ կամուրջով, որ կոչուում է Սիրաթ։ Մեղաւորները կտրուում են և ընկնում զժովք, որը դէպի խորն է տարածուում եօթն յարկով. ամենաթոյլ զժովքին պատիժը կրակոտ կօշիկներն է։ Ուղեկցողները կամուրջով զրախտն են անցնում։ Դրախտը ներկայանում է մի փարթամ այգի, լիքն ամե-

Նազեղեցիկ պտղատու ծառերով: Նրա ամէն կողմում կան մեղրածորան գետեր, աղբիւրներ, թանկազին քարերից շինուած պալատներ: Պալատներում տեղի ունեն անընդհատ խնջոյքներ, տրւում են տապակած թռչուններ և այլ համեղ ուտելիքներ: Բայց զրախտի զլսաւոր հմայքը— հուրիններն են: Կայ թուրքական մի կրօնական վէպերգ (Մուհամմեդիէ), որը, Դուրանի մէջ ցրուած բոլոր ապացոյցները ի մի բովանդակելով, ասում է այսպէս (թարգմանեց բնագրից ռուսերէն ռուսացապետ Սմիրնով)․

Դրախտի մէջ արդարներն օթեան կուռնենան:
Եւ նրանց՝ առատութեամբ կը տրուեն ամեն տեսակի համադամ խորտիկներ,
Իսկ իբրեւ սիրուհիներ՝ կը տրուեն միայն հուրիններ,
Որոնք կը փայլեն երկնային լուսոյ ամենամաքուր շողով:


Ասում են. «Եթէ նրանք լուսեղէն արարածներ են, Ի՞նչպէս կարող են զրկախառնուել և զգուել»:
Բայց այդ հարցին պատրաստ է մեր պատասխանը՝
Նրանց էութիւնը շօշափելի լոյս է,
Այնպէս, որ նրանցից կառելի է բաւականութիւն վայելել.

Համբուրել, զրկել և հոգին քնքշութեամբ սնուցանել

Իսկ ծննդաբերութեամբ էլ իրենց մարմնի նախկին գեղեցկութեան նրբութիւնները չեն կորցնում,

Խանդառութեան զգացմունքը բնաւ նրանց բաժին չէ,
Ամեն զիչեր վերստին կոյս են դառնում,
Միտքը չէ կարող ըմբռնել այդ քաղցրութիւնը,
Իւրաքանչիւրին կը տրուի հինգ հարիւր հուրի:

Մահմեդական աստուածաբանների կողմից փորձեր են եղել այդ բոլորը բացատրել այլաբանօրէն, բայց այժմ մերժուած է այդպիսի բացատրութիւն. և պաշտօնական հաւատի ռուսացման վերաբերեալ զրքերը (օրինակ Բիրկեվի — Բիրգելի — ընդունուած Թուրքիոյ զպրօցներում) ուղղակի արգելում են տարակուսանք յայտնել բոլոր զրախտային հիւրասիրութիւնների և բաւականութիւնների իսկութեան մասին:



ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՍԼԱՄԻ ՊԱՏԽՈՒԹԵԱՆ

Մահմեդի մահուան (632) լուրը տարածուելուն պէս՝ համարեա ամբողջ Արաբիան միանդամից թողեց իսլամը: Աբու Բէկրը, որը խալիֆ (այսինքն յաջորդող) էր ընտրուած Մեդինայում, կարողացաւ հաւատացեալ մեդինացիների և ոչ հաւատացեալ բայց իրենց օգուտն հասկացող, մէկկաշինների միջոցով արաբներին կրկին իսլամի կրօնին դարձնել: զրա համար նա անխնայ կերպով բոլոր անհնազանդներին կոտորեց, մինչև անգամ երբեմն տասնեակ հազարներով: Աբու Բէկրն արաբների անհնազանդութիւնը խաղաղացնելուց յետոյ՝ անմիջապէս նրանց պատերազմի տարաւ բիւզանդացիների և պարսիկների տիրապետութեանց դէմ: Պարսկաստանի և Բիւզանդիայի թուլութիւնն արաբների համար զաղտնիք չէր, նրանց յաղթելն անկարելի բան չէր ներկայանում, իսկ նուաճումներն, պատերազմական փառքը

և հարուստ աւարն անապատի զիշատիչ զաւակներին պէտք է իսլամի հետ կապէին: Օմարը (634—644) եռանդով շարունակեց նուաճումները, և այդպիսով իւր կեանքի վերջում բացի Արաբիայից, Ասիայում հրամայող էր Ասորիքին, Միջագետքին, Բաբելոնին և Պարսկաստանի արեւմտեան կիսին, իսկ Ափրիկայում՝ Եգիպտոսին, Բարկին, Տրիպօլսին: Օսմանի ժամանակ (644—656) նուաճուեց արեւելեան Պարսկաստանը մինչև Օկսուս, Կիպրոս կղզին, Կարթագէնի շրջանը: Արաբների մէջ եղած ներքին երկպառակութիւնների պատճառով աշխարհակալութիւններն առաջ էին գնում ընդհատումներով և մի քանի սահմանաշրջաններ էլ անջատուեցին: Օմայեան խալիֆաների Մուաւիա Ա-ի (661—680) օրով արաբներն անցան Օկսուսի այն կողմը—Թուրքեստան, մինչև Պէյկէնդ, Բուխարա և Սամարղանդ, և Հնդկաստանում հասան մինչև Փենջափ: Նրանք գրգռեցին Փոքր Ասիան, մօտեցան նոյն իսկ Կոստանդնուպօլսին, Ափրիկայում կրկին հասան մինչև Ալժիր: Երկրորդ անգամ բռնկուած ներքին երկպառակութիւնների շնորհիւ մի քանի սահմանաշրջաններ նորից անջատուեցին, բայց ներքին խռովութիւնները վերջանալուց յետոյ (693 թուից)՝ Աբդլ-Մելիք խալիֆի և նրա որդի Վալիդի ժամանակ (705—715) արաբներն Աւղանստանում

Համարեա անհաւատարի յաջողութիւններ են ունենում նոյնպէս և հիւսիսային Հնդկաստանում և Թուրքեստանում, Արևելքում Հայաստանում, Կովկասում և Փոքր Ասիայում — կենդրոնում արևմտեան Ափրիկայում մինչև Ուկրաինոսը, արևմուտքում էլ — Սպանիայում և հարաւային Ֆրանսիայում: Միմիայն Լեոն Իսաւրացու եռանդը քաջութեամբ յետ մղեց արաբներին Պօլսից և Փոքր Ասիայից (717—718) և Կարլոս Մարտելի եռանդը սահման դրեց Ֆրանսիայում արաբների յաջողութեանը (732), որովհետև Եւրոպան մահմեդականների աշխարհակալութիւնից ազատուեց:

Ի՞նչն էր նպաստում արաբների յաղթութեան: Անպայման ոչ կրօնական մոլեռանդութիւնը, որովհետև այդ չկար *): Մոլեռանդու-

*) Մեզ մօտ Ռուսաստանում անտեղեակ լինելով արևելեան պատմութեան՝ ընդունուած է ամեն բան մոլեռանդութեան վերագրել. հին արաբացիներին դատել ներկայ թուրքերով: Պատմելով այն մասին, թէ ինչպէս արաբները մոլեռանդութեան աղաղակով. «Չկայ Աստուած, բացի Աստուծուց» իբրագործում էին իրենց աշխարհակալութիւնները, մեր դասագրքեր կազմողներն աւելացնում են. «Յետոյ արաբների մոլեռանդութիւնն արագ թուլացաւ, նրանք հրաւիրում էին քրիստոնեաներին պետական ծառայութեան, պարագլուխ էին զիտութեամբ, փիլիսոփայութեամբ և այլն»: Մոլեռանդու-

թիւն կարող էին ունենալ այնպիսի մարդիկ, ինչպէս Աբու Բէկրը, աւելի ևս Օմարը, նոյնպէս և միւս մահաջիրները *), Մեդինայի բնակիչներն և դարձեալ որ և է ուրիշը: Բայց աշխարհակալների ընդհանուր խմբակցութիւնը, ինչպէս մենք տեսանք, իսլամին չէր համակրում և չէր ճանաչում ոչ Դուրանն և ոչ նրա պատուէրները: Կադիսեան (637) յաղթութիւնից յետոյ, որով Պարսկաստանն անցաւ արաբացոյ ձեռքը, երևաց որ աւարը բաժանելու ժամանակ դարձեալ մէկ մեծ բաժին մնացել էր: Օմար խալիֆը դրեց հրամանատարին այդ մնացորդ բաժինը բաշխել այն զինուորներին, որոնք Դուրանից անգիր զիտեն ամենաերկար հատուածները: Հրամանատարը կանչեց այն քաջերին, որոնք ամենից շատ նպաստել էին յաղթութեան, և հարցրեց նշանաւոր Ամր-էբն-Մադի-քարիբին, թէ ինչ զիտէ նա. «Ոչինչ», պատասխանեց նա, «ես ընդունել եմ իսլամն եմէ-

թեան այդ արագ թուլանալն այսպիսով ներկայանում է իսկապէս մի հրաշք: Իսկ այն հանգամանքը, որ ամենափառաւոր աշխարհակալութիւնները կատարել են Օմայեան խալիֆաներից ամենատանելիները, մեզ մօտ բոլորովին զանցառութեան են տալիս:

*) Մահաջիրներ կոչւում են մէկկազմիները, որոնք Մահմեդի հետ փախան Մեդինա 622 թ: Մահաջիր խօսքը նշանակում է «մասնակից փախստեան» հէջրիներ:

նում և չափազանց շատ եմ պատերազմել, միթէ՞
դեռ Ղուրանով էլ պէտք է պարապէի»։ «Իսկ
դ՞ու», հրամանատարը հարցրեց Բիշր Թափուցուն.
— «Ես աւելի զիտեմ, քան թէ Ամրը, ես զիտեմ.
յանուն զթասիրտ Աստուծոյ»։ Մական բացի այդ
խօսքերից, նա այլ ևս աւելի բան չիմացաւ։ Նոյն
իսկ մի դար անցնելուց յետոյ Ափրիկայում վե-
րաբնակուած յաղթող արաբներին դեռ յայտնի
չէր, որ Ղուրանն արդելում է զինի խմել։ Խա-
լիֆներից միայն առաջին չորսն էին նուիրուած
իսլամին։ Օմայեան խալիֆաներն էլ կամ ծայրա-
յեղ անտարբեր էին և կամ ուղղակի ոչ հաւա-
տացեալներ։ Որ Դամասկոսում նրանց պալատում
կային շատ քրիստոնեաներ, որոնք վարում էին
կառավարութեան կարեւոր պաշտօնները, այդ ու-
րիշ փաստերի համեմատութեամբ շատ չնչին է։
Երբ որ Եզիդ Ա. (680—683) պատերազմում էր
ճշմարիտ հաւատացեալների հետ, որոնք Աբդու-
լահ Իբն-Ջօբէյրի առաջնորդութեամբ ուժեղ կեր-
պով Մեզինայում կազմակերպուած էին և վեր-
ջապէս երբ քաղաքը վերցրուած էր, խալիֆի
հրամանատար Մօսլիմը նրա հրամանով մարդա-
րէի հին գաղափարակիցների մէջ երեք օր սար-
սափելի կոտորած արաւ, իսկ Եզիդի զինուորներն
իրենց ձիերը կապեցին Մահմեդի դերեզմանի մօտ
մզգիթում (683)։ Յետոյ հրամանատար Հիւ-

սէյնը պաշարեց էբն Ջօբէյրի իշխանութեան ներ-
քոյ եղած Մէկկան։ Պարսաքարով Բեաբէյի վրայ
էին թափում քարերի մեծ կոյտեր»։ Նոյն իսկ
յաջողուեց այրել քաղաքն և Սե քարը (Աստու-
ծոյ աջն երկրի վրայ) կրակից չորս կտոր եղաւ։
Եզիդի մահն և նոր սկսուող ներքին երկպառա-
կութիւնը դադարեցրին Մէկկայի պաշարումն.
բայց Աբդու Մեկիբ խալիֆի օրով (որը կատարել է
բազմաթիւ արտաքին փայլուն աշխարհակալու-
թիւններ) և նրա հրամանով հրամանատար Հա-
ջազը պաշարեց Մէկկան։ Նա նոյնպէս զբաղւում
էր Բեաբէյի վրայ քարեր ձգելով։ Մի անգամ
պաշարման ընթացքում կայծակը սպանեց 12
մարդ և բոլորին էլ վախեցրեց։ Հաջազը յետ ծա-
լեց փէշերը, ինքը քարը դրեց պարսի մէջ և շար-
ժեց ասելով. «Ոչինչ, ես այս կողմերում եմ
ծնուել և զիտեմ, որ այստեղ շատ յաճախ է
կայծակ պատահում» (692)։ Օմայեան խալիֆնե-
րից Վալիդ Բ. (743—744) այնքան առաջ զնաց,
որ հասարակական աղօթքին իւր փոխարէն հար-
ճերից մէկին էր ուղարկում, իսկ Ղուրանն իբրեւ
լաւ նշան խփելու իր էր գործ ածում։ Մնացեալ
Օմայեան խալիֆաները (բացառութեամբ մէկի)
ոչ միայն իրենք երբեք չէին պահում իսլամի
պատուէրները, այլ մինչև անգամ աշխատում
էին լուրջ արգելքներ յարուցանել դէպի իսլամն.

ունեցած խոնարհ վերաբերմունքի դէմ որովհետեւ օրէնքով մահմեդականը պարտաւոր չէ այլ ևս զանձարանին վճարել այն շահաւէտ հարկերը, որ վճարում են ոչ մահմեդականները: Իսլամի տարածման առանձին յաջող արգելք հանդիսացաւ Արաբիայի սահմաններն ընդարձակող նշանաւոր Աբդլ Մեքլիքի հրատարակած 700 թուականի օրէնքը: Այսպիսի և նման հազարաւոր փաստերից յետոյ կարելի է ասել, որ արաբների պատերազմական յաջողութեան պատճառը կրօնական մոլեռանդութիւնն էր: Ոչ, յաղթութիւնների պատճառը մի կողմից աւարներ թալանելու ծարաւն էր, որ առաջ էր բերում արաբների սովորական քաջութիւնը, և Մահմեդից սահմանուած խիստ կարգապահութիւնը, իսկ միւս կողմից արաբներին քաջ յայտնի Պարսկաստանի և Բիւզանդիոնի ներքին թուլութիւնը: Վեցերորդ դարի վերջից Պարսկաստանում տեղի ունէին խռովութիւններ, ներքին երկպառակութիւններ, վասալներն անկախ դարձան և չէին լսում Խոսրովին և բացի զրանից զրադաշտ հոգեւորականութիւնն անխնայ հալածանք էր մղում բազմաթիւ հերետիկոսների դէմ: Չնայած որ Բիւզանդիան ուժասպառ էր եղել պարսից դէմ մղած պատերազմներից, այնտեղ կարգ ու կանոնն աւելի էր, իսկ նրա գաւառներում—Եգիպտոսում, Ասորիքում և Մի-

ջաղեաքում ժողովուրդը նեղւում էր ծանր տուրքերից, յունական ազգային ամբարտաւանութիւնից և կրօնի անհամբերողութիւնից. ազգաբնակչութիւնն այնտեղ հերետիկոս էր: Այդ պատճառով այդ կողմերում ոչ ոք էլ ոյժ չէր գործ դնում, որպէս զի ընդդիմադրէ արաբներին. մինչև անգամ դէպի յոյներն ունեցած ատելութիւնից զրդուած ժողովուրդն ինքն էր հրաւիրում արաբներին և օգնում նրանց: Ընդհակառակը Փոքր Ասիան, որտեղ բնակւում էին իսկական յոյները, և որոնք միշտ կուռւում էին արաբների դէմ, երբէք երկար ժամանակով նուաճուած չէ եղել արաբներից, որոնք Կոստանդնուպօլսի պատերի տակ մի քանի անգամ անյաջողութիւն ունեցան: Յաղթուած ժողովուրդները մեծ խմբերով ընդունում էին իսլամը: Վճարելով զխահարկ և հողային տուրք, նրանք կարող էին ազատ կերպով իրենց նախկին կրօնը պահպանել: Մահմեդի օրէնքը զինւում էր միայն կռապաշտների—բազմաստուածեանների դէմ, իսկ քրիստոնեաները, հրէաները և զօրօսատրիացիները տանելի էին: Բայց այնուամենայնիւ նրանք հէնց իրենք էին ընդունում իսլամը: Հաւատուրացութեան գրեթե խաւոր պատճառներն էին նիւթական շահերը: Նորադարձը տուրք չէր վճարում, մինչև որ Օմայյեանները չէին յիշում և պահանջ անում. իսկ

Օմարի օրէնքով կառավարութիւնից օգտուում էր տարեկան հարկի որոշ քանակութեամբ: Նա ազատուում էր Օմարի օրէնքով սահմանուած արհամարհական վերաբերմունքից, և որոշ չափով հաւասարուում էր յաղթողներին: Պետական ծառայութիւնները նորան մատչելի են դառնում, որոնց նկատմամբ արաբները սկզբում անընդունակ էին հանդիսանում: առանձնապէս նա (նորադարձը) կարեւոր էր դառնում տուրքերի հարկային կառավարչի պաշտօնի համար, որի համար պահանջուում էր տեղական յարաբերութիւնների և տեղական լեզուների գիտութիւնը: Սակայն յաղթուածները կարող էին ընդունել իսլամը և ներքին համոզմունքով: իսլամը շատ կէտերում մօտիկ էր և՛ պարսկական *) և՛ քրիստոնէական կրօնին **), իսկ արաբների փայլուն համարեա հրաշալի յաղթութիւններն ուղղակի ապացուցանում էին նրանց հաւատի ճշմարտութիւնը:

*) Նորադարձ պարսիկը Որմզդէի Ահրիմանի կոիւր նկատում էր մահմեդական Ալլահի և Իբլիսի յարաբերութեանց մէջ: Պարսից հերետիկոսների մօտ շատ կէտեր կային, որոնք իսլամի հետ ընդհանուր առնչութիւն ունէին:

**) Յայտնի է, որ Եւրոպան երկար ժամանակ մահմեդական կրօնն ընդունում էր իբրեւ քրիստոնէութեան մի հատարակ աղանդ:

Եթէ իսկապէս իսլամը գերիշխում է քրիստոնէական կրօնին, այդ նշանակում է որ Աստուած ինքն նրան օգնում է, որ իսլամն ուղղափառ հաւատ է: Պարսիկների իսլամ կրօն ընդունելը չափազանց կարեւոր և օգտակար եղաւ նրա—իսլամի համար, անտարբեր արաբների փոխարէն՝ իսլամն ի դէմն շատ պարսիկների դտաւ հաւատացող մարդիկ և որովհետեւ զրանք կրթուած մարդիկ էին, ուստի և դարձան մահմեդական աստուածաբանութեան և զրա հետ կապուած իրաւադիտութեան հիմնադիրներ: Բայց միւս կողմից պարսիկների իսլամական կրօնն ընդունելուց փեսաներ էլ եղան. նրանք մասամբ անդիտակցաբար, մասամբ էլ զիտակցաբար իսլամի մէջ որոշ չափով ողիներ մտցրին, որոնք Մահմեդի դադափարների նկատմամբ օտար էին. մանաւանդ այդ ժամանակ եղաւ, երբ Օմայեան խալիֆայութիւնը քշուեցաւ (որոնց մնացորդները փոխան Սպանիա) և նրանց փոխարէն թագաւորեց Աբբասեան պարսկասէր հարստութիւնը (750 թ.-ից), որը պետութեան մէջ առաջնութիւն էր տալիս պարսիկներին:

Սուաջին Աբբասեանների դարը (մինչև Մուսթէֆէկիլի) (847) նշանաւոր դարձաւ արաբական կուլտուրայի զարգացմամբ, ծաղկեց փաճառականութիւնը, զեղարուեստը և գիտութիւնը: Ինչ վե-

րաբերում է քաղաքակրթութեան, այդ մեծ մասամբ հին պարսիկների, Սասանեանների (ինչպէս յայտնի է, սրանք շատ բան են իւրացրել Հնդկաստանից և Ասորիքից) քաղաքակրթութեան մնացորդներն էին: Ճշմարիտն խօսելով, չէ կարելի ասել, որ այդ քաղաքակրթութիւնը բարձրացել է ըստ որակի. իրանական մահմեդական ճարտարապետական շինութիւնները հին պարսկականից աւելի ստոր են, նոյն կերպ և մահմեդական գործուածքները՝ մետաքսից և բրդից, տնային կահկարասիքը և դարդարանքները—չնայած իրենց զեղեցկութեան, չեն կարող հին գործուածքներին հաւասարուել. բայց և միւս կողմից մահմեդական շրջանում իրանի արտադրած ապրանքների պահանջը մեծացաւ և շատացաւ գործածողների թիւը: Մահմեդական իրանական արդիւնաբերութիւնը ծառայում էր ոչ թէ գործնական պահանջների բաւականութեան, այլ պճնասիրութեան համար. արդիւնաբերութեան գլխաւոր առարկաներն էին—մետաքսէ գործուածքներ (կիսէա մարմաշ, մոսեսլին—խիստ նուրբ բամբակէ գործուածք, ատլաս, մուար, դիպակեդէն), գէնք (թրեր, դաշոյններ, օղազրահ), ասեղնագործութիւն քաթանի և կաշու վրայ, պուզմէնտեայ աշխատութիւններ, գորգեր, շալեր, դրամահատութիւն, փորագրութիւն, քանդակագործու-

թիւն, փղոսկր և մետաղներ, մօզաիկ աշխատութիւններ, աղնիւ կաւէ և ապակէ շինուածքներ, գործնականի կողմից՝ բամբակից, մահուդից և ուղտի բրդից պատրաստած նիւթեր: Ժամանակակից եւրոպացին հիացմունքով է կանգնում և նայում այդ շրջանի հրաշալի պատկերներին, իսկ մահմեդականներն այժմ ևս հպարտութեամբ մատնացոյց են անում այդ ժամանակի վրայ, ինչպէս իրենց տիեզերական առասպելական փառքի ժամանակի, որ և ամեն լաւ բան վերագրում են Հարուն-էլ-Ռաշիդի (786—809) թագաւորութեան և նորա անձնաւորութեան, որ սակայն հեռու է ճշմարտութիւնից: Առաջին Աբբասեանների դարը նոյնպէս յայտնի է ինչպէս իսլամի կրօնական մտքի ամենախիստ լարուած շրջան, ինչպէս աղանդաւորների ուժեղ շարժման շրջան. պարսիկներն իրենց ձեռքը ձգեցին մահմեդական աստուածաբանութիւնն և դաւանաբանական կենդանի կռիւ բարձրացրին, որի ընթացքում աստիճանաբար չորս ուղղափառ վարդապետութիւն առաջացաւ և բազմաթիւ հերետիկոսական աղանդներ^{*)}: Ոչ թէ մէկի, այլ չորս ամբողջ ուղղափառ վարդապետութեանց կազմակերպութիւնը

*) Աղանդներ առաջ եկան դեռ ևս Օմայեանների, իսկ դարգացան Աբբասեանների ժամանակ:

կապ ունի աւանդութիւնների մշակման հետ: Ղուրանը՝ շատ կենսական հարցեր վճռելիս թերի երեւոյ, մանաւանդ իրաւաբանական հարցեր, այգպիսի դէպքերում ստիպուած էին զիմել աւանդութիւններին, թէ ի՞նչ է ասել Մահմեդն այդ հարցի նկատմամբ: Աւանդութիւնների բազմաթիւ ժողովածուներ կան, բայց նրանց մեծամասնութիւնը շինծու են. ինչպէս օրինակ հաղիսների յայտնի ժողովող Բուխարացին (մեռել է 870 թ.) ասում է՝ որ ինքը լսել է մինչև 600,000 աւանդութիւն, բայց իսկական ճանաչել է հազիւ 7,275: Զանազան սիստէմներ, որոնք իրաւաբանական մշակութեան և հաղիսների մեկնութեան համար հիմք էին ծառայում, պատճառ են եղել առաջ բերելու ուղէմների չորս շիօլա—Խանիֆեանների, Շափիեանների, Մալիկեանների, Խանբալեանների: Նրանք բոլորն էլ դէպի Ղուրանն երկիւղածութեամբ էին վերաբերում, ընդունում էին նրան իբրեւ բարձրագոյն իմաստութիւն, իբրեւ անձեռագործ, անսկիզբն, և ստրկաբար իւրաքանչիւր խօսք բառացի էին ըմբռնում, թէև «Աստուած լսում է» «Աստուած նստած է դահի վրայ» խօսքերով: Աստուծուն վերադրում էին մարդկային մարմնոյ անդամները: Իսկապէս նրանց մէջ տարածայնութիւնը կայանում էր իրաւաբանական հարցերի տարբեր հասկացողութիւնների նկատ-

մամբ: Չորս շիօլաներն էլ տալիս են մեզ խորամանկութիւնների զարմանալի օրինակներ, Ղուրանն անդիտակցաբար յարմարեցնելով քաղաքակիրթ կեանքի պահանջներին. աւելի առաջագէմ դպրոցը (շիօլա) ներկայանում է Աբու-Խանիֆեաններին և ապա Շափիեաններին: Մալեկը պահանջական է և ենթարկւում է օրէնքի տառացի հասկացողութեան, Իբն-Խանբալ անկիրթ և անհամբերատար է, իսկ Աստուծոյ մասին ունեցած հայեացքներով հասնում է բնազանցութեան: Ոչ ուղղափառ դաւանութեան պատկանող աղանդների թիւը մահմեդականները չափազանցութեան հասցրած հաշւում են 73, բայց բոլորից կարեւորագոյն են խարիջեանները, շիաները և մոթաղիեանները: Առաջին երկուսն ոչ միայն աղանդներ էին, այլ և քաղաքական ընկերակցութիւններ: Խարիջեան աղանդն էր ռամկական, բաղկացած հասարակ դասի մարդկանցից, որոնք զրտնում էին, որ առանց խալիֆի էլ կարող են եօլա գնար իսկ եթէ հարկաւոր է ունենալ, այն ժամանակ ոչ թէ պէտք է լինի նա ժառանգաբար, այլ ընտրութեամբ, չսահմանափակուելով ոչ մի դասակարգային և ցեղական իրաւունքներով: Խարիջեաններն երկար ժամանակ կուռում էին ինչպէս Օմայեանների, նոյնպէս և Աբբասեանների դէմ, և խալիֆի իշխանութիւնը քայքայում էին

զանազան տեղերում մանաւանդ Միջագետքում: Շիաներ էին կոչւում Ալիի տան կուսակիցները *), որոնք մերժում էին առաջին երեք խալիֆաների հեղինակութիւնն և նրանց մասին եղած աւանդութիւնները **): Որովհետեւ Ալիականներն Օմայյաններին և Աբբասեաններին վիրաւորուած էին իրենց իրաւունքների նկատմամբ, ուստի հանդէս էին զալիս իբրեւ կառավարութեան դէմ բողոքող մի տարր, զրա համար և նրանց կողմնակիցների հետ միացան կառավարութիւնից դժգոհ պարսիկներն էլ, թէև սրանց դժգոհութեան պատճառը կառավարութեան արաբական լինելն էր: Այսպիսով երևաց, որ շիա աղանդաւորներն առաւելապէս բաղկացած էին պարսիկներից, որոնք մարգարէի օրինական ժառանգներին ընդունելով, արտաքուստ աւելի ուղղափառ էին երևում քան թէ արաբները: Բայց միայն արտաքուստ: Աղանդը բաժանուեց շատ տեսակների, որոնցից մի քանիսը հազիւ իրաւունք ունէին մահմեդական կոչուելու. որովհետեւ նրանց մէջ չափազանց ծաղկել էին հին զրադաշտեան, մանիքեան, բարդեսեան, բուդղա-

*) Ալին էր Մահմեդի փեսան, նորա Ֆաթմա զրատեր ամուսինը:

**) Աւանդութիւն արաբերէն կոչւում է սոննէ կամ հադիֆ:

յական և այլ դադափարներ: Հնդկապարսկական շիաների ազդեցութեան ներքոյ մահմեդական ճրջնաւորութիւնը դարձաւ համաստուածային վարդապետութեան հետեւող զիտութիւն (zeocoփia), որը նոյնպէս իսլամական չէր, և յետոյ մեծ ազդեցութիւն արաւ ամբողջ իսլամի վրայ: Մօթազիլիտները կողմնակից էին մարդու կամքի ազատութեան մասին եղած ուսման, որը հերքւում էր ուղղափառ դատողութիւններով և ընդունում էին «Ղուրանի ստեղծագործութեան» դաւանութիւնը, — դաւանութիւն, որով Ղուրանի մէջ եղածները գուտ ճշմարտութիւններ չեն ընդունում: Շնորհիւ իրենց դէպի կրօնն ունեցած ընդարձակ հայեացքների, ծանօթացան յունական փիլիսոփայութեան և մեծ յափշտակութեամբ պարապում էին: Մամուն (813—833), Մուտասիմ (833—842) և Վատէկ (842—847) խալիֆները մօթազիլականութիւնը պետական դաւանութեան աստիճանի հասցրին: Այն ժամանակ փիլիսոփայութեամբ և առ հասարակ յունական զիտութեամբ պարապելը խալիֆայութեան մէջ մեծ ծաւալ և բարգաւաճումն ստացաւ, և խալիֆներն ամէն տեղ բռնի մտցրին մօթազիլականութիւնը: Կառավարութիւնը չորս ուղղափառ դաւանութիւնների հետեւողներին, ինչպէս և նրանց հիմնադիր սուրբ իմամներին հալածեց բնա-

գանցութեան, բազմաստուածութեան համար և ինչ
դեռ Մանսուրի օրով (754—775) գանահարուէց
Մալիքը, Մուտասիմի օրով էլ ծեծուեց իբն
Համբալը:

Մութէվէկիլի գահ բարձրանալու օրից (847)
վերջանում են խալիֆայութեան մէջ ազաա գա-
ղափարներն և սկսում է նոր շրջան, ուղղա-
փառութեան յաղթանակ, հալածանք հերետիկո-
սութեան, այլադաւանութեան (քրիստոնէութեան,
հրէութեան և այլն), փիլիսոփայութեան ստոյգ և
բնական գիտութիւնների դէմ: Այդ կերպ հան-
գամանքների փոխուելու պատճառն այն էր, որ
շնորհիւ ապստամբութեան, պարսիկների քաղա-
քական անկախութեան ձգտումների և պրիտո-
րիայի թուրքերի կամայականութեան՝ խալիֆների
իշխանութիւնն ընկաւ, այն ժամանակ խալիֆ-
ները (յատկապէս նրանցից առաջինը Մութէվէկ-
իլը) հասկացան, որ այժմ իրենց համար օգտա-
կար է զիմել ուղղափառ հոգեւորականութեան
պաշտպանութեան և խոյս տալ նրանց հետ վիճաբա-
նելուց: Յօգուտ հոգեւորականութեան խալիֆները
հարկադրուած էին թողնել կամայականութիւնն
և եռանդով հալածել բոլոր ոչ ուղղափառ (ինչ-
պէս փիլիսոփայութիւնը) և առ հասարակ կաս-
կածելի ուսմունքները (ի թիւս որոց և ոչ աս-
տուածաբանական գիտական պարապմունքները):

Չէ կարելի ընդունել, որ գիտութիւնների ուսումն-
նասիրութիւնը, նոյն իսկ բնական, հակասէին իս-
լամի սկզբունքներին, զոնէ Ղուրանն այդպիսի
բան չէ արգելում: Բայց հոգեւորականութեան,
որն «անձեռագործ» Ղուրանի մէջ տեսնում է
խրաքանչիւր գիտութեան ուղ և ծուծը, գի-
տութիւնների համադրումարը, բոլոր ուրիշ գի-
տութիւններն աւելորդ, պարսաւելի և հալա-
ծանքի արժանի էին թւում: Ի միջի այլոց մա-
տեմատիկան, որ մէկ սրամիտ աստուածաբանի
ասելով վնասակար է, քանի որ սովորեցնում է
մարդուն ամէն դատողութեան ժամանակ յենուել
ապացոյցների և բանականութեան վրայ և դրա-
նով թուլացնում հաւատքի ոյժը: Եւ այսպէս
ուղղափառութիւնը գերիշխում էր խալիֆայու-
թեան մէջ: Բայց այնու ամենայնիւ խալիֆների
իշխանութիւնը հետզհետէ ընկնում էր: Արեւել-
քում, այսինքն Պարսկաստանում, կազմակերպուե-
ցան ինքնուրոյն իշխող ցեղեր (Սաֆարիաններ,
Սամանեաններ և յետոյ Ղազնեվիաներ), և Պարս-
կաստանն ազատուեց խալիֆների ձեռքից: Իսմա-
յէլեանների շիա աղանդը, որ Մադալլահ իբն
Մէյմունի (շուրջ 864) ձեռքով շատ խորամանկ
ձևով կազմակերպուած էր զադունի ու նենգամիտ
պատերազմ մղելու իսլամի դէմ, նոյնպէս զօրեղ
քաղաքական ոյժ դարձաւ—մանաւանդ նորա մէկ

ճիւղը—Քարմաեանները: Երբ որ 890 թ. Քարմաեաններն Իրակում շինեցին Դար-օլ-Հիճրա ամուր ամրոցը՝ այդ օրուանից «բոլորն էլ երկիւղ էին կրում Իսմայէլականներից» իսկ նրանք ոչ ոքից» ինչպէս ասում է արաբացի պատմաբան Նոբէյրը: Քարմաեաններին 909 թուին յաջողուեց Տիւսիսային Ափրիկայում հիմնել Փաթիմեան իշխող տունը, որը շուտով Աբբասեաններից խլելով Եգիպտոսը՝ այնտեղ էլ հաստատեց իւր իշխանութիւնը: Այդ ժամանակ Քարմաեանների զլխաւոր Աբու-Թահիրն իսկական տէր էր Իրակի, Արաբիայի և Ասորիքի. հաճը վերջացնելու նպատակով նա կանոնաւոր կերպով կողոպտում էր ուխտազնացների կարաւանները: Քարմաեանները 930 թ. կողոպտեցին Մէկկան, Սև քարն էլ տարան. միայն քսան տարուց յետոյ Եգիպտոսի Փաթիմեանների խալիֆի Թոյլտուութեամբ մեծ փրկանք առնելուց յետոյ սրբութիւնը վերադարձրին մահմեդականներին: Երբ հարևան արևմտեան Պարսկաստանում առաջ եկաւ շիաների ինքնակամ Բուիդեան ցեղը, Աբբասեան խալիֆն իւր թուրք զօրապետների և Միջագետքի էմիրների ձեռքին խաղալիք էր դարձել: Բուիդեները 945 թ. տիրեցին Բաղդատին: Այդ շիա սուլթանները, թէև քաղաքական հաշիւներից զրդուած Փաթիմեաններին հակակշռելու համար իրենց անուանում

էին խալիֆայութեան վասալներ, սակայն իրօք նրանք խալիֆների հետ վարւում էին ինչպէս գերիների հետ, բոլորովին անարգանքով և աստուութեամբ: Աբբասեանների խալիֆը դարձաւ սովորական քահանայապետ, առանց քաղաքական իշխանութեան, յաճախ նոյն իսկ նիւթական միջոցներից զուրկ: Բուիդեանների հարիւրամեայ տիրապետութիւնն և շիաների յաջողութիւնները Բաղդատում յետադիմութեան ոյժով խալիֆներին միացնում էին ամենախիստ ուղղափառութեան հետ: Իսմայէլականութիւնը տասն և մէկ երորդ դարի առաջին քառորդում իրանից մի նոր թշնամական ճիւղ առաջ բերեց իսլամի դէմ, իսկ նոյն դարու վերջերում էլ նշանաւոր Խաշշեանների մի ուրիշ ճիւղ, որոնք Կասպից ծովի մօտ և Լիվանում իրենց ունեցած բերդերից 150 տարի իսլամը լարուած սարսափի մէջ պահեցին: Բայց Խաշշաշեանների երևալուց առաջ ամբողջ մահմեդական Ասիային սարսափելի դժբախտութիւն վրայ հասաւ թուրք Սելջուկների կողմից, որոնք 1036 թ.-ից սկսեցին իրենց աշխարհաւեր աշխարհակալութիւնն և ասիական մահմեդական քաղաքակրթութեանն առաջին մահացու հարուածը հասցրին: 1055 թ. Սելջուկների զլխաւոր Տուղրիլ-բէգը գնաց Բաղդատ և խալիֆին ազատեց հերետիկոս Բուիդեանների

իշխանութիւնից, իսկ նրանց փոխարէն ինքը սուր-
թան դարձաւ. խալիֆը չկորցրեց իւր տիրոգոսը,
սակայն համարեա միայն հոգեւոր պետ մնաց. իւր
քաղաքական իշխանութիւնից շատ քիչ բան վե-
քականեցնեց. իւր սեպհական շահերն այժմ շատ
աւելի, քան առաջ, հարկադրեցին հոգալ վերա-
կանգնելու իսլամի երկրներում մոլեռանդ կրօ-
նական ոգին և արմատախիլ անել ազատամտու-
թիւնը: Նրա այդ ձգտումներին Սելջուկները սի-
րով աջակցեցին: Թուրքերի բուծ բնութիւնը, որ
դատողութիւններ չէ սիրում, մեծ համակրան-
քով իսլամ ուղղափառութեան կողմը դարձաւ,
և դէպի իւրաքանչիւր ինքնուրոյն մտածողու-
թեան երեւան դալը թշնամութեամբ լցուեց: Թուրք
բռնապետութիւնն էլ չկարողացաւ աջակցել ազատ
մտքի զարգացման. մի կողմից էլ երկրի թշուա-
ռութիւններն էին ճնշող կերպով ազդում մար-
դու եռանդի վրայ: Սելջուկներն այնպէս դասա-
ւորուեցին, որ պարսպի պէս Ասիան Եւրոպայից
կտրեցին և արգելք եղան մահմեդական և քրիս-
տոնեայ ազգերի մտքերի խաղաղ փոխանակու-
թեան: Վրայ հասնող խաչակրաց արշաւանքներն
և այն իսլամական անհամբերատար ոգին, որով
մահմեդական աշխարհն աչքի է ընկնում այժմ
էլ, երկու կողմից առաջ բերին խառնութիւն, առեւու-
թիւն գէպի առաջ խաղացող քրիստոնեաները:

Իսլամական աշխարհն արհամարհելով և ա-
ռելով քրիստոնեաներին՝ մինչև այդ ժամանակ
դեռ ևս իւր կուլտուրական առաւելութեամբ կա-
րող էր նրանցից աւելի հռչակուել, թէև ասիա-
կան-մահմեդական կուլտուրան և կրթութիւնը
խիստ կերպով ընկաւ Սելջուկների արշաւանքի և
երկու դար միմեանց հետեւող ներքին խռովու-
թիւնների պատճառով, թէև տգէտ և բարբարոս
Եւրոպան այդ կողմից նրանցից աւելի ընկած էր:
Սակայն ներս խուժեցին ճինգիզ խանի և նրա
յաջորդների մոնղոլական գնդերը XIII դարում
և ապա Լէնգթէմուրինը XIV դարում: Մահմե-
դական Ասիան անապատ դարձաւ և բնակիչներն
աղքատացան. կրթուած դասակարգերը բնաջինջ
եղան, և որովհետև մահմեդականների գիտու-
թիւնն արաբական լեզուով էր և ընդհանրութեան
համար օտար, այդ պատճառով էլ արեւելքում
անյայտացաւ. նիւթական կուլտուրան էլ ընկաւ
և այդ ևս անընդունակ եղաւ նախկին փայլով
վերածնել, որովհետև զործարաններն աւերուե-
ցան և հմուտ բանուորներն էլ սպանուեցան:
Թշուառութիւններն մարդկանց մէջ առաջացրին
հաւատքի պահանջ, իսկ կրօնական միտքը բնա-
կանաբար յուռետես բնաւորութիւն ընդունեց:
Պրա համար և սելջուկների ու մոնղոլների թը-
շուառ շրջանը ծայրայեղ կերպով ազդեց Սոֆիան

վարդապետութեան վրայ, մանաւանդ Պարսկաստանում, որն և ամենասատիկ հարուածն կրեց: Սուփիական զաղափարներն այնքան ժողովրդականացան, որ նոյն իսկ մեծ չափով մուտ գործեցին իսլամի պաշտօնական դաւանաբանութեան մէջ և սիւննիների աշխարհում բազմաթիւ հետեւողներ գտան: Թուրք-Օսմանների Փոքր Ասիայում նոր հաստատուած պետութեան մէջ (1300) սուփիեան դերվիշականութիւնը ժողովրդի կողմից նոյնչափ լաւ ընդունելութիւն գտաւ, ինչպէս և իրանում:

Իսլամական ժողովրդների պատմութեան վերջին կարեւոր վայրկեանն էին XV դարի վերջի և XVI դարի սկզբի քաղաքական անցքերը, որոնք մահմեդական երկրներին այն քաղաքական սահմաններն տուին, որոնց մէջ մնացին մինչև XIX դարը, և իսլամի վրայ վերջնականապէս բնորոշ կնիք դրին, որով մենք այժմ նրան ճանաչում ենք: Սկսենք մեր տեսութիւնն արեւմուտքից: Մավրները (1492) քրիստոնեաների ձեռքով հալածուեցին Սպանիայից և անցան հիւսիսային Ափրիկա: Իսլամական արեւմուտքի մասին կարելի է ասել որ, չնայած նրա մէջ առաջ գնացած փիւսոփայութեան և գիտութեան, նա այնուամենայնիւ ընդհանրապէս աչքի էր ընկնում ուղղափառութեամբ: Մավրիտանական պետութիւններն,

Եւրոպայից արտաքսուելուց յետոյ, քրիստոնեաների դէմ զինուում են ամենախիստ կրօնական մոլեռանդութեամբ, և ատելութեամբ, այդ ատելութիւնը յարատեւում էր շնորհիւ ծովահէնների մշտական պատերազմների, որոնք տեւեցին մինչև ներկայ դարի սկզբները: Հիւսիսային Ափրիկայից իսլամը տարածուեց դէպի հարաւ նեգրերի մէջ, այդ պրոպագանդան Եգիպտոսից ևս եկաւ:—Արեւելեան Ափրիկայում Եգիպտոսը (1517), Ասիայում Ասորիքը (1516), Արաբիան (1521) և Միջագետքը (1534) Փոքր Ասիայի հետ, որ նուաճուած էր XIV և XV դարերի ընթացքում, Եւրոպայում ամբողջ Բալկանեան թերակղզին սլաւոնների (1389) և յոյների (1454) երկրներով և Ղրիմը (1475) ընկան Օսմանեան թուրքերի ձեռքը: Թուրքերի սուլթանը (1517) դառնում է ուղղափառների խալիֆ, թուրքաց ազգն և պետութիւնը մահմեդականութեան որորան: Թուրքերը՝ շնորհիւ իրենց յատուկ բուրժ մտածողութեան և մշտապէս հարեան քրիստոնեաների հետ ունեցած կռիւների, դառնում են իսլամի ամենամոլեռանդ և ամենաուղղափառ ժողովուրդը: Թուրքաց տնտեսական կեանքի, սուլթանի և հոգեւորականութեան բռնապետութեան ներքոյ միտաւոր կեանքն ոչնչանում է: Կրօնական կեանքի կողմից թուրք օսմաններին գերադասեցին թուրք

ուղբէկները, որոնք ամբողջ Թուրքաստանին տիրապետեցին սկզբում 1451 թ. և ապա վերջնականապէս XVI դարի սկզբներում: այստեղի ուղղափառները, ինչպէս իսկական խելքի պակասութեան պատճառով, այնպէս էլ հարեան նախանձոտ պարսիկների դէպի շիա աղանդն ունեցած հակադիր ոյժի շնորհիւ ծայրայեղ մոլեռանդութեան հասան և առաջ բերին սնոտիապաշտ յարգանք դէպի հոգեորականութիւնն, որի հեղինակութիւնից իրենք խաներն անգամ չկարողացան ազատուել: Պարսկաստանում Իսմայէլ Շահ Սեֆին 1499 թ. հիմնեց Սեֆիանների շիա հարստութիւնը, շիա աղանդը պետական կրօն յայտարարեց և ամբողջ Պարսկաստանը միացրեց այդ զրօշակի տակ: Նրան իւր Թագաւորելու գործում օգնեցին Ազրբեջանի թուրք շիաները, որոնք թուրքական ցեղի խմամէութեան շնորհիւ ճշմարիտ կերպով անձնատուր էին եղած իրենց հաւատին, մինչդեռ իսկական պարսիկները միշտ աչքի էին ընկնում դիտակցական անտարբերութեամբ: Իսմայէլ Շահն իւր մայրաքաղաքը (Թաւրիզ) ընտրեց թուրք ժողովրդի մէջ. նա եռանդով կռուեց իւր շիա-շահութեան համար թուրք սիւննիների (օսմանցոց և ուղբէկների) դէմ: Այդ պատճառով պարսից նոր պետութեան մէջ առաջուայ ազատ մտածող շիա աղանդի փոխարէն

ծաղկեց անհամբերատար մոլեռանդ շիա աղանդը: հոգեորականութիւնն առանձին հոգացողութեամբ աշխատում էր իւր հօտի մէջ պահպանել մոլեռանդութիւնը. մահմեդական աշխարհում, որտեղ իրաւագիտութիւնը կապուած է աստուածաբանութեան հետ, ուլէմները վարում են և աշխարհական աստիճանաւորների դերը. շիա աղանդի տիրապետութեան օրից շիա հոգեորականութեան առաջ, որ մոռացուած և հալածուած էր, բացուեցաւ մի շարք ազդեցիկ և շահեկան պաշտօններ, և այդ օրուանից շիա հոգեորականութեան շահերը պահանջում էին, որ հօտի մէջ պահպանուէր ամենամաքուր շիա ուղղափառութիւնը, կոյր հաւատ դէպի շիա կրօնի դաւանաբանութիւնն և ատելութիւն դէպի բոլոր նորութիւններն և ազատ մտքերը: Կառավարութեան շնորհիւ շիա ուլէմներին յաջողուեց պարսիկների մէջ պատուաստել ջերմ ատելութիւն դէպի սիւննիները (այսինքն դէպի Օսմանեան թուրքերը, որոնք մշտական քաղաքական թշնամիներ էին պարսիկներին) և մասամբ դէպի ուրիշ օտարադաւանները. նոյնպէս յաջողուեց ժողովրդի մտաւոր կեանքը կանգնեցնել և եթէ ուլէմներին բախտը չժպտաց պարսիկների մէջ սպանել հարցասիրութեան ոգին և նրանց նոյնպիսի սահմանափակ մոլեռանդներ դարձնել, ինչպէս թուրքերն են,

զրա պատճառն Իրանի Ժողովրդի կենդանի և խելօք բնութիւնն էր: Յամենայն զէպս շիա ազանդը պետական կրօն հրատարակուելուց յետոյ դադարեց լինել այն, ինչ որ էր նախկին դարերում: Պարսկաստանի մահմեդականները նուաճեցին 1526 թ. Հնդկաստանը, որտեղ այնուհետև մահմեդականների թիւը հասաւ ամբողջ աշխարհի մահմեդականների մի ութերորդ մասին: Հրնդկաստանից իսլամը տարածուեց մալայցիների մէջ Հնդկական արշիպելագով: Իսլամի ամենահիւսիսային—Կադանի, Աստրախանի և Սիբիրի նահանգները XVI-րդ դարում կորցրին իրենց ինքնուրոյնութիւնը:

Վերջին երեք (մինչև անգամ հինգ) դարերի ընթացքում իսլամը մնաց քարացած, անշարժ և յառաջադիմութեան թշնամի: XVI դարում Հրնդկաց թագաւոր Էկբերի և անցեալ դարու կիսին Վահհաբեան արաբների բարեկարգելու նպատակով արած մի քանի փորձերն ապարդիւն անցան. պարսից մի քանի աղանդաւորների փորձերը, որոնցից ամենակարեւորն է Բաբիականներինը, իսկապէս հակաիսլամական էին: Պետական կազմակերպութեան մէջ առաջացաւ ներքին ուժեղ քայքայում: Արեւմուտքում Օսմանեան պետութեան մէջ ժողովուրդը պառակտուեց, ընկաւ նիւթապէս և մտաւորապէս շնորհիւ Օսմանեան

Թուրքերի տիրապետութեան: Արեւելքում Պարսկաստանում, նա նեղոււմ էր արեւելեան թուրքերից և սիւննի ուղղեկներից, որոնք արշաւանքներ էին գործում, նոյնպէս և ներքին կռիւներ առաջ բերող տեղական շիա թուրքերից: Իրանի համար առանձին դժբախտութիւն էր Նադիր Շահի (1736—1747) վայրենի տիրապետութեան շրջանն և ներկայ Վաջար ցեղի արիւնշալի թագաւորութիւնը (Աղա-Մահմադ 1779—1797): Արեւելքը, չնայած իւր ներքին քայքայման, այնու ամենայնիւ քաղաքականապէս ուժեղ էր Արեւմուտքից, այդ պատճառով արհամարհում էր նրան և չէր կամենում մի բան իւրացնել նրանից: Բայց նորագոյն ժամանակներում երբ անգլիացիք Մեծ մոնղոլների պետութիւնը կործանեցին, երբ ռուսները խլեցին նահանգներ Տաճկաստանից, Պարսկաստանից և ուղղեկներից, իսկ Ֆրանսիացիք ճնշեցին Եգիպտոսն և յետոյ տիրապետեցին Ալժիրը, մահմեդական արեւելքը զարթնեց և իւր գոյութեանը սպառնացող վրտանդի երկիւղից՝ սկսեց ականայ սովորել փրանսիական զիտութիւնների, կարգեր և սովորութիւններ: Նրա առաջ դրուած է երկսայրի խնդիր, կամ կերպարանափոխուել և եւրոպական ազգերի շարքը դասուել և կամ մնալ հին կարգերով և ոչնչանալ:

Իսլամի ժողովուրդների պատմութեան այս տեսութիւնից յետոյ ներելի է հետեւեալ հարցը տալ. Ի՞նչ էր իսլամի պատմական եւ կուլտուրական դերը: Նա ո՞րչափով է ազակցել մարդկային յառաջադիմութեան:

Իսլամն արաբներին անտարակուսելի ծառայութիւն է ցոյց տուել. նա նրանց համախմբել է և դրանով ոյժ տուել: Դեռ Մահմեդից առաջ մի քանի փորձեր են եղել արաբներին քաղաքականապէս համախմբելու, բայց բոլորն էլ անյաջող են անցել. իւրաքանչիւր արաբական ցեղ խիստ անհատականութեամբ էր ներշնչուած և չափազանց հպարտ լինելով՝ չէր կարող բոլոր ցեղերի վրայ մի ցեղի գլխաւորութիւնը ճանաչել: Մահմեդը համախմբեց հաւատացող արաբներին կրօնի դրօշակի տակ: Նոր դաշնակցութեան մէջ գլխաւորութիւնն անկասկած պատկանում էր Մահմեդին, —բայց ինչո՞ւ, ոչ թէ շնորհիւ նրա ազդայնական ծագման, այլ կրօնի տեսակէտից —որ նա մարգարէ էր: Այդպիսի գլխաւորութեան հեշտութեամբ կը հպատակուէր և ոչ հաւատացողների մեծամասնութիւնը. ազգային հպարտութիւնը նրանից չէր ընկճուում: Ճիշտ է սկզբում մի առ ժամանակ, ինչպէս զիտենք, ոչ հաւատացող արաբներն աշխատում էին բաժանուել իսլամի իշխանութիւնից, բայց առաջին իսկ յաղ-

թանակներից յետոյ, որոնցով նրանք հարստացան, մենք այլ ևս նրանց բողոքը չենք տեսնում: Եւ այդպէս անկասկած իսլամը մեծ ծառայութիւն արաւ արաբների ցեղին, որն իսլամի շնորհիւ խեղճութիւնից աշխարհային փարթամութեան հասաւ:

Ինչպէս զիտենք, աշխարհակալները պարսիկների և բիւզանդացիների ընդարձակ տիրապետութիւնները միացրին և ժողովուրդն ազատեցին նախկին անկարգութիւններից: Կեանքն եռում էր նոր թագաւորութեան մէջ, որտեղ յաղթուած ժողովուրդը կանգնած էր կուլտուրական բարձր աստիճանի վրայ: Արդեօք այդ ծառայութիւնը պատկանում էր իսլամին, թէ արաբները համախմբող իշխանութեան և կամ նրանց յաջող քաղաքականութեան: Այդ հարցը վիճելի է: Մի կողմից այսպիսի դատողութիւն է առաջարկուում —կուլտուրական կեանք առաջ բերելու համար հազիւ թէ հերիք լինի արաբների բարուք կառավարութեան ներքոյ ազգերի մեքենայական միացումն, շատ օգտակար կը լինէր և հոգեւոր միութիւնը, իսկ համախմբող հոգեւոր ոյժ կարող էր ունենալ միայն իսլամն իւր խիստ միաստուածեան պարզութեամբ, որն իւր մէջ չէ բովանդակում դաւանաբանական խճճուած նրբութիւններ, — ուրիշ որ և է կրօն չէր լինիլ այնպէս հան-

րամատչելի, այնպէս բոլորին հասկանալի, ինչպէս իսլամը, այդ պատճառով էլ չէր ունենալ համա-
խմբող ոյժ: Այդ դատողութիւնը հերքւում է
հետեւեալ տեսութեամբ.— ոչ մի առանձնայա-
տուկ, միածին և եզակի մահմեդական կուլտուրա
մենք չգիտենք: Արեւելեան իսլամի պետական և
ժողովրդական կազմակերպութեան, ինչպէս և
նրա նիւթական կուլտուրայի մէջ մենք տեսնում
ենք հին պարսկական կուլտուրայի մնացորդների
զարգացումն: Արեւմտեան Ասիայի իսլամական աշ-
խարհում — բելգանդական կուլտուրայի հետքեր,
հիւսիսային Ափրիկայում, Սիցիլիայում և Սպա-
նիայում — հռոմէական և հռոմա-սպանիական
կուլտուրա. անմտութիւն կը լինի այդ կուլտուրա-
ների մէջ որոնել մի ընդհանուր ոգի, մի ընդհանուր
մահմեդական բնաւորութիւն. նրանց կապող միակ
կէտն արաբական լեզուի տիրապետութիւնն է:

Խալիֆայութիւնը փայլում էր ոչ թէ միայն
նիւթական կուլտուրայով, այլ և մտաւոր կեան-
քով: Եւրոպական մութ բարբարոսութեան դը-
ժուար ժամանակներում արաբները կամ արա-
բերէն խօսող մարդիկ պարապում էին փիլիսո-
փայութեամբ, բնական և ստոյգ գիտութիւններ
բով. նրանք մեծ կամ փոքր չափով պահեցին
հին հոգեւոր կեանք և յետոյ հաղորդեցին եւրո-
պային: Հէնց այդ էլ մեզ համար արաբների

կամ աւելի ճիշտն ասած արաբների շնորհիւ
միացած ազգերի բարձր ծառայութիւնն է: Բայց
արդեօք սրա պատճառն իսլամն էր, որպէս կրօն:
Եթէ մենք կարողանայինք ասել, որ մահմեդա-
կան կրօնը հովանաւորել է գիտութիւնն և նրա
հետ ձեռք ձեռքի տուած առաջ գնացել, այն
ժամանակ, ի հարկէ, պատասխանը դրական կը
լինէր: Բայց իրողութիւնն է, որ և՛ փիլիսոփա-
յութիւնը և՛ գիտութիւնը մահմեդական աշխար-
հում գնացել են իսլամ կրօնի հակառակ և ճա-
նաչուել են անպատուաբեր: Մօթադիլիտների տի-
րապետութեան կարճատե շրջանը համարւում է
(և այդ շատ իրաւացի է) ոչ թէ իսլամի տիրա-
պետութեան շրջան, այլ հերետիկոսութեան, ուղ-
ղափառ իսլամի հալածանքի շրջան: Մօթադի-
լիտների անկումից և ուղղափառութեան յաղ-
թանակից յետոյ մենք տեսնում ենք, որ իւրա-
քանչիւր ազատ մտքի, փիլիսոփայութեան և գի-
տական գործունէութեան երևան գալը եռանդով
հալածւում է կրօնից: Ճիշտ է, չնայելով զրկանք-
ների, այնուամենայնիւ միտքը և գիտութիւնը
առաջ էին գնում, մինչև որ վերջապէս Ղազնի-
վեան Մահմուդը, սելջուկեան թուրքերը, մոն-
ղոլները, օսմանեան թուրքերն և թուրքմէններն
արեւելքում սպանեցին կեանքը: Բայց ով որ հը-
նարաւոր կը համարի այդ շարժողութիւնից յե-

տոյ տեսնել իսլամի ապագայ ծառայութիւնը, նա նոյնպէս պարտաւոր է ընդունել, որ միջնադարեան եւրոպական մտքի յառաջադիմութիւնն և նոր դարերում նրա տարած յաղթանակը կաթողիկոսութեան մատուցած ծառայութիւնն է:

Այսպէս ուրեմն, իսլամի պատմական նշանակութիւնը բացատրւում է նրանով, որ նա արաբական ցեղն առաջ մղեց դէպի պատմական կեանք, որ յետոյ միջնադարեան եւրոպական բարբարոսութեան ժամանակ իսլամից անկախ հպատակ ժողովուրդների հետ միասին խնամեց հին կուլտուրան: Մարդկութեան համար եղած իսկական կուլտուրական ծառայութիւնը վերագրել իսլամին՝ անկարելի է. միայն խիստ բիրդ թուրք, բերբերի, նեզր, մալայի ազգերի համար իսլամական կրօնը ներկայացաւ որպէս քաղաքակրթող ոյժ, իսկ կրթուած հասարակութիւնների մէջ նա միայն յաջող դէպքերում հաշտուել է իւր շուրջն եղած մտաւոր կեանքի հետ, սովորաբար արգելք լինելով նրա յառաջադիմութեան:

ԴԼՈՒՆ ԵՐԲՈՐԴ

ԻՍԼԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԻՃԱԿԸ *).

Մանհեղական նոր պատմութեան տուանձնայասուկ բնաւորութիւնը:

Իսլամական ժողովրդների կեանքի ժամանակակից ընթացքն էպպէս զանազանւում է նախկինից նրանով, որ նրանց հին ասիացիութիւնը խառնւում է ներս հոսող եւրոպականի հետ և այդ խառնուրդից ծնւում են կեանքի նոր ձևեր:

*) Այս դրսի նկատմամբ ես պէտք է նախապէս յայտնեմ հետեւեալը. Տաճկաստանում իմ վարած կեանքը, այդ պատուութեան մասին ոչնեցած անձնական դիտողութիւններս և Տաճկաստանի պատմութեան ուսումնասիրութիւնն ինձ առիթ են տուել կազմելու այն համոզումը, որ Տաճկաստանը ներկայանում է զղուելի, անբուժելի մի վերք եւրոպայի մարմնի վրայ, և այդ պատուութեան գոյութիւնն եւրոպական քաղաքակրթութեան

Ինչո՞ւ համար եւրոպական ազդեցութիւնը կարող է հեշտութեամբ մտնել արեւելք: Պատճառն այն է, որ իսլամական պետութիւնների քաղաքագիտական ոյժն անյայտացել է: Իրենց թուլութիւնը զիտակցելով, նրանք մի կողմից սկսեցին հոգ տանել իւրացնելու այն, ինչով որ քրիստոնեաներն իրենց ուժեղ էին զգում, իսկ միւս կողմից նրանք անզօր հանդիսացան արգելք լինելու եւրոպական ազդեցութեան տարածուե-

համար մի նախատինք է: Բայց եւ կը կամենայի ընթերցողի առաջ պահպանել լիակատար անկողմնապահութիւն, ուստի և որոշել եւ հետեւալը. այս զլիք բոլոր այն տեղերում, որտեղ իմ անձնական կարծիքների առաջ բերելը կարող է երևալ իբրև ուղեւորութիւն, թողնել անձնական դատողութիւններս և փաստեւ բերել թուրքասէրների աշխատութիւններից: Յաճախ եւ զիմել եւ յայտնի թուրքասէր և ուղեւորաց Գերմ. Վամբերիի աշխատութիւններին, և առանձնապէս կարեւոր եւ համարում ընդգծել այն հանգամանքը, որ թուրք ցեղի մտաւոր ընդունակութիւնների բնութագիրը (характеристика) ամբողջապէս արել եւ ըստ Վամբերիի, — ուրիշ խօսքով հոռու եւ մնացել ուղեւորական կանխակալ կարծիքներից: Տաճկաստանի պետական և հասարակական կարգերի անմխիթար պատկերը նոյնպէս իրենց էական կէտերով պատկանում են Վամբերիին, եթէ նրա աշխատութիւնները զեռ ևս հնացած չեն համարուում:

լուն և եւրոպական այն փորձերին, որ կամենում էին արեւելքը կերպարանափոխել իրենց ճաշակի համեմատ:

Դեռ նախկին ժամանակներում Արեւելքն արել էր մի քանի կամաւոր նորամուծութիւններ: Օրինակ, Տաճկաստանն իւր փառքի շրջանում աւելորդ չհամարեց քրիստոնեաներից թնդանօթներ գործադրելու արհեստը փոխ առնել: Սակայն էական նորութիւններ տեղի ունեցան միայն ներկայ դարում: Սուլթան Մահմուդ II (1808—1839) տեսնելով Տաճկաստանի զարհուրելի անկումը, տեսնելով իւր անընդունակութիւնն անհնազանդ ենիչերիներին կառավարելու զործում և ենթադրելով, որ Եւրոպայի ոյժը կայանում է զօրքերի կանոնաւոր կազմակերպութեան մէջ — ոչ ընչացրեց ենիչերիներին և աշխատեց զօրքը կազմակերպել եւրոպական ճաշակով: Հարեան Պարսկաստանում զօրքերն կազմակերպելու փորձեր արուած են Նապալիօնի ազդեցութեամբ, բայց արդիւնքն աւելի պակաս զրական է եղել քան Տաճկաստանում: Իսկ Աւղանստանում և Օկսուսի երկրներում, որոնք նոյնպէս վճռել էին հետեւել Տաճկաստանի և Պարսկաստանի օրինակին, բարեփոխութիւնը սահմանափակուեց մի քանի չնչին փոփոխութիւններով: Մահմուդ II, ոչնչացնելով ենիչերիների զլիաւորի պաշտօնը, Եւրոպայի օրի-

նակով պատերազմական նախարարի պաշտօն հաս-
տատեց, բայց զրանից փրանկներ չեա յարա-
բերութիւն պահպանելու համար 1836 թ. հաս-
տատեց նաև արտաքին գործերի նախարարի պաշ-
տօն։ Դրանով նա Տաճկաստանում սկիզբն դրեց
նախարարական վարչութեան և նախարարութիւն-
ների թիւն այնուհետև աստիճանաբար մեծա-
ցաւ. 1838 թ. սահմանուեց ելեմտից նախարարի
պաշտօնը, 1846 թ. ոստիկանութեան նախարարի,
1857 թ. արդարադատութեան և ժողովրդական
լուսաւորութեան և այլն։ Տաճկաստանի վերանո-
րողութիւնն իրեն հետևող ունեցաւ մահմեդա-
կան արևելքում — այսինքն Պարսկաստանում։
Մահմուդի երրորդ նորամուծութիւնը վերաբե-
րում էր զգեստներին. չնայած թուրքերի անբա-
րեհաճութեան՝ նա հրամայեց աստիճանաւորնե-
րին «եւրոպական տարազ հագնել և ի միջի այլոց
վերացնելով գլխի փաթոյթը, տեղը մոլծեց ֆէսի
գործածութիւնը։ Թէև այդպիսի փաստերը չըն-
չին են երևում, բայց էապէս նրանք իրենց խոր
նշանակութիւնն ունեն, որովհետև երևան եկան
իրբւլ նոր հոսանքի կարապետներ և նոր ճանա-
պարհ ցոյց տուին Մահմուդ Բ.-ի յաջորդներին
և ուրիշ մահմեդական պետութիւններին. նոյն
իսկ ֆէսերի գործածութիւնը փոքր բան չէր,
որովհետև քիչ մնաց առաջ բերէր ժողովրդական

յեղափոխութիւն։ Մահմուդ եւրոպական քաղաք-
ներում նոյնպէս հաստատեց տաճկական դեսպա-
նութիւններ, որոնց միջոցով հարկաւ եւրոպայից
մուտ գործեցին արևելք եւրոպական սովորու-
թիւններ։ Վճռուած էր ուղղակի արևմուտքի
գիտութեան ծանօթանալ. այդ նպատակով երի-
տասարդ թուրքեր արտասահման էին ուղարկու-
ում ման համար։ Հետզհետէ նոյն օրինակին հե-
տեցին Պարսկաստանը, Բուխարան, աւելի ևս
եղիպտոսը, Տաճկաստանի աւատական (վասալա-
կան) հակառակորդը։

Բայց, ինչպէս մենք վերև ասացինք, ինքն
արևմուտքն էլ յօժարակամ իւր ազդեցութեամբ
մուտ գործեց արևելք։ Ամենից քիչ յանդուզն
ներկայանում է նորեկների ազդեցութիւնը. վա-
ճառականների, արդիւնաբերողների և քաղաքա-
կան փախստականների, որոնք իրենց ապաստան
գտնում էին արևելքում։ Հասկանալի է, վաճա-
ռական և արդիւնաբերող ժողովուրդը, զբաղուած
նրլթական և դրամական հաշիւներով, շատ քիչ
կարող է լուսաւորողի դեր խաղալ. իսկ ինչ որ
վերաբերում է քաղաքական փախստականներին,
նրանք Ասիային մեր արևմուտքի մասին հաղոր-
դում էին աննպաստ տեղեկութիւններ*)։ Բայց

*) Օրինակ Տաճկաստանում կան մեծ թուով լե-

այնու ամենայնիւ նրանք արեւմուտքի ոգւով չէին կարող յայտնի ներգործութիւն չունենալ: Քրիստոնէական միսիօնարներն աշխատում են արեւելքում մտցնել իրենց ազդեցութիւնը զիտակցաբար և աւելի յանդուգն կերպով: Ճշմարիտ է նրանց կրօնական քարոզն ամենափոքրիկ տպաւորութիւնն անգամ չէ թողնում մահմեդականի հոգու վրայ, բայց յաջողութիւն են ունենում ուսումնարաններում և հիւանդանոցներում: Սակայն բարեփոխութիւնների ամենազխաւոր և ամենազգալի շարժչն եղան եւրոպական կառավարութիւնների գործողութիւններն: Նրանց ազդեցութիւնն երկու տեսակ է լինում, կամ անմիջական ուստի և յաջողակ կերպով—նրանց ձեռքով նուաճուած մահմեդական երկրներում, կամ միջնորդական, քաղաքազիտական — այն երկրներէց մէկում, որը դեռ ևս ինքնուրոյն էր մնացել—Տաճկաստանում, Տաճկաստանն եւրոպական սկըզբունքներով բարեփոխելու առաջին բարձրագոյն հրամանը տուել է Մահմուդ Բ.-ի որդի Աբդուլ Մեջիտը (1839—1861). այդ հրամանը կոչւում

հացի աստիճանաւորներ, որոնք փախել են Ռուսաստանից ներքին խռովութիւններից յետոյ, նրանցից մի մասը ծառայական շահի տեսակէտից ընդունել է մահմեդականութիւն: Դժուար չէ երևակայել, թէ նրանք ինչ գոյներով կը նկարագրեն Ռուսաստանը:

էր «Գիւլիսանեան խաթիբի շերիֆ» 3-ն նոյեմբերի 1839 թ: Հարկաւ Աբդուլ Մեջիտի մէջ չէ կարելի չնկատել անձնական յայտնի ազատամիտ ուղղութիւն, բայց անկասկածելի է, որ Գիւլիսանեան բարձրագոյն հրամանի զխաւոր աղբիւրն էր եւրոպայի բարեհայեցողութիւնը ձեռք բերելու ցանկութիւնը, և նրա պաշտպանութիւնն և՛ զիպտոսի Մահմամէդ Ալի փաշայի դէմ, որի ապստամբութիւնն ամբողջ Տաճկաստանի գոյութեանն էր սպառնում:

Պետութիւնները ցանկացած օգնութիւնը հասցրին ընդդէմ Մահմամէդ Ալիի և վերջերս էլ ընդդէմ Ռուսաստանի (Ղրիմի պատերազմում): Գիւլիսանեան բարձրագոյն հրամանից յետոյ եւրոպայի քաղաքազիտութեան ազդեցութեամբ երևան եկան սուլթանական շատ իրադէճեր, իսկ նրանցից աւելի ազատամիտ խոստումներով այն իրադէճն եղաւ, որի հրատարակութիւնը 1896 թուին դեսպանները ստիպողաբար պահանջեցին Աբդուլ Համիդից, ի միջի այլոց պէտք է նկատել, որ եւրոպական քաղաքագէտները մի ամենախոշոր սխալ են գործում, նրանք տաճկական կառավարութիւնն եւրոպականի տեղ ընդունելով, չափազանց քաղաքավարի են վարւում նրա հետ, չեն հարկադրում խոստումներն անյապաղ կատարել, այլ սուլթանի խօսքին հաւատալով, բաւարար

կանանում են բարեփոխութիւնների հասարակ խոստումներով, ուստի և միշտ խաբուած են մընում: Արեւելեան բնակիչները, ինչպէս ես հնարաւորութիւն ունիմ իմ նրանց հետ ունեցած ամենօրեայ խօսակցութիւններից համոզուել, քաղաքադիտութիւնն իրենց համար օրէնք դարձած արուեստի մօքով են ըմբռնում՝ խաբել ուրիշ պետութիւններին ամեն սեսակ միջոցներով. եթէ քրիստոնեաներին կարելի է հանդստացնել զգուշութիւնով, չկատարելով նպատակով տրուած խոստումներով և այլն, այն ժամանակ դրանք աւելի ևս վատ են քրիստոնեաների համար. իսկ արեւելեան բնակիչներից ոչ ոք այդ ստի մէջ որ և իցէ անարգանք չէ տեսնում: Հասարակական կարծիքն ուրախութեամբ կը հրապուրուի սուլթանի և նրա աստիճանաւորների «քաղաքադիտական» ընդունակութեամբ և կը ծաղրեն «եւրոպացի շէնքերի» մշտական յիմարութիւնը: Այստեղից առաջ է դալիս այն տխուր երեւոյթը, որ սուլթանական բոլոր հաղարաւոր իրադէներ և խաթիւ-շերիֆներ, որոնցից իւրաքանչիւրը վաղուց արդէն պէտք էր ծածկաստանն եւրոպային նմանեցնէր, մեծ մասամբ թղթի վրայ մնացին, իսկ մի քանիսները, օրինակ Աբդուլ-Համիդի 1896 թ. հոգակաւոր Բարձրագոյն հրամանն բացառապէս թղթի վրայ մնաց:

Վերոյիշեալ բոլոր պայմաններն, այսինքն Արեւելքի կամաւոր մերձեցումն Արեւմուտքի հետ և Արեւմուտքի ստիպողական առաջխաղացութիւնը դէպի Արեւելք՝ ունենում են Արեւելքի մեծ թէ փոքր չափով եւրոպացնելու հետեանքը: Բայց եւրոպականութիւնն մի ինչ որ միակերպ բան չէ, նա ունի իւր ստուերագծերը, ուստի և նրա Արեւելքի վրայ ունեցած ներդրութեան մէջ կարելի է պարզ կերպով նկատել մի քանի ստուերագծեր: Եւրոպական կուլտուրան Ասիայում հաստատելու գործի մէջ ամենակարեւոր դերը պատկանում է երկու հակառակորդներին—Անգլիային և Ռուսաստանին: Միջերկրական ծովին պատկանող երկրներում նկատելի է Փրանսիական կուլտուրայի ուժեղ ազդեցութիւնը, իսկ Բալկանեան թերակղզում — աւստրիական: Փրանսիայի ազդեցութիւնը, իրեն յատուկ պատուաւոր ձեռով^{*}), զլիաւորապէս տարածւում է Արեւելքում նրա լեզուի և զրականութեան շնորհիւ^{**}): Իսկ ինչ վերաբերում է Փրանսիային

^{*}) Կայ և նրա անպատուաբեր ազդեցութիւնը, նրա անբարոյականութեան, հիւանդութիւնների տարածումն, ընտանեկան կապերի թուլացնելը և այլն:

^{**}) Արաբական նորագոյն առակն ասում է. «Որտեղ որ ձգես փրանսիական լեզուն, նա այնտեղ ուղիղ

անմիջապէս ենթարկուող մահմեդական երկրին (Ալժիր), մինչև այժմ Պրանսիան լիակատար անկարողութիւն ցոյց տուեց այնտեղ կարգ ու կանոն մտցնելու: Այդ կողմից Աւստրիան նրա հակապատկերն է ներկայանում. իւր լեզուով ու զբոսականութեամբ Արևելքի վրայ ոչ մի ազդեցութիւն չէ ունեցել, սակայն իրեն ենթարկուող Բոսնիայի համար արդէն մեծ բարիք է գործել: Աւստրիան չինայեց մեծ զուամարներ ծախսել Բոսնիացիների թէ նիւթական բարեկեցիկ դրութիւնն և թէ մտաւոր մակերևոյթը բարձրացնելու. որովհետև մահմեդական կանայք չեն կամենում այր բժշկիկների մօտ բժշկուել, այդ պատճառով Աւստրիայում կանանց թոյլ տուին համալսարանի բժշկական բաժինը մտնելու: Աւստրիական լրագրներում և պարլամէնտում յաճախ գանգատւում են, որ կառավարութիւնն ոչ մի նահանգի մասին այնքան հոգացողութիւն չէ անում, որքան Բոսնիայի: Արևելքում Անգլիայի կուլտուրական դերը շատ նշանաւոր է, բայց նրա գործու-

ոտերի վրայ կը կանգնի». այդ առակի միտքը բացատրւում է նրանով, որ մարդ փրանսիական լեզուն իմանալով, միշտ կարող է իրեն համար պաշտօն գտնել — ձեռք բերել մի կտոր հաց, դրա համար և ստիպուած է այդ լեզուն սովորել:

նէութեան ձեւը մի ընդհանուր բնաւորութիւն չէ կրում, օրինակ Եգիպտոսում Անգլիան ուրիշ է, իսկ Հնդկաստանում ուրիշ: Եգիպտոսը, որն Անգլիայի կառավարութեան ներքոյ շուտով բոլորովին կը մօտենայ եւրոպային, գեղեցիկ կերպով նրա հովանաւարութեամբ զարգանում է թէ՛ արաբական-ազգային և թէ՛ տնտեսական կողմից, բնականաբար և հարեան արաբ-ասորիներն իւրաքանչիւր օր աւելի և աւելի յընում են ազգասիրական ոգով (միւսնոյն ժամանակ և ռուսատեաց ոգով): Անգլիացիները Հնդկաստանում շատ բան են արել բարձրացնելու ժողովրդի բարեկեցիկ դրութիւնը, վաճառականութիւնը, արդիւնաբերութիւնը, ուսումնաւորութիւնը, բայց բնակիչների հետ ունեցած նրանց անամօթութեամբ, երբեմն էլ ինքնակամ վարուողութիւնն առաջ է բերում անհամակրութիւն, մինչև անգամ և ատելութիւն, մանաւանդ մահմեդականների մէջ: Այսպէս կոչուած Արևելեան հարցում Անգլիան մինչև այժմ ճաճկաստանին շատ բարեկամաբար է վերաբերուել և արժանի է եղել Ռուսաստանում կոչուելու «Իսլամին հովանաւորող», բայց վերջին ժամանակ Անգլիան սուլթանի թշնամին է դարձել, իսկ այժմ սրա (սուլթանի) բարեկամ հաշուում է Ռուսաստանը: Ռուսաստանը վաղուց է եղել իսլամի տապալողը: Նրա

անմիջապէս ենթարկուող մահամեղական երկրին (Ալժիր), մինչև այժմ փրանսիական լիակատար անկարողութիւն ցոյց տուեց այնտեղ կարգ ու կանոն մտցնելու: Այդ կողմից Աւստրիան նրա հակապատկերն է ներկայանում. իւր լեզուով ու գլխականութեամբ Արևելքի վրայ ոչ մի ազդեցութիւն չէ ունեցել, սակայն իրեն ենթարկուող Բօսնիայի համար արդէն մեծ բարիք է գործել: Աւստրիան չինայեց մեծ զուլմարներ ծախսել Բօսնիացիների թէ նիւթական բարեկեցիկ դրութիւնն և թէ մտաւոր մակերևոյթը բարձրացնելու. որովհետև մահամեղական կանայք չեն կամենում այր բժիշկների մօտ բժշկուել, այդ պատճառով Աւստրիայում կանանց թոյլ տուին համալսարանի բժշկական բաժինը մտնելու: Աւստրիական լրագրներում և պարլամէնտում յաճախ գանգատւում են, որ կառավարութիւնն ոչ մի նահանգի մասին այնքան հոգացողութիւն չէ անում, որքան Բօսնիայի:—Արևելքում Անգլիայի կուլտուրական դերը շատ նշանաւոր է, բայց նրա գործու-

ոտերի վրայ կը կանգնի». այդ առակի միտքը բացատրւում է նրանով, որ մարդ փրանսիական լեզուն իմանալով, միշտ կարող է իրեն համար պաշտօն գտնել— ձեռք բերել մի կտոր հաց, դրա համար և ստիպուած է այդ լեզուն սովորել:

Տաճկաստանի հետ ունեցած դարաւոր կռիւները տեղիք են տուել արեւելեան քրիստոնեաներին կազմելու այն համոզումն, թէ գոյութիւն ունի Մեծն Պետրոսի այն կտակը, որով պարտաւորեցնում է իւր յաջորդներին իւրաքանչիւր քսան տարուց յետոյ թուրքերի դէմ պատերազմ մղել: Ռուսաստանը սպանել է Օսմանեան կայսրութեան ոյժը, նրա իշխանութիւնից հանելով Բալկանեան թերակղզու մեծ մասը, իսկ Ասիայում Ռուսաստանն ուղղակի իրեն է ենթարկել ամենամոլեռանդ մահմեդական ժողովրդին և այժմ նրանց քաղաքակրթում է (sic): Սովորաբար եւրոպացիները ծիծաղում են, եթէ խօսք է լինում Ռուսաստանի քաղաքակրթելու դերի մասին. նրանք միշտ պատրաստ են հարցնելու. «Մի՞թէ մտրակը կամ ծեծը կարող են քաղաքակրթութեան նշանակներ լինել»: Տարածուած է հետեւեալ ասացուածքը. «Ռուսացումն — ասիացի դարձնելու մի ուրիշ ձևն է»: Կամ «կոպիտ Ռուսաստանին չէ վերապահուած իւր վայրենի միջոցներով խաղաղ կուլտուրայի աւետաբեր լինելու»: Հասկանալի է, ոչ մի ոուս չէ կարող չիմանալ (օրինակ կարգալով ոուսաց և ասիական լրագրներ) որ Ռուսաստանին ենթարկուող ասիական մահմեդականները դեռ բաւական առիթ ունեն դանդաղեցնելու, իսկ ոուսաց աստիճանաւորներն այդ հեռաւոր կողմերում հըս-

կողութիւնից զուրկ լինելով, մինչև այժմ շատ էլ օրինակելի չեն եղել և այսպէս կոչուած «տաշկէնացիները» գործունէութիւնն այնքան էլ գովական չէ եղել: Ռուսաստանի ուսացնելու ձգտումները մահմեդական ժողովրդի մէջ առաջ են բերում նոյնչափ անբաւականութիւններ, որչափ լեհացիների, մալաուսների, վրացիների և հայերի մէջ: Հարկաւ այս բոլորն էլ այնպիսի հանգամանքներ են, որոնք պէտք է խիստ չափերով արդելք լինեն Ռուսաստանի խաղաղ կուլտուրայի գործին: Բայց, նախ որ կարելի է այս բոլորը հեռացնել, և երկրորդ իսլամի պատմաբան Ա. Միւլեր, որը մի անկողմնապահ և խորադննին անձնաւորութիւն է, գտնում է, որ յիշեալ պալատութիւնները կարելի է քաւել ուսական գործունէութեան դրական կողմերով և արտայայտում է այսպէս. «Առանձնապէս չկամենալով քաղաքագիտական հարցերը դիտողութեան առնել, ես այնու ամենայնիւ իմ պարտքն եմ համարում դրականապէս յայտարարել, որ խանութիւնների կուլ դնալը Ռուսաստանին ճշմարիտ բախտաբութիւն է եղել այդ կողմի բնակիչների համար (հատոր Գ. երես 388): Մինչև անգամ վամբերին, առաջ տանելով իւր դատողութիւնները, թէ Ռուսաստանն ինքը դեռ կուլտուրական չէ, թէ «Ռուսաստանի ձգտումներն ուղղուած են

քարուքանդ անելու Ասիան, և ոչ թէ նրան բը-
ժշկելու», և թէ այն յարմարութիւնները, որ
Ռուսաստանը մտցրել է Թուրքեստանում, «աւելի
ռուսների համար է, քան թուրքեստանցիների»
վերջի վերջոյ չէ կարող չհամաձայնուել ահա թէ
ինչի հետ. «Յամենայն դէպս Ռուսաստանը վերջ
կը դնի տեղական բարբարոսութեան, կը վերա-
կանգնի կեանքի և դոյքի ապահովութիւնը, վա-
ճառականութիւնն և հաղորդակցութիւնը կը կեն-
դանանան» (Der Islam, էջ 297):

Մահմեդական արքեր ազգութիւնների բնու-
թագիրը:

Ընդհանուր կէտերով նշանակելով այն պայ-
մանները, որոնց համաձայն ներկայ դարում ըն-
թանում է իսլամական կեանքը, տեսնենք թէ
այժմ իսլամը դաւանող ժողովրդներն եւրոպա-
կան կեանքն իւրացնելու ի՞նչ նշաններ են ցոյց
տալիս և որչափով իւրաքանչիւր ազգութեան
բնաւորութիւնը թոյլատրում է իւր հաւատքը
համակերպել նոր հոսանքի հետ:

Մօտ ժամանակներում Ամերիկայում եղած

մի արաբ Արեւելքի ու Արեւմուտքի բնակիչների
մէջ հետեւեալ համեմատութիւնն է անում. «Արե-
ւելեան մարդիկ աչքի են ընկնում արագ ըմբռ-
նողութեամբ, խօսքի կէսից նրանք հասկանում
են: Բայց, աչքի ընկնելով արագ ըմբռնողութեամբ,
նրանք աչքի են ընկնում առհասարակ և արագ
մոռացկոտութեամբ:

Բանաստեղծն ասում է.

«Մարդը կոչուած է մարդ՝ միայն իւր մոռաց-
կոտութեան պատճառով:

«Սիրտը կոչուած է սիրտ՝ իւր փոփոխականու-
թեան պատճառով»:

«Իսկ Արեւմտեան մարդը քեզ չէ հասկանում,
մինչև որ խօսածը նորից կրկնել չէ տալիս. բայց
այլ ևս չէ մոռանում այն, ինչ որ միանգամ իւ-
րացրել է. նրա խելքն իսկապէս մեղուի ձու է:
Նա նոյնքան հոչակուած է յիշողութեան կարո-
ղութեամբ, որքան Արեւելքի մարդն իւր խելքի
նրբութեամբ և թափանցող յատկութեամբ»: Ա-
րաբի բերած այս համեմատութիւնը բոլորովին
համաձայն է ազգագիր-արեւելագէտների մեզ ցե-
ղակից ասիացի-արիացիների և սեմիտների մասին
ասածի հետ: Նրանք անդրդուելի և յամառ աշ-
խատանքի սէր չունեն, ուստի և իրենց մտաւոր
զործունէութեան արդիւնքով հաւանականաբար

ապագայումն էլ բոլորովին չեն կարող համեմատուել եւրոպացիների հետ, թէև իրենց ընդունակութիւններով նրանցից գերադանց են: Արիական և սեմական ազգերը մահմեդականներից աւելի քանքարաւոր են: Մնացած մահմեդականները պատկանում են այն ցեղերին, որոնց բնական ձիրքերը նշանաւոր չափով ցածր են եւրոպականից: Ահա իսլամական զինաւոր ժողովուրդները:

ա) Արաբացիներ, որոնց ծոցից դուրս է եկել իսլամի մարգարէն: Ինչպէս և հին ժամանակի արաբ-բեդուինները դէպի հաւատը բոլորովին անտարբեր են, իսկ քաղաքացիք աչքի են ընկնում իրենց լայն կրօնական համբերողութեամբ, դրա համար և եգիպտոսն ու Ասորիքն եւրոպական կեանքը բոլոր մահմեդական երկրներէն առաջ իւրացրին: Մինչև անգամ Մէկկա և Մեդինա սուրբ քաղաքների բնակիչներն այն աստիճանի սառած են դէպի իրենց կրօնն, և այն աստիճանի աշխատում են կողոպտել ուխտաւորներին, որ առակ է դարձել «Սուրբ քաղաքներում սատանայ է ապրում»: Մոլեռանդութիւնը, որի պատճառը չէ պարզուած, նկատուում է այսպէս կոչուած զիրէ-արաբներին, — կիսաթափառական, անապատի ծայրում ապրող կիսանստակեաց ժողովրդների մօտ: Բացի դրանից Բէյրութի

բնակիչներին երբեմն մոլեռանդների շարքում են դասում մանաւանդ Դամասկացուն, եթէ նա արդէն մի անգամ Բէյրութ է գնացել, դուք միշտ կը լսէք նրա հառաչանքները Դամասկոսը թողնելու առթիւ, որտեղ մահմեդականների և քրիստոնեաների մէջ բաժանումն չկայ: Բայց եթէ ի նկատի առնենք մահմեդական-բէյրութցիների տրամադրութիւնը, այն ժամանակ կը տեսնենք, որ նրանց ատելութիւնն առ հասարակ քրիստոնեաների դէմ չէ ուղղուած, — օրինակ եւրոպացիների նկատմամբ այդ չէ երեւում (թէև Բէյրութում նրանք իրենց իբրև լիակատար տէրեր են պահում, և արաբների վրայ բարձրից նայում): Այդ ատելութիւնը միմիայն տեղական քրիստոնեաների դէմ է ուղղուած, որոնք Բէյրութում մեծամասնութիւն են կազմում, իրենց ձեռքում մեծ դումարներ ունեն և չնայած իրենց սովորական երկչոտ բնաւորութեան՝ ամենախիստ գրգռող բնութիւնն ունեն *): Ամերիկայից վերա-

*) Կան և ուրիշ պատճառներ: Բէյրութի քրիստոնեաները մեծ մասամբ բաղկացած են այն մարդկանցից, որոնք եկել են այդտեղ այն կոտորածից յետոյ, որ 1860 թուին տաճկաց կառավարութիւնն Ասորիքում սարքեց. նրանցից շատերը զրկուել են իրենց հարազատներից և անարդիւ իսլամական կրօնը, որի անուանով և կառավարութիւնն առաջ բերեց կոտորածը: Եւրոպական

դարձող ականատես-արարները հաղորդել են ինձ: Թէ որքան թանգ է Բէյրութցի մահմեդականի համար դուրս գալ Բէյրութից և գնալ օրինակ Բրազիլիա և այնտեղ արաբ-քրիստոնեայի պատահել: Թէ ինչպէս երկուսն էլ լցում են ամենամեծ ուրախութեամբ, երկուսն էլ միմեանց իբրև ցեղակիցներ են ընդունում և ամենասերտ բարեկամութիւնը հաստատում: Այդպիսի երեւոյթ ի դուր կը լինէր սպասել Արևելքի ուրիշ այն ժողովրդների մէջ, որոնց համոզմունքով ազգային ամբողջութիւնը պայմանաւորւում է կրօնի միութեամբ և ոչ թէ լեզուի: Նոյնպէս և Միջագետքում արաբների մէջ դոյութիւն չունի կրօնական տարաձայնութիւն՝ ազգային ամբողջութեան գիտակցութեան զարգացման շնորհիւ, որի նկատմամբ առանձնապէս մատնացոյց են ա-

գլխաւոր հիւպատոսներն, որ չափազանց ուժեղ էին Բէյրութում, միշտ քրիստոնեաների կողմն են պահել: Իսկ տաճիկ կառավարութիւնն էլ, թէև առհասարակ արաբացիներին չէ սիրում, բացառութիւն է անում Բէյրութցի սակաւաթիւ մահմեդականների համար, հովանաւորում և քաջալերում է նրանց և անհետեանք թողնում այն յանցանքները, որ նրանք գործում էին ընդդէմ քրիստոնեաների: Հետեանքն լինում է Բէյրութի մահմեդականների և քրիստոնեաների փոխադարձ հակակրօնութիւնը:

նում Սոուտգէտն (Southgate) և Սոցինը: Սոցինն ի միջի այլոց հաղորդում է, երբ նա Զախօ քաղաքում իրեն կողոպտող ծառային, որն արաբ-քրիստոնեայ էր Մօսուլի մօտերէից, կամենում էր տաճկաց ոստիկանութեան յանձնել այն ժամանակ բոլոր մահմեդական վաճառականները շտապեցին գալ նրա մօտ և խնդրել իրենց հայրենակցին այդպիսի պատժի չենթարկել:

Բ.) Իրանցիներ. Նախ և առաջ—պարսիկներ: Ինքնուրոյն Պարսկաստանն Արևմուտքից հեռու գտնուելու պատճառով՝ նրանից բաւականին քիչ է իւրացրել, աւելի քիչ, քան Պօլիսը: Պարսկաստանում տակաւին թաղաւորում է միջնադարեան խաւարը: Սակայն ժողովրդի բնաւորութիւնն երաշխաւորում է, որ մօտ ապագայում պարսիկները բոլոր մնացած մահմեդականներից աւելի կը յառաջագիմեն: Այդ ժողովուրդը չափազանց սրամիտ է, հակուած դէպի ազատ մտածողութիւնն և հեռու կրօնական մոլեռանդութիւնից: Նրա աշխարհայեացքները վաղուց անուել են Սուֆիաների բոլոր կրօնների հաւասարութեան մասին ունեցած զաղափարներով և ներկոյ դարում նշանաւոր յաջողութիւն ունեցաւ Բաբիականութիւնը, որը նոյնպէս Սուֆիական կրօնի մի տեսակն է և քարոզում է ընդդէմ շիա հոգևորականութեան անհամբերողու-

Թեան: Մեղանում սովորաբար պարսիկների մասին Թիւր հասկացողութիւն կայ, որովհետեւ պարսիկների տեղ ընդունում են մոլեռանդ Թուրք շիաներին, որոնք ապրում են ռուսական Անդրկովկասում և հարեան հիւսիսային Պարսկաստանում: Բայց զրանից ռուսները գաղափար են կազմում պարսիկների մասին Բուխարայի տաճիկների օրինակով: Իսկ սրանք էլ ստիպուած են Միջին Ասիայի մոլեռանդ Թուրքերի մէջ իրենց ցոյց տալ աստուածապաշտ, համակերպուելով շրջապատող ժողովրդին, որոնց նրանք շահագործում են: Իսկապէս տաճիկը սուլի կերպով զանազանում է Թուրքից նրանով, որ տաճիկ հետ կարելի է կրօնի վերաբերեալ ազատ վիճաբանութիւն ունենալ, և նա աշխատում է համոզել դիմացինին տրամաբանական ապացոյցներով, մինչդեռ Թուրքը զարհուրելի սրբապղծութիւն է համարում կրօնի մի որ և է առաջադրութիւնն ենթարկել նոյն իսկ ամենաթեթեւ քննադատական գատողութեան: Պարսիկների մօտ, իբրեւ մոլեռանդութիւն, կարելի է նկատել այն, որ նրանք զէպի սիւննիները կատաղի ատելութիւն ունեն, բայց որովհետեւ հարեան սիւննիները—Թուրքերը պարսիկների հին թշնամիներն են, ռուսի աւելի շուտ զրանց մէջ պէտք է նկատել ազգային ատելութիւն, քան կրօնական: Կրօնական

մոլեռանդութեան բացակայութիւնն ամենից լաւ նկատելի է քրիստոնեաների հետ ունեցած պատերազմի ժամանակ, որոնց հէնց շփուելն էլ շիահոգեւորականութեան վարդապետութեամբ պէտք է համարուի պղծութիւն («հիճէս»):

Գր. Գօրինս տալիս է հետեւեալ բնորոշ տեսարանը Քսան պարսիկներից, ասում է նա*),— որոնց բերանից միշտ լսւում են բարեպաշտ խօսքեր, հազիւ թէ գտնուի մէկը, որ իւր ասածին հաւատայ Վերջին պատերազմի ժամանակ, որ Անգլիան յայտարարեց Պարսկաստանին, մէկ հայկաթօլիկ կառավարութեան խորհուրդ տուեց սրբազան պատերազմ հրատարակելու, ինչպէս այդ լինում է սիւննիների հետ: Շատ պետական մարդիկ հասարակ ամբօխի զրդուումն փտանգաւոր և վատ համարեցին, ուրիշները սրբազան պատերազմ հրատարակելու գործը վայրենի և ծիծաղելի, աւելի հմուտները պարսաւում էին այդ միջոցը, իբրեւ անօգտակար, և հասարակ ժողովրդի հաւատի համար զինուելու ամենափոքրիկ ձգտումն էլ մերժում էին: Կառավարութիւնն այդ մասին տատանուելուց յետոյ վրձուեց փորձ անել: Հրապարակի տրամադրութիւնը

*) Գր. Գօրինսն ապրել է Պարսկաստանում 1855—1858 թ.

շատ զուարճալի էր: «Պէտք է սրբազան պատե-
րազմ քարոզեն ...», ասում էին վաճառական-
ները, «բայց ինչո՞ւ: Որպէս զի թոյլ չտա՞ն ան-
գլխացիներին այստեղ դալու: Բայց ինչո՞ւ նրանք
չգան: Նրանք փող ունեն, նրանք պէտք է ծախ-
սեն, նրանք պէտք է կանխիկ վճարեն, ուրեմն
այստեղ մեզ համար ի՞նչ գոթախտութիւն կայ:
Ով որ չէ ուզում նրանց դալը, թող պատերազմի
գնայ, իսկ մեզ հանդիստ թողնեն»: Իսկ հասա-
րակ ժողովուրդն էլ չմասնակցեց, չնայած որ կա-
ռավարութեան յոյսը նրա վրայ էր: Նա սրա-
միտ կերպով մտածեց, եթէ ոգևորութիւն ցոյց
տայ, այն ժամանակ իրեն պատերազմի կը տա-
նեն, իսկ առանց այդ էլ չի թողնիլ, որ թշնամին
իրեն կողոպտի, ուստի և վճռեց չմասնակցել:
Վերջապէս հասաւ քարոզելու օրը: Բարձրագոյն
հրամանով առաւօտից սկսած փակեցին հրապա-
րակն և բոլոր մահմեդականներին շահի մեչէտը
հրաւիրեցին, թոյլ չտալով ոչ ոքի մնալ կամ փո-
ղոցում կամ տանը: Նշանակուած էին պահա-
պաններ, որպէս զի ոչ ոք դուրս չգայ մեչէտից:
Իշխանների և առաջին նախարարի երեւան դա-
լուն պէս մէկ մօլլա ամբիոն բարձրացաւ և կար-
դաց մի պատրաստած քարոզ աղօթքի օգտակա-
րութեան մասին: Նա աշխատեց ապացուցանել,
որ աղօթքը հարստանալու ամենալաւ միջոցն է,

որպէս զի կարողանայ մի կերպ հանգստացնել ամ-
բօխին, որը սաստիկ անհամբերութեամբ սպա-
սում էր վերադառնալ իրենց խանութները: Մօլ-
լան բացականչում է. «կամենում էք արդեօք լի-
նել յայտնի վաճառականներ, ձեռք բերել հիա-
նալի պտղաբեր հողեր, ապրել հարստութեան
մէջ, բազմապատկեցէք առանց յոգնելու ձեր ա-
ղօթքների թիւն և այդ ճանապարհով ձեզ ամէն
բան կը տրուի: Իւր ասածները հաստատելու հա-
մար՝ նա հաղորդում էր սրբերի կեանքից պատ-
մութիւններ: Բայց քարոզիչի իւրաքանչիւր խօս-
քին մէկն ու մէկը սրախօսութեամբ էր պատաս-
խանում և այդպիսով մեչէտումն էլ բարձրացաւ
աղմուկ և ծիծաղ: Մէկն ասաց մօլլային. «եթէ
դու առանց գործ կատարելու արդէն հարստա-
նալու գաղտնիքը գիտես, էլ ինչո՞ւ միշտ լաց ես
լինում քո աղքատութեան վրայ»: — «Յօ» լը-
սուեց պատասխան մի ուրիշ կողմից. «նա այն-
բան էլ յիմար չէ, որ ժամանակ կորցնի աղօթքի
վրայ, թողնելով քաղաքի գինետունը»: Աղմուկ
և ծաղր շարունակուեց մինչև նախարարի դալը:
Այդ հանդէսի վերջն աւելի քաղաքավարի ան-
ցաւ, բայց առանց հետեւանքի, ոչ գիւղերից, ոչ
էլ քաղաքներից կամաւորներ չեղան: Իրանի
պարսկի բնակչութեան յատկանիշն ընդհանուր
կէտերով կարելի է յատկացնել և հեղկացի պարս-

կին^{*)}։ այդ բանին ամենալաւ ապացոյց կարող է ծառայել այն, որ հնդկական մահմեդականներն եւրոպական կրթութիւնը կենդանի կերպով իւրացրել են, թէև այդ կրթութիւնը դալիս է անգլիացիների շնորհիւ, դէպի որոնց նրանք տաժում են ատելութիւն քաղաքագիտական կողմից։ Կիսավայրենի աւղանցիները գերադասուում են պարսիկներից իրենց ամենամեծ ազնուութեամբ^{**)}, բայց կրօնի մէջ աւղանցիները նոյնպէս անտարբեր են։ Կրօնը կամ դաւանութիւնը ծառայում է նրանց համար իբրև միջոց կողոպտելու օտարադաւաններին ու շիաներին (աւղանցիները մեծ մասամբ սիւննիներ են)։ Նոյն նպատակի համար և նոյն միջոցով օգտուում են առաջաւոր Ասիայի

^{*)} Հնդկացի մահմեդականներն առաւելապէս պարսիկներ են, թէև նրանց արեան մէջ հնդկական խառնուրդ կայ, որովհետև հնդկացիք կամաց կամաց ընդունում են իսլամն և ազգակցական յարաբերութիւնների մէջ մտնում պարսիկների հետ։

^{**)} Պարսիկների տաղանդը նսեմանում է իրենց սարսափելի ստախօսութեամբ։ Պարսիկի կարծիքով «սուտն աղատող է, իսկ ճշմարտութիւնը խորտակող»։ Այդ կողմից սուր հակապատկեր է ներկայանում թուրքը։ Իբրդ ոյմի սիրահար թուրքի մէջ աչքի են ընկնում պարզութիւնն ու ազնուութիւնը, այդ յատկութիւնները մինչև այժմ էլ մնացել են թուրք գիւղացիների մէջ։

նշանաւոր աւագակները — քուրդերը։ Արդարև նրանց համար կրօնն ամենայետին դերն է կատարում։ Վամբերիի ասելով՝ քուրդը փոխում է իւր հաւատը տարուայ եղանակների համաձայն. — նրա համար այն հաւատն է ամենալաւը, որն որոշեալ ժամին ամենանպաստաւորն է։

2) Թուրքեր^{*)} — որոնք արաբների և իրանցիների լիակատար հակապատկերն են ներկայացնում։ Այժմ նրանք իսլամի նեցուկն են։ Ինչպէս նախկին ժամանակներում, նոյնպէս և այժմ թուրքի աչքի ընկնող յատկութիւնն է կատարեալ կոյր հաւատ, ատելութիւն դէպի վերացական դատողութիւններն, կրօնական պահպանողականութիւնն և մոլեռանդութիւնը, անհամբերողութիւն դէպի ուրիշ կրօնները։ Այդ յատկութիւնների ամենաբարձր աստիճանով աչքի են ընկնում ուղբէկները, կամ Միջին Ասիայի թուրքերը. ընդհակառակն Օսման թուրքերը, որոնց արեան մէջ կայ յայտնի եւրոպական խառնուրդ, ուղբէկներից աւելի պակաս մոլեռանդ են, թէև իրենց հաւատքի նկատմամբ ունեցած հաստատուն և պահպանողական բնութեամբ նրանցից պակաս չեն։

^{*)} Թուրքեր (Турки) ասելով պէտք է հասկանալ ոչ թէ ամբողջ թուրքական ցեղը, այլ այն մասը, որ հիմնել է Օսմանեան պետութիւնը։

Գրանց միջին տեղը բռնում են Աղլրբեջանի թուրքերը, որոնք դաւանութեամբ շիա են: Եւրոպական թաթարներն, երկար ժամանակ մնալով ուսաց իշխանութեան ներքոյ՝ կորցրել են իրենց յետադէմ անհամբերողութիւնը, թէև պահել են իրենց պահպանողականութիւնը:

Երեք վերոյիշեալ աղղութիւնները — թուրքական, իրանական և արաբական — ժամանակակից մահմեդական աշխարհի աչքի ընկնող ներկայացուցիչներն են, ըստ որում քուրդները ներկայանում են յետամնաց սար, իսկ իրանցիներն և արաբացիները յառաջադէմ: Արաբներն ու պարսիկները միմեանց չեն սիրում, բայց մի կէտում համակերպւում են — որ երկուսն էլ ատում են թուրքերին. թուրք անունը նրանց լեզուի մէջ հոմանիշ է «բիրդ», «թանձրամիտ» և «անկիրթ» բառերին: — Իսլամական մնացած ժողովրդները թուրքերի պէս պաշտանում են բիրդ և բնութիւնից սակաւ ընդունակութեամբ օժտուած ցեղերին, ուստի և վերին աստիճանի հաւատարիմ են իսլամին: Սրանցից նրանք, որոնք իրենց մեծ քանակով կարող են դեր խաղալ ապագայում արժանի են յիշատակութեան. դունգանները — հիւսիսային արեւմտեան Չինաստանի բնակիչները, որոնք հռչակուել են մահմեդական մոլեռանդութեամբ, իրենց քարոզչական գործունէութեամբ

վտանգ են ներշնչում, որ երբ և իցէ Չինաստանը կընդունի մահմեդական կրօնը. մալայցիներ — բնակչութեամբ հանդարտ, բայց հնդկական Արշիպելագում իսլամը շատ կենդանի կերպով տարածողներ. բերբերներ — մի ժողովուրդ, որ իսկապէս շատ վատ է ճանաչում մահմեդական կրօնի նրբութիւնները, բայց գիտէ աստուածացնել իւր մահմեդական նահատակներին և բոլոր իսլամ ժողովրդների մէջ ամենից մոլեռանդն ու անհամբերողն է. նրանց կարծիքով քրիստոնեային սպանել — ոչ պակաս աստուածահաճոյ գործ է, քան կատարել Հաճի ուխտագնացութիւնը. վերջապէս բազմաթիւ նեգրներ, որոնք ընդունելով իսլամը, նոյնպէս անհամբերող են դառնում:

Իսլամական ժողովրդների ժամանակակից պեսական կազմակերպութիւնը.

Մահմեդական պետութեան հրամայողը կրում է զանազան անուններ, Տաճկաստանում — սուլթան (տիրապետող), Պարսկաստանում — շահ (թագաւոր), Աւղանիստանում — էմիր (իշխան) և այլն. բայց ամէն տեղ նրա (հրամայողի)

աչքի ընկնող առանձնայատկութիւնն է—անսահման բռնակալ իշխանութիւն իւր հպատակներէ վրայ. ինքը հրամայողը համարուում է օրէնքի աղբիւրն և պահպանողը, ուրիշ խօսքով—նա ինքն է օրէնքը: Բռնապետութեան մէջ այն զլխաւոր և անօրինակ իշխանութիւնը, որպիսին վայել է միայն պետին—հրամայողին, ստանում են նաև հրամայողի անձի սիրելիները. վերջին ժամանակներն այդպիսիներից առանձնապէս նշանաւոր էր Աղիզը, պարսից նասրէդդին շահի սիրեցեալ—տղան. այդ «սպասաւորը» իւր ազդեցութեամբ բարձր էր կանգնած նախարարներից և բոլոր աստիճանաւորներից: Չնայելով «սիրելիների» ազդեցութեան, այնուամենայնիւ գոյութիւն ունի կանոնաւոր պետական կառավարութիւն: Ժողովրդի կառավարութեան գործում հրամայողին—պետին գործակից ներկայանում են մի կողմից աշխարհական նախարարներն իրենց ստորադրեալ աստիճանաւորներով, իսկ միւս կողմից մահմեդական հոգեւորականութեան զլուխ «շէյխ-իւլ-իսլամ», կամ ուրիշ խօսքով մեծ մուֆտի, նոյնպէս իրեն ստորադրեալ սահմանեալ աստիճանաւորներով: Չնայելով որ սուլթանն է հաստատում շէյխ-իւլ-իսլամին, բայց սա ժողովրդի վրայ ունեցած իւր ազդեցութեամբ յաճախ կարող է խանգարել սուլթանի ծրագիրները, որովհետև

բոլոր սուլթանական օրէնսդրական կարգադրութիւնները պէտք է հաստատուին «Ֆէթվայով», այսինքն շէյխ-իւլ-իսլամի կրօնական թոյլտուութեամբ. նշանակում է վերջինս որոշեալ չափով սահմանափակում է սուլթանական միապետութիւնը: Պարսկաստանում շէյխ-իւլ-իսլամը չունի այնպիսի պաշտօնական պարտականութիւն, ինչպէս Տաճկաստանում, բայց այնտեղ շահը ստիպուած է իւր ձեռնարկութիւններն առաջ տանել զլխաւոր «մօջեսիդեանների» (աւագ քահանայ) կամքով, մանաւանդ նրանց, որոնք ապրում են Պարսկաստանի սահմաններից դուրս. ֆալբալայում: Ուրիշ պետութիւնների մէջ օրինակ Աւդանիստանում, շէյխ-իւլ-իսլամների դերը կատարում են դէվրիշների ուխտի սրբազան զլխաւորները. նրանց ազդեցութիւնը ժողովրդի վրայ այնքան ուժեղ է լինում, որ երբեմն նրանք ստիպել են իշխաններին՝ նրանց կամքի հակառակ պատերազմ անել: Այդպիսով շէյխ-իւլ-իսլամի և սրանց նման հոգեւոր անձերի շնորհիւ յայտնի չափով սահմանափակուել են բռնակալ կառավարիչների իրաւունքները, բայց ընդհանուր մարդասիրական տեսակէտից հազիւ թէ կարելի լինի դրա համար ուրախանալ: Ճշմարիտ է, երբեմն հոգեւորականութիւնը սանձահարել է կառավարչական խստութիւնները, բայց նա կատաղի կեր-

պով խանգարել է բարենորոգութիւնները (реформы), որովհետեւ ա) բարենորոգութիւններն որոշ չափով թուլացրել են մօլլաների ժողովրդի վրայ ունեցած ազդեցութիւնը, բ) խել են հոգեւորականութիւնից մի քանի շատ կարեւոր իրաւաբանական իրաւունքներ—օրինակ դատաւարութիւնը:

Այս բոլորից դժուար չէ երեւեակցել թէ ինչպիսի յատկութիւններով պէտք է օժտուած լինի արեւելեան հրամայողը — պետը, որպէս զի նոր կարգեր մտցնելու յաջողութիւնն ունենայ նա պէտք է ունենայ Պետրոս Մեծի եռանդն և անձնական մեծ հաւատը դէպի արեւմտեան քաղաքակրթութեան գերազանցութիւնը: Մինչև այժմ Արեւելքը չէ ունեցել այդպիսի հրամայողներ. նոր շրջանի բոլոր մահմեդական թաղաւորները չափազանց տատանուող էին, վերին աստիճանի կիսակիրթ այս խօսքի արեւելեան մտքով: Ամենից աւելի այս պէտք է ասել Տաճկաստանի մասին: Այնտեղ սուլթանների երեխաների մտաւոր դարգացողութեան վնասում է նրանց կրթութեան ուղղութիւնը. հին սովորութեան համաձայն իշխանաւորների տղաները պէտք է իրենց երեխայութիւնն և երիտասարդութիւնն անցկացնեն փակ կեանքի մէջ, հեռու մնացեալ աշխարհից, իրենց շրջապատող շողոքորթ ստրուկների շրջանում, համարեա առանց որ և է տարրական

ուսման: Մահմուդ Բ. (1808—1839), որը Տաճկաստանում բարեփոխութիւնների սկիզբը դրեց, գիտութիւնների կողմից բոլորովին տգէտ էր, վարքով կիսավայրենի: Աբդուլ-Մեջիդը (1839—1861) բնաւորութեամբ բարի կամ աւելի ուղիղն՝ թոյլ ջղերի տէր, իւրացրեց եւրոպական ձևերը, եւրոպական արտաքին փայլը, բայց ոչ կրթութիւն. Ֆրանսերէն լեզուն սովորելու համար նա ոյժ և հաստատակամութիւն չունեցաւ, չնայած հինգ թէ վեց անգամ ձեռնարկել է սովորելուն: Նա չունէր նոյնպէս մահմեդական կրթութիւն: Բայց այնու ամենայնիւ Աբդուլ-Մեջիդն աւելի բարձր էր կանգնած իւր եղբայր և յաջորդ Աբդուլ-Ազիզից (1861—1876), որն իսկական ասիացի էր: Աբդուլ-Մեջիդի որդի Մուրադը, որը դահ բարձրացաւ յեղափոխութեան շնորհիւ և թաղաւորեց միայն մի քանի ամիս, դահազուրկ եղաւ իւր տկարամտութեան պատճառով: Մուրադի եղբայրը, ներկայ սուլթան Աբդուլ-Համիդը (սկսած 1876 թ.) աւելի սիրահար է արեւմտեան փայլին, օրինակ նա ածում է դաշնամուր, բայց հարեմը պահպանելու համար նրա գործադրած չափազանց ծախսերը, հայերին բնաջինջ անելու կարգադրութիւններն և խոստումների նկատմամբ նրա անհաստատակամութիւնն ամէնքին էլ յայտնի են: Այնքան էլ մխիթարական չէ և պարսից թա-

գաւորներին բնութագիրը: Ճշմարիտ է, այնտեղ
շահի գաւակներին դաստիարակութեան ձևն ան-
համեմատ խելացի է, քան թէ Տաճկաստանում:
մանկութիւնից նրանք սովորում են կռուվարել
պետութիւնը: Նոյնպէս ճշմարիտ է, որ պարսից
շահերը, թէև ծագումով թուրքեր (ղաջարներ),
բոլորովին իրանցի են դարձել և ենթարկուել պար-
սից քաղաքակրթութեան բարերար ազդեցութեան:
Ի միջի այլոց պաշտպան են հանդիսացել զրակա-
նութեան և իրենք նոյնպէս յափշտակուել են
ոտանաւորներ զրելով: Բայց պարսից ժամանա-
կակից քաղաքակրթութիւնը դեռ ևս շատ հեռու
է բաւականացնելու ժամանակակից պահանջները:
Ի պատիւ շահերին՝ պէտք է ասել, որ առանց
Եւրոպայի հարկադրութեան, նրանք այնու ամե-
նայնիւ իրենց մէջ որոշ չափով բարեփոխութիւն-
ներ են մտցրել և զրանով իրենց՝ սուլթաններից
աւելի ընդունակ են ցոյց տուել: Բայց շնորհիւ
այն բանի, որ Պարսկաստանն Եւրոպայից հեռու
է գտնուելը, շահերից ոչ մէկը չէ զգացել բարե-
փոխութիւնների կարեւորութեան զիտակցութիւնը:
Փաթ-Ալի շահը (1797—1834), որը կազմակեր-
պեց զօրքը Ֆրանսիական և ուրիշ եւրոպացի ու-
սուցիչների օգնութեամբ, խելացի մարդ էր, բայց
ոչ հակամիտ զէպի արմատական բարեփոխու-
թիւնները: Նրա ժամանակ եւրոպական կուլտու-

րան միայն մասամբ մուտ գործեց: Մոհամմէդ
շահը (1834—1848) սկսեց զօրքերի վերակազ-
մութեան մասին հոգալ, եւրոպական ճաշակով մի
քանի ուրիշ նորութիւններ մտցրեց և օգտւում
էր եւրոպացի բժշկի խորհուրդներից: Բայց չէր
նմանւում Պետրոս Մեծին այն հասարակ պատ-
ճառով, որ տկարամիտ էր և կիսախելացնոր Հաջի
Միրզա-Աղասու ձեռքին մի հասարակ խաղաղիք
էր: Նասր-էզզին-շահը (1848—1896) հասկացաւ
թէ ոչ եւրոպական կուլտուրայի գերազանցու-
թիւնը, զոնէ փափուկ ապրելու ճաշակը, և վըճ-
ռեց շատ բան փոխ առնել: Երիտասարդ շահի
նոր նշանակած վեզիր Միրզա-Թաղի խանը, որը
խոհարարի որդի էր, ձեռնարկեց մի շարք գործեր
և պարսից ժողովուրդն իւր ընդունակութեամբ
հսկայական քայլերով առաջ գնաց: Եւրոպայի
հետ դիւանադիտական յարաբերութիւններ կազ-
մակերպուեցան և ինքը շահը հետաքրքրութիւ-
նից չըզուաճ Եւրոպա այցելեց (որ յետոյ մի
քանի անգամ կրկնուեց): Կրթութեան համար
երիտասարդ մարդկանց արտասահման ուղարկե-
ցին, ըստ որում նրանց յանձնարարւում էր ոչ
թէ միայն զիտութիւններ սովորել, այլ և եւրո-
պական մասնագիտական արդիւնադործութիւն:
Պարսկաստանում բաց արին զինադործութեան և
ոստայնանկութեան արհեստանոցներ և այլն: Ներ-

մուծեցին մի քանի կարևոր բաներ. օրինակ փողոցներում լապտերներ, փողոցների սալալատակումն, մայթեր, հեռադրաթելեր, այնուհետև Պարսկաստանն մտաւ համաշխարհային փոստային հաղորդակցութեան մէջ. միջոցներ ձեռք առին վաճառականութիւնն օտարների հետ պահպանելու: Նասր-էզդինի ձգտումներից ամենանշանաւորն էր՝ ամեն կերպ աշխատել ժողովրդի հետեւապէս և շահերի վրայ ունեցած մօլլաների ազդեցութիւնը պակսեցնել. դրա համար Նասր-էզդինն աշխատեց հեռացնել մօլլաներին աշխարհական պաշտօններից, և որ առաւելն է աշխարհիկ դատաւարութիւնից, այնպէս որ հոգեւորականութիւնն շահին ատեց ինչպէս հերետիկոսի, թէև շահը նրանց դուր գալու համար հրակայական կերպով բնաջինջ արաւ բաբինների աղանդը: Հարկաւ Նասր-էզդինն իւր նախորդների համեմատութեամբ ներկայանում է յառաջագէմ շահ, բայց միայն համեմատական չափով: Նասր-էզդինն դաժան, կամայական բռնակալ էր: Միրզա Թաղի խանը պատժուեց (1851) նրա հրամանով և նրա պատժի պատճառով՝ ձեռնարկած բարեփոխութիւնների մեծագոյն մասն իրենց հարկաւոր զարգացումն չունեցան: Հսկայական հարկեր և սպառնալով դրամ կորզելը շահի համար սովորական գործեր էին: Նա վատ կրթութիւն ու-

ներ, ատում և հայածում էր ազատ մտածողութիւնը. նա սահմանափակեց հոգեւորականութեան իրաւունքները միմիայն իւր անձնական ոյժի համար, և ոչ թէ ժողովրդի օգտի: Մինչև անգամ իւր մեծ ազատամիտ որդուն հեռացրեց զահլից և նշանակեց թագաժառանգ Մուղաֆֆէր էզդինին, որի կառավարութիւնը յայտնի դարձաւ հրէաներին և քրիստոնեաներին հալածելով: Աւղանիստանի էմիրների բարեկարգելու ձգտումների մասին նոյն իսկ չարժէ խօսել. նրանք ոչ մի ժամանակ լուրջ և հետևանք ունեցող դործ չեն կատարել: Բարեկարգութիւնների մէջ ամենից աւելի եռանդ է ցոյց տուել եզիպտոսի խեղիվ Մոհամմէդ Ալին (1811—1849), որովհետև այդ բարեփոխութիւնները բարեյաջող հող են դրել ժողովրդի մէջ և երկրում, որոնք երբեք չեն տեսել մօնղոլական արհաւիրքներն և ոչ մի ժամանակ չեն վնասուել տաճկաց տանտէրութիւն անելուց: Ենթադրենք, որ եզիպտական խեղիվներն աւելի սէր ունէին դէպի եւրոպական փաթաւութիւնները, դէպի արտաքին հաճելի ձեւերը, և եւրոպական կարգ ու կանոնները, քան որ իրօք նրանք կան եւրոպական քաղաքակրթութեան մէջ. բայց այնու ամենայնիւ նրանց մօտ բարի ցանկութիւն շատ կար, և միայն նրանք հաճելի կերպով ջոկնւում են Արևելեան նոր

ժամանակի իշխողների պատկերների մէջ:

Պետութեան զլխաւորից անցնենք նախա-
րարներին, նրանց նախարարութիւններին, և առ-
հասարակ աստիճանաւորներին: Նախարարների մէջ
շատ յաճախ լինում էին ազատամիտ և կըր-
թուած մարդիկ, տոգորուած յառաջագիմու-
թեան զաղափարով. նրանց թւում բարի յիշա-
տակութեան արժանի են Ռաշիդ փաշա—Աբդուլ
Մեջիդի մեծ վեզիրը, և մանաւանդ Միրզա Թաղի
խանը, նասր-է-դդին շահի թագաւորութեան առա-
ջին տարիների բարձր զաղափարներով օժտուած
վեզիրը. բայց նախարարներին ենթակայ «նախա-
րարութիւնների», «դեպարտամէնտների», «կօմի-
տեանների», «խորհուրդների» և «բիւրօների» մէջ
վերանորոգութիւնն և եւրոպական կարգերը մնա-
ցին թղթի վրայ. իսկ ձեւերը մնացին բոլորովին
ասիական. բոլոր այդ տաճկական էֆէնդիները,
բէյերը, փաշաները մեծ մասամբ անգործ են անց-
կացնում իրենց դիւանատներում, զբաղուած են
ծխելով և սուրճ խմելով, իսկ անյետաձգելի գոր-
ծերը կանգ են առնում: Նիստը վերջացնելուց
յետոյ պաշտօնական թղթերն իրենց հետ վեր-
ցնում են տուն տանելու, իբր թէ աշխատելու
նպատակով, բայց սովորաբար տանը բաց էլ չեն
անում այդ թղթերը: Վամբերին անձամբ զիտէր
օրինակներ, որ դիւանագիտական լուրջ հաղոր-

դադրութիւն, դաշնագիրներ օտար պետութիւն-
ների հետ, կամ օրէնքների ծրագիրներ կորել են
նախարարական յայտնի պաշտօնեաների տանն և
ապա գտնուել է մի որ և է անկիւնում լուացքի
շորերի մէջ: Մինչև ներկայ ժամանակն էլ կար-
գերը չեն փոխուել, տաճիկ ծառայողների վնա-
սակար դանդաղկոտութիւնն և զգուշի անհո-
գութիւնն ամենքին էլ յայտնի են: Պարսկաստա-
նում անհոգ նահապետական կենցաղաւարու-
թիւնն էլ պակաս չէ, բայց չպէտք է մոռանալ,
որ Թեհրանն ընկած է Ասիայի խորքում, իսկ
Պօլիսը Եւրոպայի մէջ: Ծառայողներն ընտրուում
և բարձրանում են ոչ թէ իրենց ընդունակու-
թիւնների և կրթութեան համաձայն, այլ ամե-
նահամարձակ պաշտպանութեամբ: Մեծ մասամբ
պաշտպանութիւն են գտնում այնպիսի մարդիկ,
որոնք պատանի հասակում եղել են անբնական
արատի *) առարկայ մի օր և է բարձրաստիճան
փաշայի մօտ (տաճկաց պետական կարեւոր գոր-
ծիչներից շատերը հէնց այդ միջոցով են սկսել
իրենց ծառայութեան ասպարէզը). բացի դրանից
պաշտպանում են ազգականները, ծանօթները,
«պէտքական մարդիկ» և այլն. այնպէս որ մարդ

*) „Abscheuliche Werkzeuge eines entarteten Natur-
triebes“ (Вамсѳерн).

առանց ընդունակութիւնների և առանց խղճի հեշտութեամբ տեղ է ստանում մի որ և է պետական հաստատութեան մէջ, կամ ուղարկւում է զաւանդները նահանգապետի պաշտօնով «կերպարութեամբ» համար: Ուրեմն ի՞նչ կարելի է սպասել այդպիսի կառավարչական եղանակից: Մինչև անգամ տաճկական ամենաբարձր դիրք ունեցող պաշտօնեաների բարքերի կոպտութիւնը զարմանալի աստիճանի է հասնում: Օրինակ մենք ամբողջ կարողութեամբ ոյժ տալով մեր երևակայութեան, չենք կարող պատկերացնել, որ մեզանում գեներալ նահանգապետը թոյլ տար իրեն հրապարակով՝ կէս հազարի չափ ամբոխի ներկայութեամբ կռուի բռնել դատախազի հետ, որ պէսզի նրանց բաժանէր հասարակութիւնը, որ նրանք չարութեամբ լցուած բարձր ձայնով ապառնային թագաւորի առաջ միմեանց մեղադրել մատնութեան դործում, և որ վերջում գեներալ նահանգապետը գնար թագաւորի առաջ իրեն պաշտպանելու համար որ և է օտար հիւպատոսի օգնութիւնը խնդրէր—թող հէնց աւստրիական—հիւպատոսի: Մեզ համար այդ աներևակայելի տեսարանը տեղի է ունեցել Բէյրութում 1896 թ. նոյեմբերին և կռուից յետոյ գեներալ նահանգապետը (վալի) նասուլի-բէյ գնացել է ռուսաց հիւպատոսի մօտ՝ սուլթանի առաջ իրեն պաշտ-

պանելու օգնութիւնը խնդրելու, գոնէ չմտածելով՝ թէ որ աստիճանի անպատուաբեր է իւր հայրենիքի պատուին՝ օտար հիւպատոսի օգնութեան դիմելը: Այդ տեսարանը՝ Բէյրութում ոչ ոքի չզարմացրեց. այդ մի սովորական բան երևաց: Տաճկական պաշտօնեաների բարքերի կոպտութիւնը կարելի է նկատել և բռնութեամբ փող կորզելիս: Ոչ ուժով փող կորզելը և ոչ էլ պետական դրամների հասարակ կողոպուտը դատուելու արժանի չեն համարւում, և ինքը կառավարութիւնն այդպիսի զեղծումների առաջ փակում է աչքերը: Տաճկական երկու բնորոշ առակ կայ. «Ով որ մեղք է պահում, նա էլ մասերը լիզում է» և «գանձաւանը ծով է, ով որ նրանից չէ օգտւում նա խոզ է»: Այդ տեսակէտից նոյնատեսակ են թէ աշխարհական «բարեկարգող» աստիճանաւորներն և թէ շէյխ-իւլ-իսլամի պահպանողական ընդարձակ տեսչութեան պաշտօնեաները, թէև այս վերջինները նայում են աշխարհական աստիճանաւորների վրայ—մանաւանդ դատաւորների, ինչպէս հոգեւորականութեան իրաւունքներն անազնիւ կերպով յափշտակողների վրայ, բայց երբէք չեն աշխատում առաքինութեան օրէնքներով յառաջադիմել, այլ ընդհակառակն արատների օրէնքներով: Բացի գանձաւանը կողոպտելուց և բռնի կերպով դրամներ

կորզելուց տաճկական աստիճանաւորներին մի աչքի ընկնող յատկութիւնն էլ հրէշաւոր կաշառակերութիւնն է: Հարկաւ, կաշառակերութիւնը ծաղկում է ամբողջ Արեւելքում, բայց Տաճկաստանում աւելի շատ է, քան ուրիշ տեղ: Այդ բանի համար արդար դատաստան չկայ, միւսնայն է, աշխարհական դատաւորը կը դատի թէ նրա հակառակորդ դադին. բայց գոնէ Պարսկաստանում, Աւղանիստանում և Միջին Ասիայում կրած վիրաւորանքի համար կարելի է անձամբ իշխանաւորին բողոքել: Տաճկաստանում զանգատի սովորութիւնը վերցրուած է: Կաշառք վերցնում են բարձր և ստորին աստիճանաւորները, շատ անգամ պատճառաբանելով իրենց աղքատութիւնը. ինձ յայտնի են դէպքեր, որ յեղափոխական բովանդակութիւն ունեցող զրբերի ամբողջ արկղներ մաքսատանը բաց են թողել կէս մեջիտիա (80 կոպ.) ստանալով, հէնց ինքս անձնական փորձով կարող եմ ասել, որ մաքսատանն ինձնից մի մեջիտիա էին պահանջում 5—6 փութ ծանրութիւն ունեցող սնտուկ թոյլ տալ անցկացնելու, որը լիքն էր Տաճկաստանի և իսլամի մասին ամենաարգելուած բովանդակութիւն ունեցող զրբերով*): Թէ ինչու Տաճկաստանում կաշառա-

*) Թէև կաշառելու փոխարէն ես լաւ համարեցի գիմել ոռոսաց հիւպատոսի օդնութեան:

կերութիւնը աւելի է զարգացած, քան թէ արեւելեան ուրիշ երկրներում, այդ բացատրւում է նրանով, որ տաճկական աստիճանաւորներն ամբողջ ամիսներով Բարձր, Գոնից ռոճիկ չեն ստանում: Իսկ ռոճիկ չեն ստանում, որովհետեւ Բ. Գոլուր փող չունի: Տաճկաստանի պետական եկամուտների զլխաւոր մասը ստացւում է զիւղական ժողովրդից, իսկ նա էլ աղքատացել է. երկրագործութիւն անում են համարեա անդրջրհեղեղեան գործիքներով. ոռոգումն և երկրագործութեան համար ուրիշ անհրաժեշտ պայմաններ տաճկական տնտեսական կառավարութեան շնորհիւ անտես են արուած. հաց արդիւնաբերելու համար ցամաքի վրայ հազորդակցութեան ճանապարհներ չկան. հարկերի ժողովման ձեւը վերին աստիճանի քայքայիչ է. ամենաէական տուրքերի ժողովումն պետութեան կողմից թոյլատրուած է կապալով տալու. զլխաւոր կապալառուներն իրենց կողմից կապալով տալիս են ուրիշներին՝ աւելի մանր կապալառուների, իսկ սրանք էլ երրորդ մարդուն են յանձնում և հետեանքն այն է լինում, որ հարկերի ժողովման ժամանակ բոլորովին կողոպտում են զիւղացուն, յաճախ նոյն իսկ նրա վերջին հազուստն խլելով: Մահմեդական զիւղացու համար քայքայող ներգործութիւն է անում և զինուորական ծառա-

յուլիանը, քրիստոնեան իրաւունք չունենալով
զինուորական ծառայութեան՝ դրամական տուրք
է տալիս, իսկ մահմեդականը պարտաւոր է այդ
պարտքը անձամբ կատարելու և զիւղական աղ-
քատ ընտանիքը յաճախ զրկւում է իւր միակ
աշխատանքից: Հասկանալի է, որ զիւղական
կեանքի այդպիսի անբարեյաջող հանգամանքների
շնորհիւ Բ. Դրան ժողովրդից ստացած մուտքը
չէ կարող մեծ լինել և որովհետեւ Բ. Դուռը չը-
գիտէ ծախսերը յարմարեցնել մուտքին, ուստի
և պետական բիւջէտի մէջ պակասորդ գումարը
(դէֆիցիտ) տարեց տարի աճում է հսկայական
չափերով: Բ. Դուռը չափազանց պարտք ունի
այդ պարտքերն ոչ մի կերպ չէ կարող վճարել
ուստի և պետական եկամուտների գլխաւոր մասը
գործադրում է տոկոսներ վճարելով, իսկ մնա-
ցած փողերը ծախսւում են անմիտ կերպով:
Սուլթանի պալատի և հարէմի պահպանութեան
համար հրէշաւոր ծախսեր են լինում *), այս-
պէս կոչուած անակնկալ ծախսերի համար նոյն-
պէս շատ է դնում, միւս կողմից յայտնի աստի-
ճանաւորներ կողոպտում են դանձարանը, այն
խղճալի գումարից, որը մնում է ռոճիկների հա-

*) 500 միլլիոն եկամուտից 150 միլլիոնը պալատի
պահպանութեան համար է ծախսւում:

մար, ազդեցիկ անձնաւորութիւններն և նրանց
հովանաւորեալները ստանում են իրենց վճարը
յաւելումներով հանդերձ, իսկ մնացած ոչ ազ-
դեցիկներին, աւելի մանր ծառայողներին ռոճիկ
տալու համար ոչինչ չէ մնում, դեռ լաւ է, եթէ
սրանք կարողանան իրենց տարեկան ռոճիկի գոնէ
մի երրորդ մասը ստանալ: Ահա թէ ինչու ծաճ-
կաստանում ամենաչնչին կաշառակերութիւնն
անխուսափելի է դառնում, ազնիւ պաշտօնեան
քաղցից մեռնում է:

Պարսկաստանում և մահմեդական Ասիայի
միւս երկրներում տնտեսական գործերն ուրիշ
կերպ են կարգաւորուած: Այնտեղ բացի զիւղացի
և ծառայող դասակարգից գոյութիւն ունի և
թուով աչքի ընկնող միջին դասակարգը—վաճա-
ռականներ և արհեստաւորներ, որոնք պետու-
թիւնից ռոճիկ չեն ակնկալում, այլ ընդհակառակը
նշանաւոր չափով պետութեան հարկ են տալիս
(ճաճկաստանում ամեն մէկն աշխատում է դառ-
նալ պետութեան ծառայող և ապրել դանձարանի
հաշուով): Այդ երկրներում գոյութիւն չունի
պետական ել և մուտ, շահը կամ էմիրն իրենց
հայեցողութեամբ կարգադրում են, բայց որով-
հետեւ այնտեղ նոյնպէս չկայ պետական մի զրուշի
պարտք, ուստի կարիք չէ լինում դանձարանն
աղքատացնել տոկոսներ վճարելու պատճառով:

խակ ծառայողների (որ աւելի քիչ են, քան Տաճկաստանում) ռոճիկների համար փող միշտ բաւականանում է: Ահա թէ ինչու այստեղի կաշառակերութիւնը, որքան էլ վրդովեցուցիչ լինի եւրոպացու համար, չէ կարող Տաճկաստանի հետ հաւասարուել:

Իսլամական երկրների պետական կազմակերպութեան պատկերները լրացնելու համար խօսենք նաև ժամանակակից զօրքի մասին: Տաճկաստանում զօրքը կազմակերպուած է եւրոպական ձեւով. բայց, չնայելով որ կան զինուորական զբաղումներ, և զօրքը վարժուած է երկար ժամանակ եւրոպական զինուորականների առաջնորդութեամբ, այնու ամենայնիւ զարմանալի կերպով հազուադիւս են տաղանդաւոր տաճկական սպաներ և հրամանատարներ. տաճկական զօրքը չէ կարող եօլա գնալ առանց զերմանական սպաների առաջնորդութեան. հազուադէպ բացառութիւնների թուին է պատկանում Պլէվնայի հերոս Օսման փաշան և, ինչպէս աշխատում են թուրքերը հաւատացնել, Էդիսէմ փաշան (սա յայտնի է յոյների հետ ունեցած վերջին պատերազմում տարած փայլուն յաղթութեամբ, ծագումով թուրք չէ): Իրամական միջոցների սղութեան և իշխանութեան անազնւութեան պատճառով տաճկական զօրքը միշտ ապրում է պատռոտած հա-

զուստով, ոտաբոբիկ և քաղցած, մանաւանդ գաւառներում *). Դրա համար և, եթէ սուլթանը կամ մի որ և է փաշա հրաման տայ զինուորներին՝ կողոպտելու՝ օրինակ հայերին, զարմանալի չէ, որ նրանք յարձակուեն առանց ամենափոքրիկ տատանման, ուշանալու և խղճահարութեան: Մի քանի տարի առաջ երբ հարկաւոր եղաւ զօրք ուղարկել Ասորիք Խորանի դրուզներին խաղաղացնելու, տաճկական զինուորներին ինչպէս ոչ խարների, Սալոնիկից Բէյրութ տանելիս ամբողջ ժամանակը չկերակրեցին, և Բէյրութի մի քանի քրիստոնեայ կանայք առանց արցունք թափելու չեն կարողացել նայել այդ դժբախտ զօրքի վրայ: Խորանում զինուորների մեծ մասն ոչնչացաւ քաղցից և հիւանդութիւնից. մինչև անգամ ապստամբ դրուզներն առաջին անգամ խղճահարուել են հրացան պարպել այդ հիւանդ և քաղցած զօրքի վրայ: Բարեյաջող հանգամանքներում տաճկական զօրքը դործում է քաջութեամբ, ինչպէս մենք տեսանք վերջին յոյն-տաճկական պատերազմում: Բայց այդ անգամ իբրև բացառութիւն, զօրքը լաւ էր կազմակերպած. սուլ-

*) Պօլսում, որտեղ զօրքը մասնակցում է զօրահանդէսներին՝ ունի նա արտաքին աւելի պատշաճ տեսք, իսկ ապրուստն այնտեղ ևս վատ է:

Թանն այդ պատրաստութեան համար փող է բաց
թողել իւր միջոցներէց, թէև մեծ ծախսեր էլ
չէ եղել: Սակայն եթէ ճաճկաստանում պատահի
յուրջ պատերազմ, որ երկարի և կարիք լինի
զինուորներու մեծ քանակութեան, այն ժամա-
նակ զօրքի զրութիւնն անմխիթար կը լինի:—
Պէտք է նկատել նաև, որ տաճկական զօրքը միայն
ցամաքային է. կարելի է ասել, որ ճաճկաստա-
նում նաւատորմիդ գոյութիւն չունի, և մի քանի
ծակծկուած շոգենաւներ, որոնք սովորաբար ան-
զօր են մի վերստ անգամ անցնելու, ընդհանուր
ծիծաղ են առաջացնում: Որքան այդ ամենը ծի-
ծաղաշարժ են, սակայն Պարսկաստանում զօրքն
աւելի ևս ծիծաղարժ է: Զինուորների հասակն
է 14 տարեկանից մինչև 60 տարեկան, այնպէս
որ յաճախ հայրը, որդին ու թոռը ծառայում
են մէկ զնդի մէջ: Զինուորական համազգեստը
խառն է, զիններին ունեն կամ պրուսական կա-
կա, կամ պարսկական փափախ. մերկ ոտքերին
էլ ունեն չմուշկներ. Վամբերի ժամանակ հա-
մազգեստի փոխարէն ուղղակի վերնաշապկի վրայ
կրում էին միայն փամփշտարան (պատրօնտաշ) և
փոկէ կարգ ու սարք, իսկ այժմ Միսլ-Ռուստէմի*)

*) Սա հրատարակել է 1898 թ. Պարսկաստանի
նկարագրութիւնը Նասր-էդդին շահի ժամանակ:

խօսքով արդէն գործադրւում է աւստրիական
խակական համազգեստ բայց այնպէս են հագնում
որ տեղական հագուստի տպաւորութիւն է թող-
նում: Պարսից զինուորներին ռոճիկ է տրւում
զրամով, բայց շատ չնչին է, մի կողմից էլ սպա-
ներն են աշխատում գողանալ կէսը կամ երկու
երրորդը: Դրա համար և զինուորները ստիպուած
են ապրելու ոչ թէ զօրանոցներում այլ ընտա-
նիքում և պարապել մանր առևտուրով, զանա-
զան արհեստներով և աշխատանքով, որպէսզի
ապրելու միջոց ունենան. զինուորական ծառա-
յութեան դնում են մի ժամից ոչ աւելի: Վամ-
բերին դիտել է այսպիսի տեսարաններ. մէկ սպայի
տան պահապանը վաճառում է ձմերուկներ և
զնոդի առաջ մինչև երկինքը գովաբանում. յան-
կարժ դուրս է դալիս սպան, պահապանն արա-
զութեամբ ձմերուկը գետնին է դնում և սպային
հարկաւոր պատիւը տալիս: Հրացանները չկոր-
ցնելու պատճառով պահպանւում են ոչ թէ զի-
նուորների մօտ, այլ պահեստներում. մանաւանդ
առանձին սիրով գողանում են հրացանների շամ-
փուրները, որոնք պէտք են դալիս խորովածի
համար: Թնդանօթաձիգ մասի վրայ կայ երեք
հրամանատար—մարդկանց, թնդանօթի և ձիա-
ների վրայ. եթէ հարկաւոր է մարտից կազմել
նախ անհրաժեշտ է երեք հրամանատարների հա-

մաճայնութիւնը, և երկրորդ՝ պէտք է համա-
կերպուել շահի կանանց մտադրութիւնների հետ,
որովհետեւ թնդանօթածիգ զնդի ձիաները միեւնոյն
ժամանակ բարձրագոյն հարէմի ձիաներն են: Կը-
րունկներին ձեռնափայտով խփելու պատժից ազատ
չեն նոյն իսկ սպաները, մինչև իսկ զնդապետ-
ները, և պատիժը տեղի է ունենում ստորա-
գրեայների ներկայութեամբ: Պարսիկ զինուորն
աչքի ընկնելով իւր անչափ ինքնագովութեամբ,
միեւնոյն ժամանակ և անչափ երկչոտ է. մինչև
Ռուսաստանի Մերվ քաղաքին և Թուրքեստանին
տիրապետելը, յաջախակի են եղել Մերվ քաղա-
քում պատահածի նման փաստեր, այսինքն երբ
թուրք կողոպտողների մի բուռը մասը յարձա-
կուել է շահի զօրքի վրայ՝ հեշտութեամբ պա-
շարել է նրան, յետոյ սպաներին և զինուորնե-
րին միմեանց հետ զոյգ զոյգ կապած՝ թնդանօթ-
ների հետ գերի են տարել:—Աւղանիստանում
զօրքի կազմակերպութիւնն համարեա բոլորովին
ասիական է, բայց առանց բարեփոխութիւնների
էլ նա ուժեղ է աւղանական պատերազմական
ժողովրդի քաջութեամբ: Ամենից յաջող կերպով
զարգացաւ Եգիպտոսի զօրքը: Թէ Մահմէդ-Ալին
և թէ նրա յաջորդները չինայեցին ծախսելու,
միայն թէ իրենց զինուորներին օրինակելի դար-
ձնեն, իսկ Սայիդն այն աստիճանի ոգևորուեց,

որ իւր զօրաբանակի իւրաքանչիւր զինուո-
րին ընծայեց ժամանակաչափ (хронометръ) և
խրախուսեց ծանր ոսկեթել ժապաւէններով:
Բայց այժմ Եգիպտոսի զօրքերի մասին կարիք
չկայ երկար խօսելու, որովհետեւ Եգիպտոսի ինք-
նուրոյնութեան վիճակն արդէն որոշուած է. նա
անգլիացիների ձեռքն ընկաւ և կարելի է ենթա-
դրել, որ ի բախտաւորութիւն իրեն ընդ միշտ
կը մնայ նրանց ձեռքում:

Վերև նկարագրուած ինքնուրոյն մահմե-
դական իշխանութիւնների պետական կազմու-
թիւնից նեղում են բոլոր հպատակները, բայց
ամենից շատ Տաճկաստանի քրիստոնեաները,
որոնք զրկուած իրաւունքներից, միշտ ենթակայ են
աւարառութիւնների և այդ բոլորից յետոյ էլ
վտանգուած է նրանց կեանքը: Ի՞նչ է պատահում
դժբախտ հայերի հետ, այդ ամենքին էլ յայտնի
է. նոյնպէս յայտնի է բոլորին, որ զազանու-
թիւնների մեղսագործներն ոչ միայն չեն արժա-
նանում պատժի, այլ ընդհակառակը կառավա-
րութիւնից պարգևներ են ստանում: Մինչև ան-
գամ Ասորիքում, այն երկրում, որը տաճկական

ուրիշ դաւառներից քրիստոնեաների համար աւելի ապահով է համարուում մահմեդականը սպանելով քրիստոնեային՝ անպատիժ է մնում: սկզբում մի որ և է հիւպատոսի պահանջով նա բանտ կը նստի, իսկ երեք օրից յետոյ տաճիկ կառավարութեան շնորհիւ ազատ կը համարուի (մանաւանդ եթէ կաշառք էլ ստանան), և բոլորին ծանօթ մարդասպանը հպարտ կերպով անցուղարձ կանի, օրինակ այնպիսի բազմամարդ փողոցով, ինչպէս Բէյրութի Բիւրժն է:

Ն ե r f ի ն կ ե ա ն f ը.

Նկարագրելով իսլամական երկրների ժամանակակից պետական կազմութիւնը, անցնենք նրանց ներքին կեանքին, մօտենանք ժամանակակից ընտանիքին, ուսումնարանին, կրթութեան և զրականութեան, արդիւնաբերութեան և վաճառականութեան:

ա) Ը ն s ա ն ի f:

Մահմեդական ընտանիքի աչքի ընկնող նշաններն են—բազմակնութեան և հարէմի իրա-

ւունքը: Բազմակնութեան իրաւունքն իսլամական ժողովրդի կեանքի վրայ էապէս մեծ ազդեցութիւն չունի: Ո՞վ է նրանից օգտուում: Նա, ով որ փող ունի, այսինքն բարձր և հարուստ դասակարգը: Բայց երևում է, որ քրիստոնեական երկրներում էլ նոյն դասակարգերը de facto բազմակն են, նշանակում է հարուստ և նշանաւոր մահմեդականների անբարոյականութեան պատճառը պէտք է փնտռել նրանց կեանքի տնտեսական պայմանների և ոչ թէ բազմակնութիւնը կրօնական օրէնք դարձնելու մէջ: Նոր ժամանակներում բազմակնութիւնը եւրոպականացրած ձևով—պոռնկատներ յաճախելը, սկսել է մտնել և մահմեդական ժողովրդի միջին դասակարգի մէջ, դրաւուելով ֆրանսիական քաղաքակրթութիւնից *), բայց հասարակ մահմեդականները պա-

*) Արեւելքի թէ պահպանողական և թէ ազատամիտ մամուլի մէջ համարեա ամեն օր կարելի է հանդիպել բողոքների բարքերի անկման մասին և այնպիսի հիւանդութիւնների տարածման վերաբերեալ, որ 50 տարի առաջ արեւելքում անյայտ էին և այլն: Արաբական «Լիւբնան» լրագիրն իւր համարներից մէկում (1898 թ. № 215) այդ մասին առանձնապէս դառն կերպով գանգատուում է, ի պատիւ մահմեդականների պէտք է նկատել, որ նրանց միջին դասակարգը, մինչև անգամ ծանօթանալով ֆրանսիական բարքերի հետ, յաճախում է

հում են մի կին և չեն օգտուում բազմակնու-
թեան իրաւունքից. մինչև անգամ ամուսնայու-
ծութիւնը, որ մահմեդական օրէնքով շատ հեշտ
է, նրանց մօտ հազուադէպ է: Մահմեդական ըն-
տանիքի կազմակերպութեան իսկական չարիքը,
անբարոյականութեան և մտաւոր անշարժութեան
աղբիւրը հարէմն է: Կինը համարուում է ստրուկ
կամ այնպիսի առարկայ, որին կորստից աղատե-
լու համար պէտք է կողպած սենեակում պա-
հել կամ դնել կողմնակի աչքերից հեռու. դրա
համար տունը բաժանուում է երկու մասի, մէկը
հիւրերի համար «ընդունարան», միւսը—հա-
րէմ^{*}), այսինքն «արդելուած տեղ»: Մանր յան-
ցանք է խանդարել հարէմի սրբութիւնը, այսինքն
սիրել մի որ և է օտար կնոջ: Եւ ահա հարէմի
սկզբնական հետեանքներից մէկն էլ այն է եղել,
որ մահմեդական տղամարդիկ չունենալով իրենց
հարէմը և չկամենալով իրենց կեանքը վտանգի
ենթարկել օտար հարէմներում՝ ստեղծեցին բիւ-

հասարակական տներն աւելի քիչ, քան «լուսաւորուած»
արեւելեան քրիստոնեաները, թէև մահմեդականների մօտ
վաւաշտութիւնը չափազանց աւելի զարգացած է, քան
թէ քրիստոնեաների մօտ:

^{*}) Հարէմ պարսիկների մօտ նշանակուում է «էնդե-
րուն» այսինքն ներքին բնակարան:

ղանդական և պարսկական արատը—արուագիտու-
թիւն: Հետզհետէ այդ արատն աւելի աղքատ-
մարդկանցից լայն չափով տարածուեց և հարուստ-
ների մէջ, որովհետև նա աւելի և աւելի բնա-
կան դարձաւ. փակ կեանքի շնորհիւ մահմեդա-
կան կինը բթամիտ դարձաւ և այն համոզմունքը
կազմուեց կնոջ մասին, թէ անկարելի է բարձր
սիրով սիրել այնպիսի յիմարի՝ ինչպէս կինն է,
իսկ գեղեցիկ, խելօք և կենդանի երեխան իսկա-
պէս «յափշտակում է սիրտը»: Հաֆիզի աշխա-
տութեան այն կտորները, որոնք լցուած են բարձր
անկեղծ քնարերգական զգացմունքներով՝ նուի-
րուած են երեխաներին: Մի քանի տեսակէտից
երկու սեռերի բաժան կեանքը փաստակար կեր-
պով է ազդում երկու սեռերի բարոյականութեան
վրայ: Տղամարդիկ իրենց շրջանում ճնշուած չը-
լինելով կանանց հասարակութիւնից, շատ յաճախ
ունենում են երկար և կեղտոտ խօսակցութիւն,
իսկ սովորական խօսակցութիւնների մէջ միշտ
լինում են զգուելի և հայհոյական ոճեր: Երե-
խաների ներկայութիւնից չեն քաշուում. չէ որ
նրանք էլ նոյն սեռից են և դրա համար մահմե-
դական երեխայի երեւակայութիւնը մանկութիւ-
նից թունաւորւում է վաւաշտութեամբ: Նոյն
տիւրը հետեանքները կարելի է տեսնել և կա-
նանց հասարակութեան մէջ: Վամբերիի ասելով:

իսկապէս տանջուամ է մարդ, երբ պատահաբար լսում է մի որ և է մատրօնայի (նշանաւոր հռովմէացի կին) և երիտասարդ աղջիկների մէջ եղած խօսակցութիւնն: այնպիսի նիւթի մասին, որ կարող էր կարմրացնել եւրոպական ամենապտուր անբարոյական կնոջ: Ամուսնական կեանքի դադարն ինքները մերկացնում են երեսանների ներկայութեամբ առանց որ և է խղճահարութեան, ուստի և զարմանալի չէ, որ մահմեդական աղջիկները չորս կամ հինգ տարեկանից սկսած խօսում են անսանձ լեզուով: Գաստիարակութեան այդպիսի պայմանները թողնում են մահմեդականի երեսի վրայ առանձին կոպիտ կրքոտ հետք, որով փորձուած դիտողը կարողանում է միշտ առանց սխալուելու որոշել նրա կրօնը: Հարէմից ստացած ամենամեծ դժբախտութիւնն այն է, որ նա կատաղի թշնամութեան տնկարան է դէպի ամեն յառաջագիմութիւն և բարեկարգութիւն: Կինը հին կարգերի և սովորութիւնների յարաբերութեամբ ամեն տեղ պահպանողական է, իսկ մահմեդական կինն իւր նեղ մտաւոր հորիզօնի պատճառով ևս առաւել բացի դրանից հարէմում ունենում են իրենց ազդեցութիւնը դանաղան տնային մօլլաներ, որոնք ամեն նոր բանի հակառակորդ են: Երեսան մինչև տասը տարեկան հասակը մեծ մասամբ ժամանակն անց է կացնում

հարէմում և անդադար լսում է, թէ ինչպէս նախատում են հօրը, որը մտածում է եւրոպական փոփոխութիւններ մտցնել սելիմիիկի, շորի և կեանքի ձևի մէջ և այլն: Երեսան անդիտակցաբար զղուանք է տածում դէպի այն ամենը, ինչ որ դալիս է քրիստոնեաներից, և յետոյ չափահաս դարձած ժամանակ դժուար է լինում հեռացնել այդ հայեացքները, մանաւանդ՝ եթէ նա մտածել չսիրող թուրք է: Հարէմն այս հակացողութեան սովորական մտքով, այսինքն կանանց երեսը ծածկոցով ծածկելու օրէնքը, դուրս թիւն ունի մահմեդականների մօտ ոչ ամեն տեղ: Քիչ քաղաքակրթուած ժողովուրդները, օրինակ քուրդերը (բացի բարձր դասակարգից), չինական մահմեդականներն և ուրիշները հարէմ չգիտեն, որովհետև նրանց կեանքի նկատմամբ անյարմար է: Առանձնապէս թափառական արարների կինն աւելի ազատ է, ուստի բեղուն կինն աչքի է ընկնում իւր խելքով և եռանդով, իսկ հակաբնական արատներն էլ նրանց մարդկանց մէջ չէ տարածուած. ինչ վերաբերում է նստակեաց արարներին, նրանց մօտ թէև հարէմ կայ բայց ճշող և ֆրաստար հետեանքներ ունենում է միայն մեծ քաղաքներում կամ հասարակութեան բարձր դասակարգի մէջ: Իսկական հարէմն իւր բոլոր փչացնող հետեանքներով ծաղկում է

Տաճկաստանում և Պարսկաստանում: Պէտք է նկատել, որ մի քանի մահմեդականներ զգացել են հարէմից առաջ եկած չարիքը, և գիտակցել նրանց բարեփոխելու կարիքը: Պարսկաստանում կանանց ազատութեան համար կուռում էր բաբինների զօրեղ աղանդը, բայց դրանք էլ հերետիկոսներ էին: Սակայն Կովկասում բազուեցի նախարարիւնաբերող Թաղիեվը՝ 1896 թ. ապրիլ ամսին Կովկասի հոգաբարձութիւնից թոյլտուութիւն խնդրելով ուսումնարաններ բաց անելու մահմեդական աղջիկների համար, ասել է հետեւեալը. «Մահմեդական կնոջ փակ կեանքն և դրանից առաջացած անգիտակցութիւնը դէպի իւր մարդկային իրաւունքները՝ պահում է նրան կեղծկրօնական հիմքի վրայ», «հարէմն արհեստական կերպով շարիաթի կանոնների շարքն է անցել մի քանի հնացած ասիական ժողովրդների բարքերի և սովորութիւնների միջոցով»: Պատմական տեսակէտից այդ ճիշտ չէ. հարէմը հաստատուած է իրեն Մահմեդի ձեռքով Այիշայի անհաւատարմութեան զիպուածով. իսկ Թաղիեվի ձգտումն դարձնել այդ հաստատութիւնը (հարէմը) ոչ կանոնական—այդ ժամանակի նշանն է: Մի քանի յայտնի բէյրութցի-արաբացի ամուսինները թոյլատրում են իրենց կանանց յաճախել «զրականական-գիտական հասարակութեան» հրապարա-

կական ժողովներին: Պօլսում նոյնպէս դէպքեր են եղել, որ յառաջադիմութեան բարեկամ ամուսիններն աշխատել են ազատել իրենց կանանց հարէմի ճնշումներից: Բայց հազիւ թէ այդ կողմից կարելի լինի սպասել արագ փոփոխութիւններ, մանաւանդ թուրքերի մէջ: Օրինակ տաճկաց յառաջադէմ համիկ-ֆեամալ բէյի վէպի մէջ— «Ալի-բէյի արկածները», հարէմական կարգերը նկարագրուած են մեծ և ինքնամոռացութեան հասնող համակրանքով:

Կանանց ազատութեան վերաբերեալ տաճկական հայեացքների բնութագրի համար ուսանելի է մօլլա մուդերրիս Բայազիտօվի աշխատութիւնը, մի մարդ, որ ուրիշ կողմերից շատ ազատամիտ է ներկայանում: պաշտպանում է գիտութեան ազատութիւնն իսլամի մէջ, զինուում է կրօնական անհամբերողութեան դադափարի և մոլեռանդութեան դէմ և այլն: Այդ աշխատութիւնն է. «Իսլամի վերաբերմունքը դէպի գիտութիւնն և օտարապաւանները» (Պետերբուրգ, 1888): Մօլլա Բայազիտօվը համաձայն չէ եւրոպացիների այն կարծիքի հետ, իբր թէ մահմեդական կինը ստոր դիւք ունի: Չէ, որ քրիստոնեաների մօտ, ասում է նա, հարսն է իւր հետ օժիտ բերում, իսկ մահմեդականների մօտ ընդհակառակը փեսացուն ինքն է հարսի համար վճարում կալիւս, — «դրա-

նից յետոյ ուղիղ չի լինիլ (sic?) ասել, որ մահ-
մեղականների մօտ կինն աւելի բարձր է կանգ-
նած, քան եւրոպացիների մօտ» (էջ 73): Մարդ-
կանց բռնակալութիւնը դէպի կանայք երևան է
գալիս միմիայն Ֆիզիքական հանգամանքներում
որովհետեւ մարդիկ իրենց ամենաբնական պա-
հանջների ժամանակ ոչ մի անգամ ուշադրու-
թեան չեն առնում իրենց կանանց առաջ բերած
պատճառաբանութիւնները, թէ իրենք տրամա-
դրուած չեն, թէ քայքայուած են իրենց ջղերն
և այլն (երես 72): «Իսկ ինչ որ վերաբերում է
այն խնդրին, որ կանանց արդելուած է տղա-
մարդկանց հասարակութեան մէջ մնալ, փիլիսո-
փայական տեսակէտից այդ բոլորովին խելացի է:
Խրաֆանչիւրից հասկանալի է, որ կանանց ա-
զատ մոլորքն ամեն տեղ—ոչ այլ ինչ է, եթէ ոչ
գայթակղութեան քարոզ և սէր սերմանելու հողի
պատրաստութիւն» (էջ 73): Ահա թէ ինչու մօլ-
լա Բայազիտօֆն ոչ միայն չէ ցանկանում մահ-
մեղական կնոջ վիճակի փոփոխութիւնն եւրոպա-
կան ոգով, այլ ընդհակառակը ցաւում է եւրո-
պացիների համար, որ սրանք չեն ճանաչում հա-
րէմը: «Բաւական է» որ եւրոպացի կինը թաղ-
անի աչքերն արտասուքներով նա զրանով ծած-
կում է իւր բոլոր սխալներն և հասարակու-
թիւնը կամաց կամաց ընտելանում է և զիջողու-

թեամբ վերաբերում դէպի նրա սխալները, ինչ-
պէս երեսայական յանցանքներ (էջ 74): Մի ժա-
մանակ Մօրիէրը հաղորդում էր, որ տղամարդ-
կանց հետ խօսող եւրոպացի կինը մի մահմեդա-
կանի աչքում երևում էր իբրեւ քած շուն, որի
հետեւից վազում են որձ շները: Պետերբուրգի
գիտնական մօլլան նոյնպէս տրամադիր է ընդու-
նելու այն միտքը, որ եւրոպական հասարակու-
թիւնը յիշեցնում է «էգերի և որձերի ազատ
երամներ» (էջ 74): Նա բարի խրատ է տալիս եւ-
րոպացիներին, իրենց մէջ մտցնել եթէ ոչ հա-
րէմի բանտարկութիւն, զոնէ դրա տեսակ մի
բան և դրա մէջ կարելի է տեսնել այժմեան ջը-
ղայնութեան դէմ լաւ դեղը: «Ուրբան դժբախ-
տութիւններ կարելի էր ոչնչացնել, վիճակադու-
թիւնը կրտար աւելի պակաս հոգեկան հիւանդ-
ներ և ինքնասպաններ» (էջ 75): Մօլլա Բայազի-
տօֆի կարծիքով այդպիսի միջոցների ներմու-
ծումը չպէտք է փակել երկար արկղի մէջ: «Իրա-
ւաբանութիւնը օրէնքներ է սահմանել ուրիշի
սեպհականութիւնն իւրացնելու դէմ: Մի՞թէ կա-
նայք թանկադին մետաղներից և շարժական հա-
րստութիւնից աւելի էժան գին ունին: Ինչո՞ւ
կրթուած աշխարհն այդպէս մատերի արանքով է
նայում և ուղում է նոյն իսկ ծիծաղել այն
վերաւորանքների վրայ, որոնց իւրաքանչիւր

օր ենթակայ է մարդկանց արժանաւորութիւնը»
(էջ 76):

բ) Ուսումնարան, կրթութիւն եւ գրականութիւն:

Իսլամը շատ վաղ ժամանակից սկսած նպաստել է ուսումնարանական գործին և այժմ մահմեդական ամենափոքրիկ զիւղը զուրկ չէ ուսումնարանից: Ուսումնարան հիմնել միշտ աստուածահաճոյ գործ էր համարուում որովհետեւ մահմեդական ուսումնարանի դասաւանդութեան գըլ՝ խաւոր նպատակն էր—երեխային Ղուրանը կարդալ սովորեցնել և իմանալ ամենակարեւոր աղօթքները: Ուսումն կենդրոնացել է մէջիտներին մօտ և խալիֆների ժամանակից սկսած միշտ եղել է հոգեւորականութեան (ուլէմների) ձեռքում: Հաստատուեց երկու տեսակի ուսումնարան. 1) մեկթէք (мектеб), տարրական ուսումնարան, որտեղ ծխական իմամը սովորեցնում էր ընթերցանութիւն և եթէ ցանկութիւն էր լինում նաեւ գրութիւն. 2) մեդրեսէ (медресе)—հոգեւոր սեմինարիայի մի տեսակը, հաստատուած մեծ մէ-

ջիտների մօտ վակուֆի (եկեղեցական գոյք) հաշուով: այդպիսի ուսումնարանների դասատուները կոչւում էին «մօդեռիսներ», իսկ աշակերտները—արաբական բառով «թալիբ» («փնտռող», այսինքն գիտութիւն), կամ պարսից բառով «սուխթէհ» («այրուած»—այսինքն գիտութեան սիրով), որտեղից և ծագել է տաճկական «սօֆթա»: Այդ երկու միջնադարեան ձևի ուսումնարանները պահպանուել են մինչև ներկայ դարն ամբողջ մահմեդական աշխարհում: Մալայեան արշիպելագից սկսած մինչև Բարբարոսների իշխանութիւնները: Այժմ մի քանի երկրներում փոփոխութիւններ են առաջացել ուսումնարանական գործի մէջ, իսկ ուրիշ տեղերում, ըստ հնագոյն ձևի, լուսաւորութեան և գրականութեան ճաշակների միակ տնկարանը ներկայանում են կրկին նոյն մեկթէքներն և մեդրեսները, որոնց առաջնորդում են հոգեւորական տգէտ ուսուցիչները:

Մահմուդ Բ-ը ցանկանալով ճաճկաստանում եւրոպական ձևով սպաներ և զինուորական բժշկներ ունենալ, Պոլսում հիմնեց զինուորական կայսերական ճեմարան և բժշկական կայսերական ուսումնարան, որոնք և այժմ խախուտ զրութեան մէջ են: Ուսումնարանական գործի մէջ այդ առաջին նորամուծութիւնն էր: Աբդուլ-Մեջիտը 1846 թ. հաստատեց աշխարհական «ժողո-

վրդական լուսաւորութեան պալատ» և մեկթէք-
ները խելց հոգեւորականութիւնից, թողնելով նրան
(նշանակում է շէյխ-իւլ-իսլամին) միայն մեզրես-
ներ, որ այդ ժամանակից սկսած սեմինարիաների
նշանակութիւնն է ընդունել: 1869 թ. Աբդուլ-
Ազիզի շնորհիւ հաստատուած են կանոններ պե-
տական և մասնաւոր դպրոցների համար: Մաս-
նաւոր դպրոցներն էլ չեն հանուած նախարա-
րի հսկողութիւնից, բայց դասաւանդման ծրա-
գրի նկատմամբ նախարարութիւնը չէ խառնուում
և ահա մասնաւոր դպրոցների շարքում են դա-
սուած մեզրեսները, որոնք ոչ մի յառաջադի-
մութիւն չեն ցոյց տալիս, շարունակում են յա-
մառութեամբ պահպանել միջնադարեան ծրագիր-
ներն և մշակում են իրենց սօփտաներից (սեմի-
նարիստներից) մահմեդական մոլեռանդութեան
գոյնը: Ինչ վերաբերում է կառավարութեան դըպ-
րոցներին, 1869 թ. բարձրագոյն հրամանի համա-
ձայն նրանց թիւը պէտք է շատ լինէր, և՛ բարձ-
րագոյն, և՛ միջնակարգ և՛ ստորին, բայց ընդհա-
կառակը խոստումների ամենաչնչին մասն է իրա-
կանացած (ճաճկաստանում թղթի վրայ գոյու-
թիւն ունին զիտութեան ամենափայլուն տաճար-
ները): Սովորաբար տաճկական պետական ուսում-
նարանները պատկանում են ամենաստորին կար-
գին: Նրանցից մի քանիսը բոլորովին տարրական

են, փոքր երեխաների համար, ինչպէս օրինակ
«սիրեան մեկթէք», որոնք նոյն ծառայութիւնն
են ցոյց տուել, ինչ որ հին մեկթէքները: Միւս-
ները — «րուշդիէ մեկթէք» — ուսուց «քա-
ղաքական երկդասեան ուսումնարանների» տե-
սակը, որտեղ աւանդում են տաճկաց, արաբա-
ցոց և պարսից քերականութիւնը, այդ ուսումն-
նարաններում ուսումնի աւանդում է անշնորհ
կերպով, որովհետեւ ընդունակ և հմուտ ուսու-
ցիչներ չկան: Զինուորական դպրոցներում բուշդիէի
դպրոցներից աւելի զիտութիւն է աւանդում:
Բացի դրանցից կան նոյնպէս տարրական զինուո-
րական դպրոցներ: Միջնակարգ դպրոցներ, ինչպէս
զիմնագիտաները, ճաճկաստանում համարեա թէ
չկան, եղածն էլ ինչ որ կայ (Պօլսում) համար-
ւում են բարձրագոյն դպրոցներ և ոչ թէ միջ-
նակարգ, տաճիկ ուսանողների մեծամասնութեան
համար միջնակարգ կրթութիւնը սահմանափակ-
ւում է անցնելով բուշդիէի դասընթացը*): Ով
որ Պօլսում է ապրում, նա կարող է ստանալ
կրթութիւն, և ամենալաւը — կամ մասնագիտա-
կան դպրոցներում, օրինակ բժշկական, աստիճա-
նաւորների, ճարտարապետական, ուսուցչական,

*) Այդպիսիների թիւն էլ մեծ չէ: Մեծամասնու-
թիւնն ամենախաւար տղիտութեան մէջ է:

կամ թէ բաւական լայն միջնադարեան ծրագիր ունեցող դպրոցում—«սուլթանական լսարանում»*) և ուրիշ նման ուսումնարանում, որոնցից մի քանիսը յաւակնութիւն ունեն համալսարանական մասնագիտական բաժնի դերը խաղալու: Ինչպէս տեսնում ենք, այն օսմանցիները, որոնք սովորում են միայն իրենց դպրոցներում, հիմք չունեն հռչակուելու իրենց կրթական ցենզով**): Ուսման համար թուրքերը գնում են և արտասահման՝ մտնելու եւրոպական համալսարանները:

*) Տաճկերէն կոչւում է «Մեկթէբի սուլթանի» բացումը է 1868 թ. բոլոր դաւանութեանց պատկանող աշակերտների համար, եւրոպական դասաւանդութեամբ ֆրանսերէն լեզուով: Սովորողների մեծամասնութիւնը— ոչ թէ թուրքեր են, այլ յոյներ, հայեր, հրէաներ, սերբեր և այլն (նոյնը տեսնում ենք և մասնագիտական դպրոցներում):

**) Բայց նրանք, ինչպէս յատուկ է թերուս մարդկանց, իրենց ստացած գիտութեան պատճառով լցուած են բոլթ ինքնաբաւականութեամբ: Մի անգամ յոռետես կերպով ևս նրանցից մէկի հետ խօսակցում էի. «Միթէ կարելի է մի բան սովորել ձեր ուսումնարաններում. ինչ են ներկայացնում ձեր դպրոցները, նոյն իսկ բարձրագոյնները»: Իմ հարցերին պատասխան արուեց ամենայաղթական տօնով. «Չեղ մօտ—Ռուսաստանում արդեօք բնագիտութիւն սովորեցնում են Այո Բայց մեզանում սովորեցնում են»:

որտեղ սովորաբար դառնում են այսպէս կոչուած «երիտասարդ թուրքեր»*): Բայց միայն նրանց ամենափոքրիկ մասն է կարողանում օգտուել եւրոպական համալսարանական գիտութիւնից, ինչպէս հարկն է և ճշմարիտ կրթութեամբ մարդ դառնալ. մեծ մասամբ ոչ պատրաստութիւն և ոչ էլ ջանասիրութիւն ունեն. սակայն դեռ լաւ է, որ զոնէ համալսարանների յառաջագէմ ուղղութիւնը զրաւում է նրանց և այդ իրենց զործունէութեան վրայ բարերար հետեւանք է ունենում: Տաճկաց հասարակութեան մտաւոր կարողութեան նպաստում է և զրականութիւնը: Մինչև բարեփոխութիւնները տաճկաց զրականու-

*) Վերջին ժամանակ «երիտասարդ թուրքեր» տերմինը դործ են ածում բաւական անորոշ կերպով: Այդպէս պիտի կոչել այն կուսակցութիւնը, որոնք ձգտում են վերակազմել Տաճկաստանն եւրոպական ոգով. նորագոյն ժամանակներում մինչև անգամ նրանք ձգտում են այդ բարեփոխութիւնները կատարել նոյն իսկ ոչ մահմեդականների համար: Հարկաւ այդ կուսակցութիւնը զանաւում է ընդդիմադրութեան մէջ տաճիկ կառավարութեան հետ: Բայց Տաճկաստանում կայ մի այլ ընդդիմադիր կուսակցութիւն—պահպանողական, որոնք դժգոհ են սուլթանից նրա ամենափոքրիկ նորամուծութեան համար: Լրագիրներն երբեմն և այդ ընդդիմադիր կուսակցութիւնը կոչում են «երիտասարդ Տաճկաստան»:

Թիւնը բաղկացած էր զլիսաւորապէս կամ սիօ-
լաստիքական համիսլամական տիպ ունեցող կամ
հին պարսկական և արաբական բանաստեղծնե-
րին և վիպասաններին տառաջի նմանող աշխա-
տութիւններին: Ներկայ ժամանակում էլ իրենց
աշխատութիւնները կազմում են նախկին ձեռն-
մանաւանդ հոգեւոր ուղղութեամբ: Սրանց շար-
քում գոյութիւն ունի և նոր գրականութիւնը:
Նա աշխատում է նմանուել եւրոպականին և
քարոզել եւրոպական ուղղութիւնը: Ամենից յա-
ջող զարգացաւ լրագրական գործը *), բայց տաճ-
կաց լրագրերի մեծամասնութեան մէջ բովանդա-
կութիւն փնտռել անկարելի է: Եւ բանասիրական
բաժնում և առանձին հրատարակութիւններով
թարգմանւում են անբարոյականացնող ֆրան-
սիական քոմաններ. իսկ այսպիսի քոմանների ուղ-
ղութեամբ էլ գրում են իրենցը, կոպիտ նմանո-
ղութեամբ: Անկրթութիւն ամբոխի: Անառակ
կանանց կեանքի նկարագրութիւնը սովորական
բան է: Տաճկական ժամանակակից գրականութիւ-
նից ստացած տպաւորութիւնը սկզբում լինում
է խիստ տհաճ, և միայն հետզհետէ տպագրուած
անպէտք բաներից երբեմն երևում է մէկ կամ
երկու համակրելի բան, օրինակ թարգմանութիւն-

*) Թուրքերը չունեն ամսագրեր, կարիք չեն զգում:

ներ, պատմական և առհասարակ ընթերցանու-
թեան համար օգտակար գիտական գրքերի փո-
խադրութիւններ. բայց ափսոս, որ այդպիսի գրք-
քերն էլ ընթերցողներ չեն գտնում: Մի հանգա-
մանք մենք կարող ենք նշանակել ուրախութեամբ.
կրթուած թուրքերը մեծ պահանջ են զգում
ռուսաց հեղինակներից թարգմանուած գրքերի,
ռուսաց գրականութեան անցողական շրջանի մէջ
նրանք տեսնում են իրենց շատ ծանօթ դէմքեր:
«Մեր ժամանակի հերոսը» գրքի մէջ իրենք իրենց
ճանաչում են. «Իւ»-ի թարգմանութիւնից շատ
կտորներ անգիր գիտեն, «Խելքից պատուհաս»
գրքում զիտում են իրենց ժամանակակից բար-
քերը:

Արաբական ցեղի կրթութեան մակերևոյթը
շատ կողմերից աւելի բարձր է, քան տաճիկնե-
րինը: Այն արաբական նահանգներում, որոնք
գտնւում են տաճկաց իշխանութեան ներքոյ, պաշ-
տօնական կրթութիւնը գրուած է աւելի վատ
հիմունքների վրայ, քան թէ ուրիշ արաբների
մօտ:

Տաճկաստանը տիրապետող ժողովրդի հա-
մար էլ քիչ բան է արել, իսկ արաբների համար,
այդ չսիրուած զաւակի համար, անհամեմատ ա-
ւելի քիչ է հոգ տանում: Դրա համար Արաբիան
դեռ ևս չէ ազատուել իւր միջնադարեան գրու-

Թիւնից, իսկ Ասորիքը (Պաղեստինի հետ միասին) իւր զարգացմամբ պարտական է ոչ թէ ծածկաստանին, այլ մասամբ ազգասէր—արաբացիների առանձին հարուստ մարդկանց եռանդին, որոնք հիմնում են իրենց ուսումնարաններն, և մասամբ (նոյն իսկ կարելի է ասել առաւելապէս) եկեղեցիատոնեայ միսիօնարների զործունէութեան: Ասորիքի համար ամենից աւելի աշխատել են ամերիկական և անգլիական միսիօնարները. բացի բազմաթիւ ստորին ուսումնարաններից, հիմնուած իւրաքանչիւր շատ ու քիչ մեծ դիւղում, նրանք —այսինքն ամերիկացիները Բէյրութում հիմնեցին (1866) «Ասորական բողոքական դպրոց», բաղկացած «համալսարանից» այսինքն միջնակարգ հիմնարկութիւնից և բժշկական մասնագիտական ճիւղից: Առաջին ուսուցչապետները (պրօֆեսսոր), որոնք եկել էին Ամերիկայից, աշխատում էին բոլորովին արաբացի դառնալ. արաբական լեզուն աւելի լաւ սովորեցին, քան դիտնական արաբացին, այնպէս որ ոչ միայն դաս էին աւանդում այդ լեզուով, կազմում դասադրքեր և իրենց մասնագիտութեան վերաբերեալ ուրիշ զրքեր, այլ և դարձան յայտնի արաբական հեղինակներ և հայրենասէրներ. նրանք թէ անձամբ, թէ իրենց ձեռքով կազմակերպած հեղինակների մի շօլայի միջոցով աշխատում էին եւրոպական զիտու-

թիւնները տեղափոխել արաբական հոգի վրայ: Ինչպէս և հետաքրքրութիւն զարթեցնել դէպի հարուստ արաբական գրականութիւնը, որն ըսկսել էին մոռանալ Ասորիքի արաբները: Բողոքական միսիօնարների օրինակին որոշ չափով հետեւում էին նրանց հակառակորդ եզուիդները. նրանք ևս ամբողջ Ասորիքը ծածկեցին ստորին դպրոցների ցանցով, առարկաներն աւանդելով արաբական լեզուով. իսկ Բէյրութում հիմնեցին «Ս. Յովսէփի համալսարանը» (դասաւանդութիւնը Ֆրանսերէն լեզուով), որի մէջ կայ երկու միջնակարգ ուսումնարան (աշխարհական դպրոց և սեմինարիա) և բժշկական մասնագիտական ճիւղ (ֆակուլտետ). արաբական լեզուի հիմնական դասաւանդութեան վրայ եզուիտները լուրջ ուշադրութիւն են դարձնում իսկ իրանց տպարանը հրատարակել է հին արաբական գրականութեան վերաբերեալ շատ հետաքրքիր յիշատակարաններ: Մահմեդականները յաճախում են քրիստոնէական դպրոցները փոքր քանակութեամբ, բայց որովհետեւ մահմեդական արաբների և քրիստոնեայ արաբների գրականութիւնը միևնոյն է, ուստի եւրոպացիների միջոցով մոռուած դադափարները չեն կարող սեպհականութիւն մնալ միայն քրիստոնեայ-արաբներին, կամ թէ միայն այն մահմեդականներին, որոնք սովորել են քրիստոնեայ

դպրոցներում—ներկայ ժամանակում արաբական
կրթութեան և արաբական դրական կեանքի կենդ-
րոնը—եզիպտոսն է։ Մինչև անգամ միջնադարեան
սխալաստիքական ուսումնարանն այնտեղ կանգ-
նած է իւր բարձրութեան վրայ. հին արաբական
գիտութիւնը,—որ խառնուրդ է աստուածաբա-
նութեան, մատեմատիկայի, բժշկականութեան և
այլ ուրիշ գիտութիւնների, մինչև այժմ ծաղ-
կում է մեղրեսում Ազդար մեչիտին կից։ Այդ
մեղրեսը համարւում է բարեպաշտ մահմեդա-
կան Արևելքի ճեմարան, ուր մտնում են իսլա-
մական աշխարհի ամենահեռաւոր կողմերից եկած
ուսանողները (թէև անպատրաստ), որոնց թիւը
հասնում է 10—11 հազար։ Կարծում են, թէ
այնտեղ, որտեղ ուժեղ կերպով ծաղկում է մահ-
մեդական կրթութիւնը, չէ կարելի յուսալ
եւրոպական կրթութեան յաջողութեան վը-
րայ։ Սակայն իրականութիւնը հերքում է այդ
ենթադրութիւնը. այդ կողմից եզիպտոսն առաջ է
գնացել միւս մահմեդական երկրներից։ Այդ աւելի
նշանաւոր է նրանով, որ Մահմեդ-Ալին, ուսում-
նարանական գործի առաջին բարեկարգիչը (բե-
ֆորմատոր) եզիպտոսում, և ուրիշ խեղիվներ
(ծագումով թուրքեր) լիակատար չէին ըմբռնել
ուսումնարանների ամբողջ կարեւորութիւնը հա-
սարակութեան յառաջադիմութեան գործի հա-

մար. զօրքի համար նրանք անհամեմատ սիրով
էին փող ծախսում։ Սակայն հետզհետէ եզիպ-
տոսը ծածկուեց և ստորին և միջնակարգ և
բարձրագոյն դպրոցներով (պետական և մասնա-
ւոր և դրանց թւում էլ միսիօնէրական) և մօ-
տիկ անցեալում կարեւոր համարուեց հիմնել ընդ-
հանուր արաբական գիտութիւնների ճեմարան
(առ այժմ միայն գրականութեան համար), թէև
բժշկական կրթութեան համար շատ եզիպտացի-
ներ գերադասում են գնալ Բէյրութ,—Ֆրան-
սիացի-եզովիանների կամ բողոքական-ամերիկացի-
ների մօտ։ Եզիպտոսի զլխաւոր դժբախտութիւնն
այն է, որ միջնակարգ դպրոցներ քիչ կան, դրա
համար բարձրագոյն դպրոցներն էլ լցւում են
պահանջուած կրթութիւնը չունեցող մարդկան-
ցով, որոնք անկարող են լինում գիտութեան ի-
շխակական կողմն ըմբռնել. արաբացին էլ իւր
բնաւորութեամբ չափազանց գործնական է լցուած
ոչ այնքան համակրելի «րէալական» ուղղութեամբ,
և եթէ նա կիսակիրթ է, դրա համար և թող-
նում է այնպիսի մարդու բաւական տհաճ տպա-
ւորութիւն, որն անձնատուր է եղած իւր նիւ-
թական շահերին։ Բարձրագոյն դպրոցներից աչքի
են ընկնում «իրաւունքի և կառավարութեան
(управление) ուսումնարան», «գեղարուեստների և
արհեստների ուսումնարան», նոյնպէս ամբողջ աշ-

խարհում յայտնի «եզիպտաբանութեան» (египто-
логия) ուսումնարան» իւր եւրոպական գիտնական
առաջնորդներով և այլն: Պէտք է յուսար, որ
դէպի եւրոպացիները նրանց գիտութիւնն և կար-
գերն ունեցած ատելութիւնը կարճ ժամանակից
յետոյ վերջնականապէս կանչայտանայ:

Եզիպտոսը գրականութեան կողմից ընդհա-
նուր արաբական գրական կեանքի օջաղն է: Ամե-
նալաւ և ամենայառաջագէմ արաբական հեղի-
նակներն երևան են դալիս Ասորիքում: Բայց տաճ-
կական գրաքննութեան խստութեան պատճառով
շատ յօգուածներ տպագրութեան համար եզիպ-
տոս են ուղարկում: որտեղ մամուլի ազատու-
թիւն կայ: Շատ գրողներ բոլորովին եզիպտոս են
տեղափոխուել և հրատարակել թերթեր, որոնք
ամենալաւն են համարւում: Ժամանակակից արա-
բական գրականութեան աչքի ընկնող կողմն է—
մի կողմից ջերմ սէր դէպի իւր հնութիւնը, իւր
գրականութիւնն և աւանդութիւններն ու լեզուն,
իսկ միւս կողմից տենդային կերպով զրաւում է
եւրոպական գրականութեամբ և գիտութեամբ
(զրա թուում և արեւելագիտութեամբ) և տեղա-
փոխում արաբական հօղի և լեզուի վրայ:
Ամենատաղանդաւոր գրական գործիչները—քրիս-
տոնեայ ասորիները սկզբում դաստիարակուել են
Բէյրութի միսիօնարների մօտ, իսկ յետոյ Եւ-

րոպայի կամ Ամերիկայի մի որ և է համալսա-
րանում: Գրական շրջանում կրօնի տարբերու-
թիւնը բաժանող ազդեցութիւն չունի, մահմե-
դականները նոյնպէս հպարտանում են քրիս-
տոնեայ Զէյդեանի «Խիլեալ» թերթով, որտեղ
տպւում են խմբագրի զրաւիչ բօմանները հին
արաբական կեանքից, կամ քրիստոնեայ Սար-
բուֆի և Նիմրի «Մօքթաթաֆ» թերթով, որն
այնքան գիտական լուրջ ուղղութիւն ունի և որի
երկու խմբագիրներն էլ փիլիսոփայութեան գօկ-
տորի աստիճան ունին: Եզիպտոսը, իբրև ազատ
երկիր, նոյնպէս ծառայում է ճանկաստանի դէմ
ուղղուած քաղաքագիտական լրագրերի կենդրոն:
Եզիպտական լրագրերն մեծ ազդեցութիւն են ու-
նենում ասորոց վրայ:

Պարսկաստանում, նրա հեռաւորութեան
պատճառով, ուսումնարանը, կրթութիւնն և գրա-
կանութիւնը մնում են միջնադարեան աստիճանի
վրայ: Ուսումնարաններն—այդ հինաւուրց մեկ-
թէքներն և մեդրեսները նոյնպէս մնում են իրենց
աղքատ գիտական ծրագրով: Չնայած դպրոցների
խղճալի դրութեան, այնուամենայնիւ պարսիկը
մտաւոր յառաջադիմութեան կողմից դեռ այն-
քան յետամնաց չէ շնորհիւ իւր բնածին ընդու-
նակութեան և հին կուլտուրայի կենդանի մնա-
ցորդի: Այնպէս որ Պարսկաստանում գրագիտու-

թիւնն աւելի տարածուած է, քան ուրիշ մահ-
մեղականների մէջ. ազգային գեղարուեստական
գրականութեան (Ֆիրդուսու, Սահաբի, Հաֆիզի և
Հէյեամայի աշխատութիւնների) և մինչև անդամ
պատմական (Միրխոնդի) գրականութեան մանրա-
մասն ծանօթութիւնը տարածուած է ժողովրդի
ամենաստորին խաւերում: և նոյն իսկ անդրագէտ
Ջրկիրը միշտ կարող է յիշողութեամբ արտասա-
նել պարսից հին բանաստեղծների աշխատու-
թիւններից բաւական մեծ հատուածներ *): Բայց
եթէ նախկին բանաստեղծների աշխատութեանց
ծանօթութիւնն դեռ ևս կարող է ծառայել լու-
սաւորութեան գործին, սակայն հին գիտութեան
ծանօթութիւնն ուղղակի հաւասարւում է տգի-
տութեան. այսպէս օրինակ Պարսկաստանում աշ-
խարհագրութիւնը դեռ ևս աւանդւում է Պըտ-
ղոմէոսի սիստեմով, քաղաքական աշխարհագրու-
թիւնը տալիս է օրինակ հէնց Եւրոպայի կազմա-
կերպութեան մասին ամենամոլթ և մինչև ան-
գամ վայրենի գաղափարներ. իբրև Իրանի պատ-

*) Պարսիկները նոր տաղանդաւոր բանաստեղծներ
չունեն: Երբ Սեֆեան տոհմը իշխեց և շիա կրօնը
դարձաւ պետական նեղ կրօն, Պարսկաստանում կանգ
է առնում ստեղծագործական գործունէութիւնը: Այդ
ժամանակուանից պարսից գրականութիւնը միայն առաջ
է գնում հնի նմանողութեամբ:

մութիւն ծառայում են Ֆիրդուսու «Շահ-նամէ»
հերոսական պօէման և տարեգրութիւններն ա-
ռանց ստուգութեան. արեւմուտքի պատմութեան
մասին տրւում են բոլորովին երեւակայական տե-
ղեկութիւններ, և կամ այնպիսի տեղեկութիւն-
ներ, որոնք հաղորդւում են «Պետրոս Մեծի պատ-
մութեան» և «Նապալիօնի պատմութեան» միջո-
ցով. քիմիայի և տնտեսաբանութեան փոխարէն
թագաւորում է ալքիմիա և աստղագիտութիւն-
թիւն. բժշկութիւնն իբն-Սինայի (կամ Ավիցեննի,
XI դար) «Կանոնա»-ից առաջ չէ գնում, և այլն:
Հիւսիսային Պարսկաստանում, որտեղ գտնւում
է Թավրիզ մայրաքաղաքն և ուր տարածւում է
Ռուսաստանի թոյլ ազդեցութիւնը, և Տաճկաս-
տանից էլ նորութիւններ թափանցում, Միրզա-
Թաղի-խանը բաց արաւ եւրոպական ուսումնա-
րաններ զինուորականների և բժշկների կրթու-
թեան համար. շատ ու քիչ գործում են եկոտոր
միսիօնարներն և առ հասարակ եւրոպացիները.
օրինակ Պարսկաստանը պարտական է ղօկտոր
Պօլլակի և դօկ. Կոկէի ջանքերին, որ անդամա-
ղնութեան և բժշկութեան ուրիշ ճիւղերին վե-
րաբերեալ մի քանի յայտնի գրքեր ունի. շատ
ու քիչ բան, վերջապէս, թափանցում է հարաւ
արեւելքից, Հնդկաստանից: Այդ բոլորը հասա-
րակութեան փոքրամասնութեան հայեացքների

մէջ մտցնում է փոփոխութիւն, իսկ ամբողջը ներհում է տղիտութեան մէջ: Հասկանալի է, որ ամենից շատ կրթութեամբ երեւում են այն պարսիկները, որոնք իրենց կրթութիւնը ստանում են արտասահմանում *):

Որքան որ մեր եւրոպական հայեացքով Պարսկաստանը խաւար լինի, այնու ամենայնիւ Ասիայի մեծ մասի համար նա լուսոյ աղբիւր է: Նրա դրականութիւնից անմիջապէս օգտւում են Միջին Ասիայի տաճիկները, քրդերը և աւղանցիք, և մինչև անդամ Հնդկաստանում պարսից և հնդկաց լեզուի խառնուրդից ինդուստանի (այլ կերպ «Ուրդու») նոր կազմակերպած բարբառը մօտիկ անցեալում ընդունուած է դրական լեզու՝ փոխարէն նախկին պարսկականի: Վերո-

*) Պէտք է ասել, որ նրանք բոլորին զարմացնում են իրենց ընդունակութիւններով: Էմիր Ֆէրրաշ խանը, որը Բէյրութի եզուիդների մօտ ամենալաւ բժիշկ-ուսանողն էր, բոլոր ուսուցչապետներին հիացնում է, թէև սրանք շատ են տեսել ընդունակ ասորիներ: Մէկ պարսիկ, նշանաւոր մեծատան որդի, Մոսկվայում ուսուցչապետ կօրչի ասաջնորդութեամբ մի ամառուայ ընթացքում կարողացաւ հին լեզուներից պատրաստուել և հասունութեան վկայական ստանալու քննութիւնը տալ: Եւ այդպիսի օրինակներ շատ կան: Այստեղ, որ այդ տաղանդաւոր աղջիկն օտար է ճշմարտութիւնը:

յիշեալ երկրները կրթութեան կողմից Պարսկաստանից ցածր են կանգնած, միայն բացառութիւն է կազմում Հնդկաստանը: Անգլիացիների Հնդկաստանում ունեցած քաղաքական վերաբերմունքը կարելի է պատարակել բայց Անգլիայի Հնդկաստանում կրթական գործը բարձրացնելու հոգսերն արժանի են լիակատար գովասանքի: Կառավարութիւնը մեծ դումարներ է ծախսում ամեն տեղ բաց անելու ստորին և բարձրագոյն ուսումնարաններ, ուր մեծ մասամբ յաճախում են մահմեդականները: Կառավարութիւնը, որպէս զի քրիստոնէական պրօպագանդան տարածելու մասին եղած նկատողութիւններից խոյս տայ, կարևոր համարեց իւր ուսումնարաններից հեռացնել ամեն տեսակ կրօնական դասաւանդում, և բաւականաւ միայն աշխարհիկ գիտութիւնների դասաւանդութեամբ: Վերջին քառասուն տարիների ընթացքում հէնց իրենց մահմեդականների մէջ կազմուեցան շատ ընկերութիւններ, նպատակ ունենալով հիմնել մի շարք բարձրագոյն դպրոցներ, որտեղ մահմեդական աստուածաբանութեան հետ էլ անցնում են աշխարհիկ գիտութիւններ արեւմտեան հոգով: Կառավարութիւնն աջակցում է այդ ձեռնարկութիւններին, ինչպէս և Եգիպտոսում և ի միջի այլոց Ալիդաւում եղած անգլիական-արեւելեան բարձրագոյն

ուսումնարանը, որն ամենալաւն է Հնդկաստանի բարձրագոյն ուսումնարանական հաստատութիւններից, և հիմնուած է բարեպաշտ, բայց ազատամիտ մահմեդական Սէիդ Ահմէդ-խան Բէհազուրի շնորհիւ, մեծ մասամբ պահուում է անդլիական նպաստներով: Մահմեդական զիտական ընկերութիւնները նոյնպէս զբաղուած են զրականութիւնը կենդանացնելու, նրանց առաջնորդութեան ներքոյ են քաղաքական և զրականական թերթերը, որոնք մահմեդական-գրողներին տալիս են վարձատրութիւններ, նոյնպէս և կազմում ու թարգմանում են զիտական զրքեր և դասագրքեր, — որոնց նկատմամբ էլ կառավարութիւնը չէ զլանում իւր օգնութիւնը, նա նոյն իսկ մեծ ծախսեր է անում մահմեդական աստուածաբանական շարադրութիւնների տպագրութեան համար:

Թուրքեստանում մեկթէքները և մեդրեսաների թիւն աւելի շատ է, քան թէ Պարսկաստանում: Եղիտութիւնն էլ նոյնպէս այդ կողմերում աւելի շատ է: Ժողովրդի պարսկական մասը շատ ու քիչ օգտւում է իրանի զիտութեանց հատուածներից, և իրեն ամբողջ իսլամի ամենալաւ աստուածաբաններն է համարում, իսկ վերջին ժամանակ մի քանի բան սովորում է նաև Ռուսաստանից. Վամբերիի կարծիքով թուրք ժողովուրդը «փաթաթուած է խաւարով, սեւ ինչ»

պէս կուպրը», իսկ այժմ նա էլ որ և է բան իւրացնում է ռուսներից: Մինչև անգամ միջնակարգ դպրոցներում (Տաշկէնտում և Օրէնբուրգի կողմերում) հաշուում են ոչ պակաս քանակութեամբ տեղացիներ երկու սեռից էլ, իսկ երկրի զինուորական բանակներում աւելի շատ: Բուխարի էմիրի եղբայրն և տղան իւր խնդրանք դաստիարակուել են Պետերբուրգի Պաթսկի բանակում: Ռուսաց համալսարաններում երբեմն ելւում են կիրգիզներ: Ժամանակի ընթացքում Միջին Ասիայի մահմեդականներն ըստ երևոյթին իրենց ուսումնարաններով և զրականութեամբ ոչնչով յետ չպիտի մնան եւրոպական թաթարներից:

Իսլամի մնացած ժողովուրդների, օրինակ մալայցիների, բերբերների, նեգրների և այլն, ուսումնարանի, կրթութեան և զրականութեան մասին չարժէ խօսել:

գ) Արդիւնաբերութիւն եւ վաճառականութիւն:

Արդիւնաբերութեան եւ վաճառականութեան յաջող ընթացքի համար պահանջուում են՝ ժողովրդի մտաւոր զարգացումը կամ կրթութիւնը, ազնիւ եւ հաստատուն կառավարութիւն, երկրի բնական հարստութիւնների կանոնաւոր մշակումն, հաղորդակցութեան լաւ ճանապարհներ եւն. եւն. Ինքնուրոյն Արեւելքում դրանցից ոչ մէկն էլ չէր կայ, մանաւանդ ծածկաստանում, դրա համար եւ այնտեղ մինչեւ անգամ հեշտ ձեռք բերուող արդիւնաբերութիւնը վատ է առաջ գնում, իսկ մշակութեան միջոցով ստացուողն աւելի եւս վատ: Երկրագործութեան եւ գիւղատնտեսութեան խրդալի դրութեան մասին մենք պատահաբար արդէն վերեւում ասացինք: Աւելի ծանր գործ, ինչպէս լեռնային արդիւնաբերութիւնը, գոյութիւն ունենալ չէ կարող: Օրինակ վերցնենք Լիվանը, որտեղ չափազանց շատ են բնական հարստութիւնները: Նաւթը հէնց երեւան է գալիս հողի մակերեւոյթի վրայ, բայց կառավարութիւնն արգելում է մշակել, այնպէս որ իւր տնային նաւթը միայն փչացնում է Լիվանի խաղողները, իսկ կերօսինն (զտած նաւթը) ակամայից բերել են տալիս ռուսական Բաթում քաղաքից: Լիվանում

երկաթի հանքեր շատ կան, բայց չկայ երկաթագործութիւն: Կառավարութիւնը թոյլ չէ տալիս պեղելու սարերը, մօտիկ անցեայում տեղի ունէին շատ չնչին չափով երկաթ փնտռելու ջանքեր—«մասբէկի», որտեղ հանքը, ուղղակի ընկած լինելով երկրի մակերեւոյթի վրայ, մշակում էին նախնական ձևով, եւ որովհետեւ կառավարութիւնը չէր նպաստում գործին, ռուսի եւրոպական ամենալաւ տեսակի եւ արժան երկաթի ներմուծումը խափանեց Լիվանի տեղական արդիւնաբերութիւնը: Եւրոպայի մրցումն (конкуренция) ուրիշ շատ կողմերից սպանում է արեւելեան արդիւնաբերութիւնը: Պարսկաստանն եւ Ասորիքը մասամբ եւ ուրիշ երկրներ, մինչեւ այժմ մշակում են մի քանի ոչ անպէտք նիւթեր՝ պողպատեայ սայրեր, մետաքսէ եւ բամբակէ գործուածքներ եւ այլն, բայց նրանք ի՞նչպէս կարող են մրցել Եւրոպայի հետ: Եւրոպական արդիւնաբերութիւնը յենում է գիտական գիւտերի վրայ, ընդարձակ կերպով օգտւում է քիմիայից եւ մեքենայադիտութիւնից, իսկ Արեւելքում զուրկ են այդ բոլորից: Եւրոպական արդիւնաբերութեան միութիւնը գործարանն է հազարաւոր բանուորներով եւ մեքենաներով, իսկ Ասիայում գործարանի դերը կատարում է սրահը կամ վրանը մէկ ջուհի հակի դազդեհոյով եւ մէկ կամ երկու բանուորով:

Ի նկատի առնելով ասորական մետաքսեայ «գործարանները» և մտաւոր համեմատութիւնն անելով Սապօմնիկովի հոչակաւոր գործարանի հետ՝ ես չեմ կարող չհարցնել սրահի տիրոջից. «Ահա դուք ասում էք որ ունէք այգիսի 40 սրահներ, իսկ ուրիշ արդիւնաբերող աւելի ևս, ուրեմն ինչո՞ւ չէ կարելի 40 այգիսի սրահները միացնել և ստանալ մէկ մեծը, կամ թէ ինչո՞ւ մի քանի արդիւնաբերողներ չմիանան միասին՝ որպէսզի ընկերական հիմունքների վրայ յենուած շինեն մէկ մեծ իսկական գործարան, ինչպէս եւրոպայում: Միշտ կարելի է միւսնոյն պատասխանը լսել. «Տաճկական կառավարութեան մէջ միտք չունի գործն ընդարձակ հիմունքների վրայ դնել՝ զիշակեր ծառայողները միշտ շատ աւելիներ կը գտնեն խառնուելու գործարանի կարգերին և պոկելու ընծաներ (կաշառք) և ապօրինի տուգանք, իսկ վերջում էլ կարելի է սպասել գործարանի քայքայումն: Տաճկաստանում ընկերական գործունէութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել, որովհետև ընկերութեան իւրաքանչիւր անդամը կարող է հանդիստ կերպով կողոպտել միւսներին և յետոյ կաշառելով դատաւորին՝ ազատուել բոլոր պատասխանատուութիւնից . . . : Ոչ, աւելի լաւ է գործը տանել փոքր չափերով և, ինչպէս միջին, որը տանում է մի հատիկ՝

չգրգռել մարդկային նախանձը » : Տաճկաստանի և Պարսկաստանի պետական փորձերն արքունական գործարաններ հիմնելու համար միշտ անյաջող են եղել զանձարանը կողոպտող ծառայողների անպէտք և անազնիւ լինելու պատճառով: Դրա համար արևելեան արդիւնաբերութիւնն աւելի և աւելի ընկնում է. արևմտեան գործարանների էժանազին ներմուծուող նիւթերի պատճառով՝ տեղականը յետ է մղւում: Միայն այն դէպքերում՝ որտեղ նիւթի ամբողջ արժանաւորութիւնը կախուած է աշխատաւորի ճաշակից, եւրոպական մեքենայական արտադրութիւնները տեղի են տալիս արևելեան ձեռքով կտտաւորած արդիւնաբերութեան. սակայն եւրոպայում էլ նոյն երևոյթն ենք տեսնում:

Վաճառականութեան մէջ աւելի շատ ընդունակութիւն ցոյց են տալիս պարսիկները, արաբները, իսկ աւելի քիչ թուրքերը: Պարսիկը — անպայման վաճառականական հանճար է, աւելի ընդունակ քան հրէան և հայը: Նա կատարում է ամենահեռաւոր վաճառականական ճանապարհորդութիւններ առանց տատանուելու և, ի միջի այլոց, այն աստիճանի ազատամտութեան է հասնում որ չէ վախենում վաճառականութեան համար դնալ անհաւատների երկիրը, որտեղ իւրաքանչիւր անհատի հաղուստին զիպչելն և նոյն

Ի նկատի առնելով ասորական մետաքսեայ «գործարանները» և մտաւոր համեմատութիւն անելով Սապօժնիկովի հռչակաւոր գործարանի հետ՝ ես չեմ կարող չհարցնել սրահի տիրոջից. «Ահա դուք ասում էք որ ունէք այդպիսի 40 սրահներ, իսկ ուրիշ արդիւնաբերող աւելի ևս, ուրեմն ինչո՞ւ չէ կարելի 40 այդպիսի սրահները միացնել և ստանալ մէկ մեծը, կամ թէ ինչո՞ւ մի քանի արդիւնաբերողներ չմիանան միասին, որպէսզի ընկերական հիմունքների վրայ յենուած շինեն մէկ մեծ իսկական գործարան, ինչպէս Եւրոպայում: Միշտ կարելի է միւսնոյն պատասխանը լսել. «Տաճկական կառավարութեան մէջ միտք չունի գործն ընդարձակ հիմունքների վրայ դնել. զիշակեր ծառայողները միշտ շատ առիթներ կը գտնեն խառնուելու գործարանի կարգերին և պոկելու ընծաներ (կաշառք) և ապօրինի տուգանք, իսկ վերջում էլ կարելի է սպասել գործարանի քայքայումին: Տաճկաստանում ընկերական գործունէութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել, որովհետև ընկերութեան իւրաքանչիւր անդամը կարող է հանդիստ կերպով կողոպտել միւսներին և յետոյ կաշառելով դատաւորին՝ ազատուել բոլոր պատասխանատուութիւնից . . . : Ոչ, աւելի լաւ է գործը տանել փոքր չափերով և, ինչպէս միջին, որը տանում է մի հատիկ


չգրգռել մարդկային նախանձը » : Տաճկաստանի և Պարսկաստանի պետական փորձերն արքունական գործարաններ հիմնելու համար միշտ անյաջող են եղել զանձարանը կողոպտող ծառայողների անպէտք և անազնիւ լինելու պատճառով: Դրա համար արեւելեան արդիւնաբերութիւնն աւելի և աւելի ընկնում է. արեւմտեան գործարանների էժանադին ներմուծուող նիւթերի պատճառով՝ տեղականը յետ է մղւում: Միայն այն դէպքերում՝ որտեղ նիւթի ամբողջ արժանաւորութիւնը կախուած է աշխատաւորի ճաշակից, եւրոպական մեքենայական արտադրութիւնները տեղի են տալիս արեւելեան ձեռքով կատարուած արդիւնաբերութեան. սակայն Եւրոպայում էլ նոյն երևոյթն ենք տեսնում:

Վաճառականութեան մէջ աւելի շատ ընդունակութիւն ցոյց են տալիս պարսիկները, արաբները, իսկ աւելի քիչ թուրքերը: Պարսիկը՝ անպայման վաճառականական հանճար է, աւելի ընդունակ քան հրէան և հայը: Նա կատարում է ամենահեռաւոր վաճառականական ճանապարհորդութիւններ առանց տատանուելու և, ի միջիայլոց, այն աստիճանի ազատամտութեան է հասնում, որ չէ վախենում վաճառականութեան համար դնալ անհաւատների երկիրը, որտեղ իւրաքանչիւր անհատի հազուստին զիպչին և նոյն

իսկ երկիրը նրան պղծութիւն է պատճառում: Ի նկատի չառնելով Ռուսաստանը, մեծ քանակութեամբ պարսիկների կարելի է պատահել սիւննի Պօլսում և արևմտեան Եւրոպայում: Արաբների համար վաճառականութիւնը նոյնպէս սիրելի և պատուաւոր դործ է, և նրանց շատ պատմութիւնների մէջ իբրև հերոսներ երևան են դալիս վաճառականները: Թուրքի դանդաղաշարժ ծոյլ բնաւորութեան չէ սազում վաճառականութիւնը, մանաւանդ եթէ նա բարդ է և պահանջում է մրցում: Իւր հայրենիքում յառաջագիմութեան դործում դանդաղ է, իսկ անհաւատների երկիրը գնալու համար մեծ երկիւղ է անում: ամենից շուտ նա Ռուսաստան կը գնայ, որտեղ շատ են նրա հաւատակիցների թիւը, իսկ այնտեղ ևս ազատ չէ մնում պղծութիւն երկիւղից:

Այս ամբողջ տեսութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ նկարի մէջ. մահմեդական արևելքը ներկայ ժամանակում գտնւում է քաղաքական, տնտեսական և մտաւոր անկման մէջ: Իրանական և արաբական ցեղն ունի ցանկութիւն և ընդունակութիւններ վերակենդանանալու: Ընդհակա-

ռակը թուրքական ցեղը, չնայելով ամեն կողմից եղած բազմաթիւ դրդումներին, ցանկանում է յամառել իւր յետամնացութեան մէջ, յամառ կերպով ընդդիմադրել իւր արթնանալուն: Ի միջի այլոց Թուրքիայի քաղաքական գոյութիւնը տալիս է տգէտ թուրքերին հպարտութիւն և մտաւոր կողմից առաջ չգնալու ցանկութիւն, և նոյն իսկ չաղատուելու իրենց պետական փտած կազմից. քաղաքական ոյժից զրկուելով, թուրքը սկսում է ժողովրդների կուլտուրական ընտանիքին հաղորդակից լինել:



Իսլամի կենսունակութեան հարցն եւ նրա մեք
 քաղաքակրթութիւնն իւրացնելու ընդունակու-
 թեան մասին:

Ժամանակակից մահմեդական պետութիւնների
 տիտուր վիճակը ստիպում է շատ շատերին խօ-
 սելու իսլամի անկման մասին: Այդ բոլորովին
 ճշմարիտ է. հարկաւ ծածկաստանի, Պարսկաս-
 տանի, Աւղանիստանի, Բուխարայի, Խիվայի, Մա-
 րօկկոյի, Սուդանի և այլ երկրների քաղաքական
 նշանակութիւնը չնչին է, այդ երկրների ժողովրդի
 տնտեսական կեանքը խղճալի վիճակի մէջ է զբո-
 նւում, լուսաւորութիւն նրանց մէջ չկայ. բայց
 միթէ՞ այդ նշանակում է, որ իսլամը, այսինքն
 մի յայտնի կրօն գտնւում է անկման վիճակի
 մէջ: Ճշմարիտ է, մատնացոյց են անում այն
 փաստի վրայ, որ Մէկկա յաճախող ուխտաւոր-
 ների թիւը միջին դարերի համեմատութեամբ

երեք անգամ պակսել է: Բայց մենք կեանքի փոր-
 ձից զիտենք, որ մէկը կարող է շատ լաւ մահմե-
 դական լինել, բայց այնու ամենայնիւ իւր մարդ-
 կային բնութեան թուլութեան շնորհիւ հաջ գը-
 նալուց ծուլանայ: Բերում են աւելի ծանրակշիռ
 փաստեր, օրինակ՝ թէ Իրանում իսլամը փաս-
 տում է Սուֆիական աղանդի շնորհիւ: Բայց այդ
 հանգամանքն այնտեղ շատ հին է, և պարսկա-
 կան իսլամն առ հասարակ հէջիրի առաջին դա-
 րուց ուղղափառ չէ եղել. կարելի է ասել, որ վեր-
 ջին երեք դարերի ընթացքում Պարսկաստանում
 իսլամը բարձրացել է և ոչ թէ ընկեր, որովհետեւ
 հոգեւորականութեան յաջողուեց շատ ու քիչ
 բթացնել ժողովրդի գլուխը: Արաբացիների մի
 մասի մօտ (Արաբիայի բուն բնակիչների) իսլամը
 սոր է կանգնած, թէ և Մահմեդի ժամանակ էլ
 աւելի բարձր չէ եղել: Վերջապէս Ասորիքի, Ե-
 զիպտոսի, մասամբ Ալժիրի և մինչև անգամ Տաճ-
 կաստանի եւրոպականացած դասակարգի կողմից
 նկատւում է սառնութիւն դէպի հաւատի նըր-
 բութիւններն և երբեմն ուղղակի անաստուա-
 ծութիւն: Այդ այդպէս է և կարելի է հաւա-
 տացած լինել, որ եւրոպական կրթութեան տա-
 րածուելովն այդպիսիների թիւը կ'աճի և ինչպէս
 որ կրթուած եւրոպացին յաճախ միայն անունով
 է քննում քրիստոնեայ, այնպէս էլ եւրոպակա-

նայած մահմեդականը միայն անուշով կը մնայ մահմեդական: Բայց բացի այդ բոլոր փաստերից կան ուրիշ շատ փաստեր, որոնք նախադուշակում են ոչ թէ իսլամի մահճը, այլ ընդհակառակը դեռ նրա երկար ու երկար կեանքը: Այդ պարզում է մանաւանդ նրանով, որ մահմեդական միսիօնարները յաջողութիւն են ունենում այնտեղ, որտեղ միաժամանակ քրիստոնէական պրօպագանդան յաջողութիւն չէ ունենում: Փոքրիկ բացառութիւն է կազմում Ռուսաստանը: Իսլամի միսիօնէրական գործունէութեան համար գեղեցիկ դաշտ թուում էր, թէ կը լինի Սիբիրի իւր կռապաշտներով, բայց Ռուսաստանում քրիստոնէութեան հնարաւոր եղաւ յաջողութեամբ կռիւ մղել մահմեդական միսիօնարների դէմ և նրան վերջ դնել, թէև մինչև այժմ էլ Սիբիրի ժողովրդի սրբտին իսլամն անկասկած աւելի շատ բան է ասում քան թէ քրիստոնէութիւնը: Մակայն ուրիշ երկրներում իսլամի պրօպագանդան իսկապէս հըրաշքներ է գործում: Այսպէս Չինաստանում (առ այժմ առաւելապէս արևմտեան գաւառներում) մահմեդականների թիւը արդէն հասել է քսան միլիոնի և շարունակում է մեծանալ, աւելի անձնական օրինակով, քան յատկապէս քարողի միջոցով. երկիւղ կայ, որ դուցէ նոյն իսկ ժամանակի ընթացքում իսլամը կարողանայ Չի-

նաստանից քշել Բուդդայի կրօնը: Գուցէ դեռ ևս իսլամի ազդեցութիւնը Հնդկաստանում աւելի զարմանալի երևայ, որովհետև այնտեղ կառավարութիւնը քրիստոնեայ է, և որ ամենազրեւոյն է՝ հնդիկների կրօնը բրահմական է, որը ծայրայեղ թշնամութեամբ է լարում ժողովրդին դէպի իսլամը՝ և մանաւանդ որ մահմեդականները կազմում են ազդաբնակութեան ^{1/8} մասը: Այնտեղ պրօպագանդա է անում թէ զրաւոր և թէ բերանացի, գոյութիւն ունին թափառական քարոզիչներ և գործում են այնքան յաջող, որ օրինակ հէնց միայն մէկ Հաջի-Մոհամմէդ Փէնջափում 200,000 հնդիկների ընդունել տուեց իսլամական կրօնը. հնդիկ իսլամը մինչև անգամ քրիստոնեայի վրայ եղեռնադրութեան փորձ է անում և արդարև Հնդկաստանում պատահում են քրիստոնեայ հաւատափոխներ: Յայտնի արևելագէտ և իսլամն ուսումնասիրող Ա. Կրեմեր անխուսափելի է համարում, որ բազմաստուածութիւնը տեղի կրտայ իսլամական միաստուածութեան. նրա կարծիքով մի ժամանակ ամբողջ Հնդկաստանը կը դառնայ մահմեդական. իսկ ուրիշները գուշակում են, որ իսլամական աշխարհի (ճաճկաստանն ընկնելու դէպքում) ապագայ առաջնորդութեան դերը կը մնայ Հնդկաստանին: Նիդերլանդական Հնդկաստանում մահ-

մեղականների թիւը նոյնպէս աճում է: Հոլլանդացիները XVIII դարում հաստատուելով Հինդկական Արշիպելագում՝ այնտեղ քիչ քանակութեամբ մահմեդականներ գտան, իսկ ներկայ ժամանակում ճաւան համարեա ամբողջապէս մահմեդական դարձաւ: Սուլթան մեծ մասամբ Բորնիոն և Յելէբէսը—կիսով չափ: Պրօպագանդան աննկատելի կերպով առաջ է գնում շնորհիւ հոլլանդական ծառայողների, եկեղ. վաճառականների և մանաւանդ սուտ բարեպաշտ օտարականների, որոնք բժշկում են հիւանդներին աղօթքներով և երգութեանով, առևտուր են առնում հմայութիւններով և աղօթք են կարդում մեռածների վրայ: Իսլամն այժմ ամենաբարեյաջող հողը գտնում է կենդրոնական Ափրիկայում, որտեղ՝ մէկ պատուրի ասելով, իսկապէս սարսափելի արագութեամբ է տարածւում: յաճախ պատահում է, որ առանձին մահմեդականներ՝ զալով Ափրիկայի ցեղերի մէջ վաճառականութիւն անելու, շուտով իրենց ազդեցութեան են ենթարկում ամբողջ շրջանն և ամբողջ բնակչութեան տրամադրում են ընդունելու իսլամը: Ափրիկայում իսլամի պրօպագանդան նեղրների մէջ առաջ է գնում երկու կողմից և արևմուտքից և արևելքից: Արևմուտքում Ատլանդական ծովեզրները սկսած Սիերրա-Լէօնից (որտեղ իսլամը տարա-

ծուել է հարիւր տարի առաջ) մինչև Փորթուգալական Մօզանբիկան ամբողջապէս դարձել է մահմեդական. այնտեղից մահմեդականութիւնը հսկայական չափերով տարածուեց և շարունակւում է տարածուել դէպի երկրի խորքերը, Նիգէրի աւազանը, հասարակածային շրջանում: Առաջ սև մահմեդականութեան կենդրոնն եղել է Տիմբուկտուն, այժմ աւելի ևս առաջ է շարժուել դէպի երկրի խորքերը—Կուկայի մէջ. այստեղ միսիօնարները մասնագէտ քարոզիչներ չեն (ինչպէս քրիստոնեաներին), այլ վաճառականներ, և պրօպագանդան աննկատելի կերպով առաջ է գնում ինքնիրեն առանց որ և է բռնի ոյժի: Ընդհակառակը Ափրիկայի արևելեան կողմից դէպի խորքերը—արևմուտք՝ մահմեդականութիւնը տարածւում է և զինուորական հոսանքով—այն է Սուդանից, որտեղ 15 տարի առաջ հիմնուել է Մահդիի պատերազմական մոլեռանդ պետութիւնը: Կարելի է գուշակել, որ մինչև երեսուն տարին ամբողջ կենդրոնական Ափրիկան բացառապէս մահմեդական կը լինի: Այդպէս են իսլամի յաջողութիւնները: Նրա նոր հետևողների քանակութիւնը կարելի է որոշել տասնեակ միլիօններով (առ հասարակ բոլոր մահմեդականների թիւը հաշուում են երեք հարիւր միլիօն): Բայց ի նսեմացումն իսլամական փառքի պէտք է նկատել, որ այժմ

այդ կրօնն ընդունող ժողովրդները պատկանում են սակաւ ընդունակ և սակաւ կրթուած մարդկանց թուին: Բայց արդարութիւնը պահանջում է նկատել, որ իսլամն իրեն նոր հետեւողներ դրուում է մինչև անգամ լուսաւորուած եւրոպացիների մէջ: Ի հարկէ իսլամն իւր մէջ պարունակում է մէկ շատ անհաճոյ կէտ, որը հեռացնում է աւելի բարձր կանգնած և փիլիսոփայօրէն մտածող մարդկանց. այդ կէտն է—հանդերձեալ կեանքի պատկերների զգուելի վաւաշոտութիւնը, որը մարդու մէջ ներշնչում է այն միտքը՝ թէ մարդու իդէալն է լինել լաւ արու: Միջնադարեան պարսաւորները՝ ի նկատի առնելով իսլամի այդ կողմը, արհամարհական կերպով անուանում էին իսլամը որձ ձիու, գոմէշների և ուղտերի հաւատ, սուֆիները վճռել են մահմեդականների մէջ ընդունել երկու արքայութիւն. մէկը Ղուրանի—սահմանուած կոպիտ և անասնական բնաւորութեան համար, իսկ միւսը զուտ հոգեւոր՝ սահմանուած այն մարդկանց համար, որոնք աւելի բարձր բաների մասին են մտածում: Թամանակակից տարածուած դարձուած է (фараз), թէ «իսլամը կոպիտ կրօն է», այդ առում է՝ ի նկատի առնելով մահմեդական արքայութիւնը: Այդ պատճառով մեզ համար դժուար է երեւակայել, որ իսլամը—այդ «կոպիտ կրօնը» կարողանայ դայթակ-

դեցնել մտածող եւրոպացուն: Սակայն, ով որ կարող է մի կողմը թողնել մահմեդական արքայութեան պատկերն և իւր ուշադրութիւնը բացառապէս կենդրոնացնել Ղուրանի Աստուծոյ մասին եղած մտքերի վրայ, նա կը զարմանայ տեսնելով իսլամի պարզութիւնը, ոչը նրան հասցնում է քրիստոնէական քննական աստուածաբանութեան (рационализм). այդպիսի մարդը կարող է բոլորովին ճշմարիտ կերպով հիանալ մահմեդական կրօնով, կարող է նրան գովել, մինչև անգամ ընդունել մահմեդականութիւնը: Դրա համար և Լեհաստանում XVI դարում երբ այնտեղ տիրապետում էին բողոքականութեան գաղափարները, լեհացիներից ոմանք իսլամ ընդունեցին: Վօլտերը մահմեդականութեան մօտիկ ծանօթանալով՝ թողեց իւր թշնամութիւնն և դարձաւ նրա պաշտպանը: Իսլամը պաշտպանում էին և այնպիսի մարդիկ, ինչպէս օրինակ Հիբբոն և Լօրան պատմաբանները, կրօնների պատմութեան լաւ ծանօթ Բարտելեմի Սէնտ-Իլերը, արաբագէտ-պատմաբան Սեզիլիօն և ուրիշները: Մօտիկ անցեալում Հանրի-դը-Կաստրի հրատարակեց մահմեդականութեան մասին շատ եռանդուն ջատագովութիւն (L'islam. Impressions et études, Париж, 1896): Մինչև անգամ քրիստոնէայ քահանաներն ևս իսլամն ընդունելու հաւումն ցոյց տուին, ինչպէս 1875 թ. մեթոդիստ

միսիօնար նօրմանը գնաց Պօլիս, որպէսզի այնտեղ մահմեդականներին քարոզի աւետարանը, բայց, ծանօթանալով իսլամական կրօնին, ինքն ընդունեց այդ կրօնն և յետոյ քարոզեց Ամերիկայում:

Ի հարկէ մի քանի եւրոպացիների իսլամ ընդունելուց չէ կարելի ոչ մի ընդհանուր եզրակացութիւն անել, բայց յամենայն դէպս եթէ մենք ի նկատի առնենք իսլամի նորագոյն յաջողութիւնները հէնց միայն Ափրիկայում և Ասիայում և միլիոնայն ժամանակ յիշենք, որ քրիստոնէութիւնն այլ ևս նոր հետեւողներ չէ ունենում այն ժամանակ կը հասկանանք, որ իսլամին մօտալուտ մահճաւոր մարդիկ սխալ են: Պէտք է ընդունել, որ իսլամն ոչ թէ անկման ճանապարհի վրայ է, այլ դեռ ևս շատ երկար ժամանակ դոյութիւն կ'ունենայ:

Հարց է ծագում. «Ի՞նչ յարաբերութիւնների մէջ կը լինի իսլամը մեր աշխարհի հետ: Յոյս կայ արդեօք, որ մահմեդական ժողովուրդները կ'իւրացնեն մեր քաղաքակրթութիւնն և կը մտնեն լուսաւոր ժողովրդների ընդհանուր ընտանիքի շրջանը»: Շատերի համար այդ հարցը կապուած է այն մտքի հետ, որ մահմեդականները կը թողնեն իրենց կրօնն և կը դառնան քրիստոնեաներ: Մի քանիսները մահմեդականների այդ դարձը

համարում են բոլորովին հնարաւոր և պատմական-բնական բան: Այսպէս կարդինալ Հերդենրօտերը (Herdenröter) իւր «Եկեղեցու պատմութեան» մէջ թոյլ է տալիս իրեն՝ հաստատելու հետեւեալը. «Որպէսզի վայրենի ցեղերին հանենք կռապաշտութիւնից և հասցնենք մեր բարձր կրօնին, առաջ կարեւոր է միջին աստիճան, որ պահանջում են նրանց կուլտուրայի ստորին մակերեւոյթն և նրանց բիրդ զգացմունքներ ունեցող երեւակայութիւնները: Այդպիսի անցողական աստիճան, որը տանում է կռապաշտութիւնից դէպի քրիստոնէութիւն՝ է մահմեդականութիւնը»:

Դժբախտաբար փորձը ցոյց է տալիս՝ որ մահմեդականութեան զաղափարներով սնուած մարդը բոլորովին անընդունակ է դառնում ընդունելու քրիստոնէութեան բարձր ճշմարտութիւնները: Ով որ ծանօթ է մահմեդականների գրականութեան, նա գիտէ, որ այդ գրականութիւնը քրիստոնէութեան մասին միշտ այն կարծիքն է յայտնել, ինչ որ XI դարի Իբն-Հալմ իսպանացի արաբը: Եւ այժմ էլ չէ փոխուել մահմեդականների դէպի քրիստոնէութիւնն ունեցած արհամարհական հայացքը, որ իբր թէ նա, քրիստոնէութիւնը, տրամաբանութիւնից զուրկ սնահաւատ կրօն է: Մանաւանդ որ մահմեդականը հաւատացած է, եթէ պրպտի մեր քրիստոնէական զրքերը կը

գտնի՝ որ հէնց այդ գրքերն էլ ապացուցանում են իսլամի ճշմարտութիւնը:

Անք վերեւ առաջ բերած ենթադրութեան վրայ («իսլամը չէ մեռնում») պէտք է աւելացնենք նաև երկրորդը. «Յոյս չկայ, որ իսլամը քրիստոնէական կրօնի կը վերափոխուի»:

Արդեօք կարո՞ղ է իսլամական աշխարհն իսլամական մնալով հանդերձ առաջ գնալ և աւելի յառաջադիմեր քան արևմտեան աշխարհը: Եթէ այդ հարցը դնենք տեսականապէս առանց ի նրկատի առնելու առանձին մահմեդական անհատների և ազգերի յատկութիւններն և ընդունակութիւնները, այն ժամանակ պատասխանը դրական կը լինի: Ճշմարիտ է պատմութեան մէջ մենք տեսել ենք իսլամի ներկայացուցիչների կողմէն ազատ մտքի դէմ, բայց մի՞թէ նոյնը չենք տեսել և քրիստոնէութեան պատմութեան մէջ: Եթէ ներկայ ժամանակում քրիստոնէութիւնը կարող է գեղեցիկ կերպով հաշտուել գիտութեան հետ, իսլամը նոյնպէս կարող է նրա հետ հաշտուել, միայն թէ այս կամ այն մահմեդական ժողովրդի բնական յատկութիւնների մէջ լինէին մտաւոր զարգացման համար անհրաժեշտ դրաւականներ: Այն բոլոր ենթադրութիւնները, որոնք ձգտում են ապացուցանելու, թէ իսլամը չէ կարող հաշտուել ազատ քննադատութեան հետ, ճշմարիտ են ոչ

միայն իսլամական կրօնի այլ առհասարակ բոլոր կրօնների նկատմամբ*), և էապէս առաջ են բերում մի ուրիշ հարց. «Արդեօք մի որևէ կրօն կարող է հաշտուել գիտութեան հետ»: Դրեպերի նման՝ ով իւրաքանչիւր կրօն (բացի քննական աստուածաբանութիւնից—рационализм) գիտութեան անհաշտ թշնամի է համարում—հասկանալի է, որ նա իսլամի վերաբերմամբ էլ չպէտք է բացառութիւն անէ **): Բայց ով չէ ընդունում կրօնն իբրև մտաւոր յառաջադիմութեան խանգարիչ, նա էլ չպէտք է իսլամին համարի յառաջադիմութեան դրժում անընդունակ նրա այն յատկութիւնների պատճառով, որոնք յատուկ են միւս բոլոր կրօններին: Սակայն իսլամի դէմ յատկապէս երկու կշտամբանք են դնում. ասում են, որ նա քաւրդում է ճակատագրութիւն և մոլեռանդու-

*) Ինչպէս օրինակ այս նախատինքը. «Իսլամը հրամայում է հաւատալ Ղուրանին և ոչ թէ գիտութեան» և Հետաքրքրական է իմանալ, որ կրօնը չէ հրամայում հաւատալ ամենից աւելի իւր սրբազան գրքերին, ինչպէս ամենաբարձր իմաստութեան և ճշմարտութեան:

**) Սակայն Դրեպերը բացառութիւն է անում յատկապէս իսլամի համար, բայց նպատաւոր մոլորվ. նա իսլամն աւելի յառաջադէմ կրօն է համարում, քան քրիստոնէութիւնը: Բայց Դրեպերը վատ է հասկանում իսլամի պատմութիւնը:

Թիւն, որով և իւր հետեւողներին շեղ ճանապարհով առաջնորդելով՝ զրկում է արեւմտեան լուսաւորութիւնն իւրացնելու հնարաւորութիւնից: Այդ երկու կշտամբանքն էլ միայն մասամբ են արդարացի. նրանք ընդունելի են ոչ ամբողջ մահմեդական աշխարհի նկատմամբ: Այստեղ հարկ չկայ ապացուցանելու, որ մոլեռանդութիւնը չէ ծագում Աուրանից, բաւական է նկատել, որ մահմեդականների նշանաւոր մասի հասկացողութեամբ Աուրանի վարդապետութիւնը ճակատադրի մասին թւում է այնպէս, որ ոչ մի տարբերութիւն չկայ Աուրանի և Աւետարանի ճակատադրի մասին ունեցած վարդապետութեանց մէջ: Պարսից բանաստեղծ Սայեադի նկատողութեամբ. «Երբ տեսնում ես որ քարը սարից պոկուելով քեզ վրայ է զալիս, դու մոռանում ես ճակատադրին և մի կողմն ես փախչում»: 1897 թ. մայիս ամսում Բէյրութցի մահմեդականներից ես լսեցի ամենաանկեղծ զարմանքի արտայայտութիւն. ինչո՞ւ տիկին Զ. (Բէյրութի Պաղեստինեան կայսերական ուղղափառ հասարակութեան ուսումնարանների տեսչուհին) հիւանդանալով՝ մերժում է դեղ ընդունել և ասում է. «Աստուծոյ կամքն է»: Այդպէս և մոլեռանդութեան մասին կարելի է ասել, որ նա անպայման կապուած չէ իսլամի հետ (Աուրանի մէջ չկայ էլ). և ոչ էլ յատուկ է

բոլոր մահմեդականներին: Քրիստոնէական կանոնը—«Ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհիթանոսն և զմաքսաւոր».— զտել և գտնում է մեկնաբանողներ այս բառի ամենամոլեռանդ մտքով, բայց չէ՞ որ ամենամեծ անարդարութիւն կը լինէր մի քանի այդպիսի մարդկանց պատճառով քրիստոնէութիւնը կոչել մոլեռանդ կրօն: Այդպէս և իսլամի վերաբերմամբ, եթէ թուրքերն և բերբերները մոլեռանդ են, այդ չէ նշանակում թէ իսլամը մոլեռանդ կրօն է: Ղերբում (19, 72 և 81 երեսներում) այդ մասին մենք մանրամասն խօսեցինք, իսկ այստեղ աւելացնենք, որ Բէյրութի մահմեդականների Բէյրութի քրիստոնէաների հետ ունեցած յարաբերութեանց մէջ աւելի քիչ ատելութիւն է նկատուում, քան Բէյրութի միսիօնար-եզուիզների միսիօնար-բողոքականների հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

Եւ այդպէս ինքն ըստ ինքեան իսլամական կրօնը նոյնքան չպէտք է համարուի խափանող յառաջադիմութեան և քաղաքակրթութեան, որքան և իւրաքանչիւր ուրիշ կրօն: Այն հարցը, թէ արդեօք մահմեդական ժողովուրդներն ընդունակ են յառաջադիմելու և իւրացնելու եւրոպական քաղաքակրթութիւնը, չէ կարելի ընդհանուր իմաստով վճռել և ընդ միշտ այդ վճիռը վերադրել

խաւմը դաւանող բոլոր ժողովուրդներին, այլ
ընդհակառակը պէտք է մասնաւորացնել վը-
ճիւր, իւրաքանչիւր ժողովրդին առանձին իրենը
վերադրելով: Կասկած չկայ, որ պարսիկներն իրենց
հարուստ ընդունակութիւններով կը հասնեն եւ-
րոպային և կը դառնան մեր եղբայրները: Արա-
բական աղդն այժմ էլ ուրիշ արեւելեան ազգերից
աւելի մօտեցել է Արեւմուտքին, իսկ եթէ Ասորի-
քին յաջողութիւն ապատուել տաճկական լծից, այն
ժամանակ այդ մերձեցումն առաջ կը գնայ հըս-
կայական քայլերով: Այդպիսով պարսիկների և
արաբների մտաւոր կեանքի փայլուն շրջանը, որ
խախտուած է մոնղոլների և թուրքերի շնոր-
հիւ, կարող է վերանորոգուել մօտալուտ ապա-
գայում: Նոյն ուղղութեամբ առաջ կը դնան և
մահմեդական-հնդիկները: Իսկ միւս անընդունակ
մահմեդական ժողովուրդները թէև ազատ չեն
մնալ եւրոպային մօտենալուց, բայց այդ մերձե-
ցումն միշտ մեծ դժուարութիւններով կը լինի:

Հեռու հիւսիսում ապրող նեգրների ապա-
գան, կուլտուրայի մէջ ունեցած նրանց ընդու-
նակութիւնը կամ անընդունակութիւնը մեզ հա-
մար առ այժմ առանձին հետաքրքրութիւն չէ
ներկայացնում: Մեզ համար ամենից հետաքրքրա-
կան է մահմեդական չինացիների ապագան. եւ-
թադրում են որ Չինաստանը՝ լցուելով բնակիչ-

ներով, ստիպուած կը լինի ներս խուժել Ռուսաս-
տան: Եթէ Չինաստանը բնակիչներով խտացած ժա-
մանակ ամբողջապէս մահմեդական կրօնն ընդունած
լինի, այն ժամանակ մահմեդական վարդապետու-
թեան սրբազան պատերազմի մասին ունեցած
միտքը նրանց համար ոգևորութեան աղբիւր կը
ծառայի և եթէ այդ սրբազան պատերազմ մղե-
լու վարդապետութիւնը չինացիք կընդունեն իբրեւ
յարձակողական պատերազմ վարելու պարտադիր
հրաման, այդ օրից նրանք ոյժ կըստանան ուս-
ների դէմ կործանող պատերազմ վարելու: Իսկ
այդ դեռ ևս հեռու ապագայի հարց է: Մեզ հա-
մար էական կարեւորութիւն է ներկայացնում
միայն թուրք ցեղի վիճակը և մենք չենք կարող
անուշադիր մնալ նրա դէպի յառաջագիմութիւնն
ունեցած ընդունակութեան կամ անընդունակու-
թեան և միևնոյն ժամանակ արագ յառաջադի-
մելու հարցի նկատմամբ, որովհետև այդ ցեղի
վիճակը սերտ կերպով կապուած է մեր կամ արե-
ւելեան մեր հաւատակիցների շահերի հետ:

Թուրք ցեղի յատկութիւնների մասին մենք
արդէն դէպք ունեցանք վերելում խօսելու: Նրա
աչքի ընկնող յատկութիւններն են—սէր դէպի
մտաւոր անշարժութիւնն և կոյր պահպանողա-
կանութիւն սովորութիւնների մէջ, դրա համար
և թուրքերն ընդունում են մահմեդականութիւնը

իրբե ճակատագրութեան անշարժութեան և առհասարակ դէպի ամեն մի օտար ոչ մահճեղական բան ունեցած ատելութեան կրօն: «Ի՞նչ են արել թուրքերը մարդկութեան համար» հարց է տալիս իրեն մահճեղականութեան պատմութիւնն ուսումնասիրող Ա. Միւլլեր, խօսելով թուրքերի քաղաքական գերակշռութեան մի շրջանի մասին: «Լինենք աւելի համեստ», շարունակում է նա, «հարցնենք, ի՞նչ են արել թուրքերն Առաջաւոր Ասիայի համար:—Պէտք է պատասխանել ոչինչ» (Գ. հատոր էջ 208): Նա իրաւացի է համարում թուրքերի քաղաքական տիրապետութիւնը համեմատել մոնղոլների աւերումների հետ և գտնում է, որ թուրքերը «մանում են նոյն թելը, ինչ որ մոնղոլները, միայն ուրիշ համարի»: «Մենք լաւ գիտենք»,—բացատրում է իւր միտքը Ա. Միւլլերը, «թուրքերի մի յատկութիւնը—նըրանց սահմանափակ միտքն ընդհանուր հարցերի նկատմամբ, որն առանձին դէպքերում միանգամայն անում է բաւական մեծ զիւանազիտական ճարպիկութիւն, բայց միւս կողմից խանգարում է նրանց՝ հասկանալու ընդարձակ պետութեան կարիքները, և ստիպում է թշնամաբար վերաբերուել դէպի ինքնուրոյն մտածողութեան իւրաքանչիւր երևոյթ շնորհիւ սիւննի աղանդի աւանդութիւնների հետ ունեցած կոյր կապակ-

ցութեան: Մոնղոլն աւերում է քաղաքներն և կոտորում բնակիչներին. թուրքերի իշխանութեան ներքոյ քաղաքներն ընկնում են, իսկ բնակիչների բարեկեցութեան աղբիւրները ցամաքում, ինչպէս և նրա հողւոր յառաջադիմութեան կենդանի աղբիւրները: Տաճկական ցեղն Եւրպայում գրաւելով հողեր՝ եւրոպական պետութիւնների համակարգութեան մէջ համարեա բացառապէս մտցրել է քայքայող տարրեր, որոնք թշնամի են իւրաքանչիւր կուլտուրայի» (Գ. հատոր, էջ 258):

Հարկաւ չէ կարելի բացասել թուրքերի դէպի յառաջադիմութիւնն ունեցած ընդունակութիւնը: Ապագայում կարող է մինչև անգամ առաջ գալ Միջին Ասիայի թուրքերից և զարգանալ պարսկա-աւաբական պարագաներում այնպիսի հանճար, ինչպէս Ժ-րդ դարի Արիստոտելին հետևող փիլիսոփայ Կլ-Փարաբին: Ժամանակակից եւրոպական թուրքերը, որոնց արեան մէջ կայ յունական և սլաւոնական խառնուրդ, կարող են միւս ցեղակիցներից աւելի շուտ յոյս ներշնչել իրենց քաղաքակրթութեւնը ընդունակութեանց նկատմամբ: Բայց այդ չափազանց դանդաղ կը կատարուի:

Եւրոպացիների մէջ մշակուել են երկու հայեացք, թէ ինչպէս պէտք է վերաբերուել դէպի այդ դանդաղկոտութիւնը: Մէկ մասի կարծիքն է, զի սաւորապէս ռուսներին, որը վերջին ժամա-

նակներում լայն կերպով տարածուած է նաև անգլիացիների մէջ — «Անհրաժեշտ է ոչնչացնել Տաճկաստանի ինքնուրոյն գոյութիւնը»։ Նկատուած է, որ թուրքերն անվնաս են դառնում և նրանց քաղաքակրթութիւնն աւելի յաջող առաջ է գնում այն ժամանակ, երբ նրանք ընկնում են եւրոպական իշխանութեան ներքոյ։ Այսպէս Ռուսաստանում թուրքերի, թուրքմէնների և այլ ցեղերի մոլեռանդութիւնն զարգանալու տեղ չկայ։ Այս ժողովուրդն ինքն ըստ ինքեան զուրկ չէ համակրելի յատկութիւններից, չէ խմում չէ սիրում խարդախութիւն անել, ունի ֆիզիքական աշխատասիրութիւն, երբ որ նա թողնում է մոլեռանդութիւնը, նրա մէջ երևան են գալիս համակրելի յատկութիւններ։ Թուրքը վայելելով խաղաղ կեանք և Ռուսաստանի կուլտուրայի բարիքները՝ ապրում է շատ լաւ, քիչ առ քիչ համակերպւում է ռուսաց պետութեան հետ, և յաճախակի պատահում են, որ Ռուսաստանի թուրքերն ուխտագնացութեան գնալով Մէկկա, այնտեղ իրենց բարեկեցիկ դրութեամբ շարժում են ինքնուրոյն կեանք ունեցող հաւատակիցներին և ցեղակիցների նախանձը։ Որովհետև Ռուսաստանում առանց կրթական ցէնզի չէ կարելի պաշտօն ստանալ, ուստի և Ռուսաստանի մահմեդականներն ակամայից սովորում են ուսումնարան-

ներում և աւարտում համալսարան. ինչպէս որ ռուսները Պետրոս Մեծի ժամանակ սկզբում սովորում էին ակամայից և ստիպմամբ, բայց յետոյ վերջապէս քաղաքակրթութեցին և սովորեցին սիրել լուսաւորութիւնը, այդպէս և քաղաքակրթւում են և Ռուսաստանի մահմեդականները։ Օսմանեան Թուրքիայի ինքնուրոյն պետութեան մէջ այդ չկայ։ Մենք արդէն նրա պատկերը ներկայացրինք։ Քանի որ իշխանութիւնը կը գտնուի թուրք կառավարութեան և թուրք աստիճանաւորների ձեռքում, քանի որ թուրքն իւր պետութեան ինքնուրոյն գոյութեան մէջ իւր անտանելի անշարժութեան պաշտպանութիւնը կը գտնի՝ Թուրքիան իւր նախկին դրութեան մէջ կը մնայ և կը լինի յառաջադիմութեան խանգարիչ ոյժ։ Բայց որովհետև տաճիկ իսլամն ուղղակի կրօնական պարտականութիւն է համարում ատել օտարադաւաններին, ուստի Թուրքիայի ինքնուրոյն գոյութիւնը չարիքի աղբիւր է ներկայանում իրեն ստորադրեալ քրիստոնեաների համար։

Միւս կարծիքը ռուսատեացներինն է։ Այդ կարծիքի պաշտպաններն են Ռուսաստանի և սլաւոնականութեան թշնամիները, որոնք երկիւղ են կրում, թէ Թուրքիայի ընկնելովը մէջ տեղից կը վերանայ ռուսների և սլաւոնների կուլտուրայէս և քաղաքականապէս բարձրանալու արգելքը։

Թուրքիայի այդ բարեկամները, որոնց թուում և վամբերին, չհամարձակուելով բացասել Թուրքիայի դէպի իւրաքանչիւր բարեփոխութիւնն և ճշմարիտ լուսաւորութիւնն ունեցած յամառ թշնամութիւնը, խորհուրդ են տալիս Եւրոպային զինուել «մարդասիրական» համբերողութեամբ *): «Կարիք չկայ շտապելու, այլ կամաց կամաց, եւր եւ իցէ, մի քանի դարերից յետոյ **), վերջապէս Թուրքիան դադափարների նոր աշխարհը կը մտնի»: Ահա քեզ մարդասիրութեան տարօրինակ հասկացողութիւն: Մինչև որ Թուրքիայի նկատմամբ իբր թէ «մարդասիրական» փորձեր կը լինեն, Թուրքիան կը կոտորի քրիստոնեայ-արաբներին (Լիվանում), յոյներին (Կրէտէում, Թեսաղոնիկէում և այլն), հայերին (Հայաստանում, Ասորիքում և մինչև անգամ հէնց Պօլսում, Թուրքիայի այդ ամենալուսաւորուած քաղաքում): Մինչև որ Եւրոպան «մի քանի դարերի ընթացքում» «մարդասիրական» համբերողութեամբ կը սպասի Թուրքերի և նրանց կառավարութեան դադափարների նոր շրջան մտնելուն», միլիոնաւոր քրիստոնեաներ, մանաւանդ Ռուսստտանի ուղղափառ հաւատակիցներից, կը տան-

*) Vámbéry. Der Islam, էջ 305 և հետևեալները:

**) Նոյնը էջ 267:

ջուէն Թուրքիայի լծի տակ, զրկուած լուսաւորուելու հնարաւորութիւնից, զրկուած իրենց գոյքի, կեանքի և իրենց կանանց, քոյրերի ու աղջիկների պատուի ապահովութեան յոյսից: Ո՞րն է մարդասիրութիւնը, արդեօք այն, որ պաշտպանեն Թուրքական փտած կառավարութեան գոյութիւնը, և Թուրք ցեղի տիրապետութիւնը, այն ցեղի, որից եկած մնասը ներկայումս անվիճելի է, իսկ ապագայում սպասուող օգուտն էլ շատ ենթադրական, — թէ՞ այն, որ Թուրք ցեղի կործանիչ լծից ազատուեն արիւնով և հաւատով մեզ մօտիկ արիական ցեղերն, այլ և մահմեդական արաբ ցեղն, որոնց ընդունակութիւնն անտարակուսելի է և որոնք դեռ ևս կարող են իրենց առատ լուծման ձգել Եւրոպայի մտաւոր շտեմարանը:



Սոյն գրքի մասին պարբերական մամուլում չոյս տեսած մատենախօսական յորոշումները:

Ա.

Мусульманство и его будущее. А. Крымского. Изд. магазина „Книжное Дѣло“. М., 1899 г. Հատ բովանդակութեան յիշեալ գիրքը բաժանուած է երեք մասի: Սկզբում կենդանի, բայց թուղիկ կերպով ակնարկ է անում իսլամի պատմութեան և ծագման մասին: Յետոյ խօսում է նրա ժամանակակից դրութեան, Արևմուտքի ժողովրդների նրա վրայ ունեցած ազդեցութեան և դրա հետեանքների մասին, ի նկատի առնելով ցեղերի—ընդունակ արարների, պարսիկների և անչարժ թուրքերի տարրեր բնաւորութիւնը. ապա խօսում է մահմեդական ժողովրդների քաղաքական կազմութեան մասին, թագաւորների և նախարարների բարեփոխութիւնների, երկիրը կառավարելու և զօրքի մասին, վերջապէս ընտանեկան կազմութեան ազդեցութեան, ուսումնարանի դրութեան, կրթութեան և գրականութեան, արդիւնաբերութեան և վաճառականութեան մասին: Տաճկական կեանքի յիշեալ կէտերի նկատմամբ հեղինակը յաճախ անում է իւր անձնական դիտողութիւնները, իսկ այնտեղ, որտեղ նրա կարծիքը կարող է համարուել չափազանց յոռետես, նա իւր ասածները հաստատելու համար բերում է փաստեր, քաղելով թուրքասէրների աշխատանքները:

տութիւններէց, ամենից յաճախ յայտնի Հերմ. Վամբերից: Նրա ընդհանուր եզրակացութիւնն այն է, որ մահմեդական ժողովուրդներն այժմ ընկնում են, բայց ոչ կրօնական, այլ քաղաքական կողմից: Ընդհակառակն իսլամն արագ տարածւում է Ափրիկայում, Հնդկաստանում և Մալայեան Արշիպելագում, իսկ քրիստոնէութիւն ընդունողներ խիստ հազուադէպ են: Միեւնոյն ժամանակ նա (իսլամը) արգելք չէ լինում արաբների և պարսիկների յառաջադիմելուն, մինչև անգամ աւելի պակաս ընդունակութիւն ունեցող թուրքերը սկսում են քաղաքակրթութիւն, երբ կորցնում են իրենց ինքնուրոյնութիւնը, օրինակ եթէ ենթարկւում են Ռուսաստանի իշխանութեան, դրա համար և Տաճկաստանի գոյութիւնն անսպասան արգելք է լինում յառաջադիմութեան: Ընդհանրապէս գրքոյկը գրուած է շատ հետաքրքիր, կենդանի և խելացի կերպով: Ամենից կարեւորն այդ գրքի մէջ այն է, որ մատնացոյց է արուած ցեղական տարբերութիւնների նշանակութեան վրայ իսլամի ժողովրդների զարգացման նկատմամբ և քաղաքական անկման երևոյթը կրօնի տարածման պատճառով: Այդպիսի առանձին հետաքրքիր դիտողութիւններ և նկատողութիւններ շատ կան: Ափսոս, որ այդ գրքի տարածուելուն պէտք է խանդարի նրա թանգ գնահատութիւնը (75 կոպ. 120 երես):

«Русская мысль», 0դոստոս. 1899-

Բ.

Լազարեան ճեմարանում արաբերէն լեզու աւանդող պ. Կրիմսկի, որ երկու տարի ապրել է Բէյրութ-

թում, հրատարակել է մի աշխատութիւն, որի վերնագիրն է «Մահմեդականութիւն և նրա ապագան»: Այդպէս հեղինակը այն միտքն է յայտնում, որ մահմեդական արեւելքում կան ազգութիւններ, որոնք կարող են առաջադիմել, զարգանալ, դրանք պարսիկներն են, արաբները և հնդիկները: Իսկ թիւրքերը: Արաբը գեռ այն ժամանակ, երբ պատմութեան մէջ նոր էին հանդէս գալիս իբրև նուաճողներ, յայտնի էին իրենց բուրբ և նեղ խելքով, դէպի մտաւոր անշարժութիւնը ունեցած սխալութիւններով, կոյր պահպանողականութեամբ և ֆանատիկոսական ատելութեամբ դէպի ամեն մի բան, որ դուրս էր մահմեդականութիւնից: Պ. Կրիմսկի գտնում է, որ նոյն յատկութիւնները կան և այժման թիւրքերի մէջ և նրանք պիտի առաջադիմութեան խոչնդոտ հանդիսանան, քանի որ գոյութիւն կունենայ թիւրքական անկախ պետութիւն: Ռուսաստանները խորհուրդ են տալիս Եւրոպային թիւրքիայի վրայ նայել «մարդասէր» լինելու համբերութեամբ և սպասել, որ «երբ և իցէ, մի քանի դարերից յետոյ, թիւրքիան վերջապէս կը մտնի գաղափարների մի նոր աշխարհ»: Բայց այդ «մի քանի դարերի» ընթացքում միլիոնավոր քրիստոնեաներ կը տառապեն թիւրքաց լծի տակ, զրկւած կրթիւնի հնարաւորութիւնից, զրկւած իրենց գոյքի, իրանց անձի ապաւորութեան, իրանց կանանց, քոյրերի և աղջիկների հովութեան, իրանց կանանց, քոյրերի և աղջիկների պատի ապահովութեան յոյսից: Եւ հեղինակը հարցնում է. Ո՞րն է մարդասիրութիւնը, այն, որ պահպանուի փտած թիւրք պետութեան գոյութիւնը և թիւրք դեղի փերապետութիւնը—այն ցեղի, որից եկած շեքսը ներառի ապետութիւնը—այն ցեղի, որից եկած շեքսը կայուն անվիճելի է, իսկ ապագայում սպասվող օգուտը անթաղրական է—թէ այն, որ ազատվին թիւրք ցեղի

կորստաբեր լուծից արիւնով և հաւատով մեզ մօտիկ արիական ցեղերը, այլ և մահմեդական արաբ ցեղը, որոնց ընդունակութիւնը անկասկածելի է և որոնք դեռ կարող են իրանց առատ լուծման մտցնել Եւրոպայի մտաւոր շտեմարանը»:

Հարցը պարզ է և պատասխան գտնելու համար չը պէտք է սար ու ձոր ընկնել . . . :

«Մշակ» 1899 թ. № 3:

Գ.

Ռուս արեւելագէտներից մէկը, պ. Կրիմսկի, հրատարակել է «Մահմեդականութիւնը և նրա ապագան», անոնով մի գրքոյի, որի գէմ «Каспий» լրագիրը նորերումս աղանդաւորի խտութեամբ յարձակումներ գործեց, ծաղրելով հեղինակի տգիտութիւնը, անհասկացողութիւնը և այլն: Սակայն «ЖИЗНЬ» ամսագրի մէջ տըպւած մի մատենագրական յօդուածից իմանում ենք, որ Կրիմսկու «տգիտութիւնը» այնքան էլ մեծ չէ, ինչպէս կարծում են Բագուի լրագրում գրողները: Բանից դուրս է դալիս, որ պ. Կրիմսկի մեծ տարբերութիւն է գնում արաբական և պարսկական իսլամի ու թիւրք ցեղերի իսլամի մէջ:

Նա ասում է, որ իրանական և արաբական ցեղերը ունեն վերածնութեան բոլոր կարողութիւնները. նրանք կրօնների վերաբերմամբ շատ համբերող են և աւելի առողջ մտքի տէր են քան թիւրքերը, իսլամի այժմեան այդ պատուարները: Թիւրքի առանձնայատկութիւններն են — կոյր հաւատ, աններողամտութիւն,

կրօնական պահպանողականութիւն, ֆանատիկոսութիւն և ատելութիւն դէպի վերացական դատողութիւնները:

Թիւրք ասելով չը պէտք է հասկանալ միայն օսմանցիներին, այլ առհասարակ բոլոր թաթարական ցեղերը:

Օսմանեան թիւրքերը այս կողմից ներկայացնում են մի միջին դրութիւն ֆանատիկոս ուղղէկի և աւելի ներողամիտ պարսիկի կամ արաբի մէջ: Գտնվելով եւրօպական կուլտուրայի մօտիկ ազդեցութեան տակ, օսմանցիները այլ եւ այնքան ֆանատիկոս չեն, ինչպէս առաջ, թէև դարձեալ պակաս պահպանողական չեն մընացել հաւատի մէջ: Պ. Կրիմսկու կարծիքով, եթէ այժմեան օսմանցիները չեն ցանկանում առաջ շարժվել մտաւորի մէջ, բարենորոգութիւններ չեն կամենում, այդ բանը մեծ կախում ունի թիւրքիայի քաղաքական գոյութիւնից, որ պահպանվում է եւրօպական պետութիւնների ձեռքով, բայց զրկվելով քաղաքական ոյժից, թիւրքերը հեշտութեամբ կարող կը լինէին ազգերի կուլտուրական ընտանիքի մէջ մտնել:

Ռուս ամսագիրը պ. Կրիմսկու այս միտքը կատարելապէս արդարացի է համարում և օրինակ է բերում Նիվայի և Բուխարայի մահմեդականներին. դրանք քանի որ անկախութիւն ունէին, այնքան ֆանատիկոս և անհամբերող էին, որ չէին թոյլ տալիս եւրօպացուն մտնել իրանց երկիրը, բայց երբ կորցրին անկախութիւնը ուսուցանեց տիրապետութեան տակ, սկսեցին բարեփոխել իրանց բարքերը և նախկին ֆանատիկոսութեան հետքն անգամ չէ մնացել այնտեղ. ընդհակառակն սկսում են խաղաղ կերպով զարգանալ և սթափվել դարաւոր թմրութիւնից: Ել ուր մնաց պ. Կրիմսկու «տգիտութիւնը», որ

այնպէս հարուածում էր նախալին մայրաքաղաքի
լրագիրը:

«Մշակ» 1899 թ. № 68:

Պ. Կրիմսկու «Մահմեդական աշխարհն ու նրա ապագան» գրքի մասին գովասանական մատենախօսական յօդուածներ գրուած են նաեւ հետեւեալ պարբերական
բերքերում:

1. Սրարացոյ «Любнн» (Ливанъ), 1899, № 283, որտեղ մատենախօսը համաձայն է պ. Կրիմսկու այն կարծիքի հետ, թէ մահմեդական ազգերի դեպի յառաջագիմութիւնն ունեցած բնդունակութիւնն եւ կամ անբնդունակութիւնը կախում է նրանց ցեղական յատկութիւններից եւ ոչ թէ կրօնից:

2. «Записки Восточнаго Отдѣленія Императорскаго Петербургскаго Аухеологическаго Общества» 1899, т. XII. 1-ый вып. Авторъ рец. — приватъ доцентъ арабской литературы С. Пет. Университета А. Զ. Шмидтъ. էջ 23—26:

3. «Русскія Вѣдомости» 1899, № 3. Ընդարձակ գովասանական տեսութիւն ակադեմիկ Դ. И. Анучинъ-ի.

4. «Этнографическое Обзорѣніе» 1899, кн. 40—41, էջ 355—357:


5. «Жизнь» 1899, Ապրիլ ամիս:

6. «Кавказскій Вѣстникъ» 1900, Фետրուար. էջ 128—132:

ԿԱՐԵԻՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
1	13	Հէջազը	Հիճազը
4	5	յերից	յերիս
15	8	654	656
29	2	պարսաքարով	բալխտայով (քա- րածիգ մեքենայ)
29	15	պարսի մէջ	քարածիգ մեքենայի մէջ
58	17	Գերմ.	Հերմ.
63	1	Գիւլիսանեան խաթ- թի շերիֆ	Գիւլիսանէի Հաթթը Շերիֆ
72	19	աստիճանի	աստիճանի
87	8	կրթութիւն	կրթութիւնը
135	8	բանակում	դպրոցում
143	12	խալամը	խալամը
»	9	հէջերի	Հէճերի





Մեր հրատարակութեամբ լոյս են տեսել

1) Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ Գ. տպագրութիւն, 1896 թ. Վաղարշապատ . . . 2 ռ. —

2) Խաչատուր արեղայի Ջուղայեցւոյ «Պատմութիւն Պարսից» 1905 թ. Վաղարշապատ 1 ռ. 25 կ.

3) Ա. Կրիմսկի «Մահմեդական աշխարհն ու նրա ապագան» Թարգմանութիւն, 1906 թ. Վաղարշապատ. — 60 կ.

Դիմել՝ Тифлисъ, Центральная Бнижная Торговля.

> Книжн. маг. „Гуттенберг“.

С. Эчмиадзинъ, Типографическій Комитетъ.

Կամ Հրատարակչին С. Эчмиадзинъ, Архимандриту Бабкену.

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20 % զիջում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0173690

